Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.71
9-34

X

A 6882

Ա. ՉԵԽՈՎ.

ՏԱՂՏԿԱԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Ծերունու օրագրից.)

Թարգմանեց

Գ. Ա.

ԲԱՔՈՒ
Տպարան Ս. Անտոնեանցի.
1903

25 NOV 2010
891.71
Ջ-34
ստ
5 FEB 2004

Ա. ՉԵԽՈՎ.

ՏԱՂՏԿԱԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Ծերունու օրագրից.)

1002
Ֆ-416

Թարգմանեց

Գ. Ա.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՄԵՆՎԱՆ

ԲԱԿՈՒ
Տպարան Ս. Անտոնեանցի.
1903

12.7 13

Дзволено Цензурою. Тифлисъ, 22 Февраля 1903 г.

I.

Գաղտնի խորհրդական Նիկոլայ Ստեպանովիչը յայտնի պրոֆէսոր է Ռուսաստանում։ Իր երկարամեայ ծառայութեան համար, նա արժանացել է շատ շքանշանների Ռուս և օտարպետութիւններից։ Ամեն անգամ, երբ դէպք է լինում Նիկոլայ Ստեպանիչին կրել կրծքին այդ շքանշանները, ուսանողները նմանեցնում են նրան խաչկալի։ Նիկոլայ Ստեպանովիչի շրջանը զուտ արիստոկրատական է, գոնեայ վերջին 25—30 տարուայ ընթացքում Ռուսաստանի մէջ չէր գտնուի մի այնպիսի յայտնի գիտնական, որի հետ նա կապուած չլինէր սերտ բարեկամական կապերով։ Այժմ նա չունի և ոչ մի բարեկամ, իսկ անցեալում նա ունէր մի շարք հռչակաւոր բարեկամներ, ինչպէս՝ Պիրոգով, Կաւելին, բանաստեղծ Նեկրասով, որոնք տածում էին դէպի նա անկեղծ և ջերմ բարեկամութիւն։ Նիկոլայ Ստեպանովիչը այժմ անգամ է արտասահմանեան երեք և բոլոր Ռուսական համալսարանների. նրա անունը յայտնի է ամեն մի ռուս դրագէտ մարդու, արտասահմանում էլ յիշւում է այդ անունը մի առանձին յարգանքով։

Ես, որ պատկերացնում եմ վերոյիշեալ անձնաւորութիւնը, պատկանում եմ այն սակաւաթիւ բախտաւորների թուին, որոնց

չի կարելի հայհոյել, կամ անտեղի յիշել հասարակութեան ու մամուլի մէջ։ Եւ այդպէս էլ պէտք է լինի. չէ՞ որ իմ անուան հետ սերտ կապուած է յայտնի, օժտուած և անպայման օգտակար մարդու գաղափարը։ Ես աշխատասէր եմ, ինչպէս ուզտ՝ համբերատար և որ ամենագլխաւորն է՝ տաղանդաւոր. միևնոյն ժամանակ ես դաստիարակուած եմ, համեստ եմ ու ազնիւ։ Երբէք քիթս չեմ կոխել գրականութեան և քաղաքականութեան մէջ, հետամուտ չեմ եղել ժողովրդականութիւն ձեռք բերելու տգէտների հետ գրական վիճաբանութեան բռնուելով, չեմ արտասանել ճառեր ոչ ճաշերի ժամանակ և ոչ էլ ընկերներիս դպաղների առաջ... Ընդհանրապէս իմ գիտական անուան վրայ չկայ ոչ մի բիծ և ես դանդատուելու չունիմ և ոչ մի տեղիք։

Այդ անունը կրող անձնաւորութիւնը՝ այսինքն ես, 62 տարեկան մի մարդ եմ, ճաղատ գլխով, արհեստական ատամներով և անբուժելի tic-ով։ Որքան որ վայրէն է անունս և հռչակուած, նոյնքան ֆիզիկապէս անճոռնի եմ ու տգեղ։ Գլուխս ժաժ է գալիս, ձեռքերս դողդողում են թուլութիւնից. պարանոցս՝ ինչպէս Տուրգենևի հերոսուհիներից մէկինը, նման է նուագարանի երեխակալի. մէջքս նեղ է, կուրծքս ներս ընկած։ Երբ ես խօսում եմ կամ կարդում, բերանս մի կողմ է ծռւում, իսկ երբ ծիծաղում եմ, այն ժամանակ ամբողջ դէմքս ծածկւում է ծերութեան մեռելային կնճիռներով։ Ոչինչ ազդեցիկ, ներշնչող բան չկայ իմ ողորմելի դէմքի վրայ, միայն, երբ տկար եմ լինում tic-ով, դէմքս փոխւում է և ընդունում մի այնպիսի արտայայտութիւն, որ կարծես դիմացինին ներշնչում է այն սառն միտքը՝ «թէ այս մարդը, հաւանականաբար, շուտով կը մեռնի»։ Ես այժմս էլ առաջուայ պէս լաւ եմ դասախօսում. կարողանում եմ ամբողջ երկու ժամ լարած պահել ունկնդիրներիս ուշադրութիւնը։ Չայնս թէև անախորժ է և ծակող, բայց իմ բուռն եռանդը, վերլուծական ընդունակութիւնը և հիմորը համարեա աննկատելի են դարձնում այդ

պակասութիւնները։ Գրում եմ սակայն վատ։ Ուղեղիս այն մասը, որ կառավարում է գրելու ընդունակութիւնը, այժմ հրաժարւում է ինձ ծառայելուց։ Ցիշողութիւնս թուլացել է, մտքերիս մէջ չկայ հետևողականութիւն, և ամեն անգամ, երբ նրանց արտայայտում եմ թղթի վերայ, ինձ թւում է, թէ կորցրել եմ օրգանական կապակցութեան բնազդը։ Նախադասութիւնները դուրս են գալիս միակերպ և բառերով աղքատ։ Ցաճախ այն չեմ գրում, ինչ որ ցանկանում եմ։ Երբ գրում եմ վերջաւորութիւնը, արդէն մոռացած եմ լինում սկիզբը։ Շատ անգամ ես մոռանում եմ սովորական բառերն անգամ, և միշտ ահագին ջանք եմ գործ դնում, որպէս զի խուսափեմ աւելորդ խօսքերից և անտեղի միջանկեալ նախադասութիւններից։ Այս բոլորը պարզ վկայում են մտաւոր այժերիս անկումը։ Եւ զարմանալին այն է, որ որքան հասարակ է նամակը, այնքան տանջելու չափ ստիպուած եմ լինում լարել միտքս։ Որև է գիտական յօդուած պատրաստելիս, ես ինձ աւելի ազատ եմ զգում և խելացի, քան շնորհաւորական նամակներ և տոմսակներ գրելու ժամանակ։ Մի բան ես, որ գրել գերմաներէն կամ անգլիերէն ինձ համար աւելի հեշտ է, քան ռուսերէն։

Ներկայումս իմ կեանքի աչքի ընկնող երևոյթը՝ անքնութիւնն է, որ, կարելի է ասել, կազմում է այժմ իմ գոյութեան գլխաւոր և հիմնական գիծը։ Ինչպէս առաջ, նոյնպէս և այժմ, սովորութեանս համաձայն, ես ուշիկ կէս գիշերին շորտան եմ լինում և պառկում անկողնում։ Գառկելուց յետ, շուտով քունս տանում է, բայց երկրորդ ժամին ես արդէն արթուն եմ՝ թւում է ինձ, թէ բոլորովին չեմ քնել. ստիպուած վեր եմ կենում եւ վառում լամպը։ Ապա սկսում եմ մի, երկու ժամ քայլել սենեակում մէկ անկիւնից դէպի միւսը, աչքի անցկացնելով վաղուց ծանօթ պատկերներն ու լուսանկարները։ Երբ ինձ ձանձրացնում է քայլելը, ես նստում եմ գրասեղանիս առաջ եւ ըստ սովորութեան ընդունում անշարժ դիրք. այդպիսի րոպէներում ես ոչնչով չեմ հետաքրքրւում և ոչ մի ցանկու-

թիւն չունիմ։ Եթէ առաջս դրուած է գիրք, ես մեքենաբար բաց եմ անում և կարդում առանց որ և է հետաքրքրութեան. այդպէս, մօտ օրերս, մի գիշերուայ մէջ ես մեքենաբար կարդացի մի ամբողջ վէպ հետեւեալ օտարոտի վերնագրով. «Ինչի մասին էր երգում ծիծեռնակը»։ Երբեմն էլ ուշադրութիւնս գրաւեցնելու համար, սկսում եմ համարել մինչև հազարը, կամ աչքիս առաջ պատկերացնում եմ ընկերներիցս որ և է մէկին և աշխատում եմ մտաբերել՝ թէ որ թուականին և ինչպիսի հանգամանքներում մտել է նա ծառայութեան։ Գիշերային լռութեան սիրում եմ ականջ դնել ամեն մի ձայնի. մերթ ինձանից երկու սենեակ այն կողմ գառանցանքի մէջ արագ-արագ ինչ որ բան է խօսում Լիզան՝ իմ աղջիկը, կամ կինս մոմը ձեռին անցնում է դահլիճով և անպատճառ վայր է ձգում լուցկին. երբեմն ճռռնչում է բաց պահարանի դռնակը, կամ անսպասելի կերպով վեր վայր է անում լամպի պատրոյգը։ Եւ այս բոլոր ձայները ինչ որ պատճառով յուզում են ինձ։

Գիշերները չքնել, նշանակում է ամեն բոպէ զգալ ինքդ քեզ անբնական դրութեան մէջ, ահա թէ ինչու անհամբերութեամբ սպասում եմ լուսանալուն։ Անցնում են շատ տաժանելի բոպէներ, մինչև որ բագումը սկսում է կանչել աքաղաղը։ Դա իմ առաջին աւետաբերն է։ Հէնց նա սկսում է կանչել, ինձ արդէն յայտնի է լինում, որ մի ժամից յետոյ ներքևում կը զարթնի դռնապանը և հաղալով կըբարձրանայ վերև.... Ապա խաւարը սկսում է փոքր առ փոքր դալկանալ, և փողոցից լսելի են լինում ձայներ...

Փոքր ինչ անց ներս է մտնում կինս տարածելով իր հետ օդեկոլոնի քաղցր բուրմունքը. նրա հաղին սովորաբար լինում է միմիայն մի շրջազգեստ, մազերը խճճուած են լինում, բայց երեսը արդէն խնամքով լուացած։

— Ներողութիւն, ես մի բոպէով միայն... Դու դարձեալ չես քնել։

Յետոյ նա հանգցնում է լամպը, նստում սեղանի մօտ և սկսում է խօսել։ Թէև ես մարդաբէ չեմ, բայց վաղօրօք գիտեմ, թէ ինչի մասին կը լինի խօսքը։ Ամենայն առաւօտ միևնոյն բանն է կրկնւում։ Սովորաբար կինս նախ առանձին հոգատարութեամբ տեղեկանում է առողջութեանս մասին և յետոյ խօսք է բաց անում Վարշաւայում ծառայող մեր օֆիցեր որդու մասին։ Իւրաքանչիւր ամիս մենք ուղարկում ենք նորան 50 ռուբլի։ Ահա այդ է լինում գլխաւորապէս և մեր խօսակցութեան առարկան։

— Իհարկէ, մեզ համար ծանր է այդ,—ախ քաշելով ասում է կինս,—բայց, ինչ արած, քանի որ մեր որդին վերջնականապէս դեռ հաստատ հողի վրայ չի կարնել, մենք պարտաւոր ենք օգնել նրան. չէ՞ որ նա դեռ անփորձ է, գտնւում է օտարութեան մէջ և ստանում է չնչին ռոճիկ... Բայց և այնպէս, եթէ ցանկանում ես, առաջիկայ ամիսը ուղարկենք քառասուն ռուբլի։ Ի՞նչ ես կարծում։

Ամենօրեայ փորձը կարող էր կնոջս համոզել, որ խօսելով ծախսերը չեն քչանում, սակայն կինս այնպիսի անձնաւորութիւններից է, որոնց համար փորձը գոյութիւն չունի։ Իւրաքանչիւր առաւօտ նա ամենայն ճշտապահութեամբ խօսք է բաց անում մեր օֆիցեր որդու վերայ և այն մասին, թէ հացը, փառք Աստուծու, էժանացել է, իսկ շաքարը՝ թանկացել երկու կոպէկով. և այս բոլորը մի այնպիսի ձևով, որ կարծես նորութիւն է հաղորդում ինձ։

Ես լսում եմ և մեքենաբար հաւանութիւն տալիս։ Օտարոտի և անտեղի մտքերը, երևի անքնութիւնից, շրջապատում են ուղեղս։ Ես նայում եմ կնոջս և ինչպէս երեխայ զարմանում։ Ինքս ինձ տարակուսանքով հարց եմ տալիս. մի՞թէ այս պառաւ, չափազանց դէր ու աճառնի կինը, իր բութ արտայայտութեամբ, այն նրբակազմ Վարիան է, որին ես ջերմ կերպով սիրեցի պայծառ մտքի, մաքուր հոգու ու գեղեցկութեան համար, և որը մի ժամանակ ծնաւ ինձ որդի։ Սիրում էի նրան

Նոյնպէս դէպի իմ մանուզիտութիւնը տածած համակրանքի համար, ինչպէս Օթելլոն սիրում էր Դեզդեմոնային։ Այժմ նրա բուռ հայեացքը կրում է անվերջ հոգացողութեան կնիք, արտայայտում է երկիւղ մի կտոր հացի համար. ուղեղը մշտապէս զբաղուած է պարտքի և կարիքների մասին մտածելով։ Այժմ նրա խօսակցութեան առարկան միմիայն ծախսերն են։

Լարուած ուշադրութեամբ նայում եմ անճոռնի պառաւի դէմքին և որոնում նրա մէջ իմ նախկին Վարիային։ Ամբողջ անցեալից նրա մէջ պահպանուել է միայն դէպի իմ առողջութիւնս ունեցած հոգացողութիւնը, և մի քանի ձևեր, ինչպէս իմ ռոճիկը անուանել մեր ռոճիկը, գտակս՝ մեր գտակը։ Շատ անգամ կնոջս այդ բուռ արտայայտութիւնը յարուցանում է իմ մէջ ցաւակցութիւն դէպի նա, և որպէս զի գէթ մի փոքր մխիթարած լինիմ նրան, թոյլ եմ տալիս խօսել, ինչ որ ցանկանում է, և մինչև անգամ լռում եմ, երբ անարդար է խօսում մարդկանց մասին, կամ յանդիմանում է ինձ, որ ես դասագրքեր չեմ հրատարակում և մանաւոր հիւանդների չեմ ընդունում։

Մեր խօսակցութիւնը միշտ վերջանում է միակերպ։ Կինս յանկարծ յիշում է, որ ես դեռ թէյ չեմ խմել, և իսկոյն վեր է թռչում։

— Ինչու՞ եմ նստել. թէյը վաղուց պատրաստ է, իսկ ես այստեղ շատախօսութիւն եմ անում։ Ի՞նչպէս յիշողութիւնս թուլացել է, Աստուած։

Եւ նա արագութեամբ շարժւում է դէպի դուռը ու կանգ առնում դռան մօտ։

— Գիտես, որ Եգորին պարտ ենք հինգ ամսուայ ռոճիկ. մի քանի անգամ ասել եմ, որ չպէտք է ուշացնել ծառայի վարձը։ Աւելի հեշտ է ամիսը տասը ռուբլի տալը, քան հինգ ամսուանը միանուագ՝ յիսուն ռուբլի։

Եւ նա դուրս է գալիս և կրկին կանգնում։

— Ոչ որի այնքան չեմ ցաւում, որքան մեր Լիզային, ասում է նա։ Խեղճ աղջիկը, չնայելով որ սովորում է կոնսերուատորիայում և մշտապէս յարաբերութեան մէջ է բարձր շրջանների հետ, բայց Աստուած գիտէ, թէ ինչպէս վատ է հագնուած։ Մի այնպիսի ձմերային վերնազգեստ է հագին, որով նոյն իսկ փողոց դուրս գալը ամօթ է։ Եթէ նա լինէր մի հասարակ մարդու աղջիկ, այդ դեռ ոչինչ, բայց չէ՞ որ ամենքն էլ գիտեն, նրա հայրը յայտնի պրոֆէսոր է և գաղտնի խորհրդական։

Եւ այդպէս յանդիմանելով ինձ, նա վերջապէս գնում է։ Ահա այսպէս է սկսւում օրս և նոյնպէս էլ շարունակւում։

Թէյի ժամանակ ներս է մտնում Լիզան արդէն բոլորովին պատրաստ կոնսերուատորիա գնալու համար։ Նա այժմ 22 տարեկան է, թէև դէմքով աւելի փոքրի տպաւորութիւն է թողնում. նա բաւականին գուրեկան է, և իր դիմագծերով յիշեցնում է ինձ կնոջս երիտասարդ ժամանակը։ Լիզան փաղաքշաբար համբուրում է ինձ և ասում.

— Բարև, հայրիկ, արդեօք առողջ ես։

Երեխայ ժամանակ Լիզան շատ էր սիրում պաղպաղակ. այս իսկ պատճառով ես յաճախ ստիպուած էի լինում տանել նրան քաղցրաւէնիք վաճառողների մօտ. պաղպաղակը Լիզայի համար ամենալաւ բանն էր աշխարհումս, և եթէ նա ցանկանում էր գովել ինձ, սովորաբար անուանում էր ինձ իր սիրելի քաղցրաւէնիների անուններով։ Առաւօտները, երբ Լիզան գալիս էր ինձ մօտ, ես նստացնում էի նրան ծնկներիս վերայ և, համբուրելով նրա մատիկները, կրկնում էի իր սիրելի խօսքերը։

Այժմ էլ՝ հին սովորութեանս համաձայն՝ ես համբուրում եմ Լիզայի մատները և քթի տակ մրմնջում սովորական խօսքերը։ Բայց հիմայ բոլորովին այն չէ դուրս գալիս։ Ես այժմ սառն եմ, ինչպէս պաղպաղակ, և ինքս ինձ ամաչում եմ այդ խօսքերն արտասանելուց։ Երբ նա շրթունքներով մօտենում է քունքերիս, ես ցնցւում եմ, ինչպէս մեղրաճանճի կծածից, ու աշխատելով ժպտալ՝ յետ եմ դարձնում դէմքս։ Այն ժամանակից, ինչ ես տանջւում եմ անքնութեամբ, ուղեղիս մէջ մեխի

պէս ցցուել է այն հարցը, թէ ինչու իմ աղջիկը, որ յաճախ տեսնում է, թէ ինչպէս ես՝ ծերունի և հուշակաւոր մարդս տանջուելու չափ կարմրատակում եմ այն բանի համար, որ պարտ եմ սպասաւորին, և կամ յաճախ, թողած պարապմունքս, ժամերով մտն եմ դալիս սենեակում մի անկիւնից դէպի միւսը ու շարունակ մտածում մանր մունր պարտքերի մասին, ինչու այդ աղջիկը մօրիցը ծածուկ չի մօտենում ինձ և կամացուկ ականջիս չշնչում. «Հայրիկ, քեզ փող է հարկաւոր. ահա առ ժամացոյցս, ապարանջանները, գինտերս և շորերս ու դրաւ դիր.» Ինչու նա, տեսնելով, թէ ինչպէս ես և իր մայրը կեղծ անձնասիրութիւնից դրդուած աշխատում ենք ծածկել մեր աղքատութիւնը, չի հրաժարւում երաժշտութիւն սովորելու հաճոյքից։ Ես չէի ընդունի նրա ոչ ժամացոյցը, ոչ ապարանջանները և ոչ մի զոհաբերութիւնը, Աստուած ազատէ՝ ինձ այն չէ հարկաւոր։

Ի դէպս յիշեմ և Վարշաւայում ծառայող օֆիցեր որդուս։ Ճիշտ է, նա խելօք, ազնիւ և ժուժկալ մարդ է, բայց այդ դեռ բաւական չէ։ Ինձ թւում է, որ եթէ ունենայի ծերունի հայր և իմանայի, որ լինում են այնպիսի ծանր րոպէներ, երբ նա ամաչում է իր աղքատութիւնից, ես իսկոյն կը թողնէի իմ տեղը ուրիշին և կը դառնայի հասարակ բանուոր։ Սոյնանման մտքերը որդոցս մասին թունաւորում են կեանքս։ Ինչու են պէտք այդ մտածմունքները։ Զայրանալ սովորական մարդկանց դէմ այն պատճառով, որ նրանք հերոս չեն, կարող է միայն սահմանափակ և նեղսիրտ մարդը։ Բայց բաւական է այդ մասին։

Ժամը տասից քառորդ պակաս հարկաւոր է ուղղորդուել սիրելի մանուկների մօտ դասախօսութիւն կարդալու։ Ես հագնւում եմ և դուրս դալիս տանից։ Ճանապարհը, որտեղից ես անցնում եմ, ծանօթ է ինձ արդէն երեսուն տարի շարունակ։ Նա ունի ինձ համար իր առանձին պատմութիւնը։ Ահա մեծ, մոխրագոյն տունը, ուր է և դեղատունը։ Մի ժամանակ այդտեղ կար մի փոքրիկ դարեջրատուն։ Հէնց այդ դարեջրատանը

կազմում էի ես իմ դեսերտացիան, այդտեղ էլ և գրեցի առաջին սիրահարական նամակը Վարիային։ Գրում էի մատիտով, մի կտոր թղթի վերայ «historia morbi» վերնագրով։ Ահա և մրգավաճառի կրպակը. այդտեղ մի ժամանակ առուտուր էր անում մի հրէուհի, որ ինձ ապառիկ բաց էր թողնում ծխախոտ, յետոյ՝ նրան փոխարինեց մի հաստլիկ պառաւ կին. սա սիրում էր ուսանողներին հէնց այն պատճառով, որ նրանք ունէին մայրեր, իսկ այժմ նստած է այդտեղ չիկահեր վաճառականը՝ մի չափազանց սառնասիրտ մարդ, որ խմում է թէյ սովորաբար պղնձեայ թէյամանից։ Ահա և համալսարանի մռայլ ու վաղուց չնորոգուած դռները, ահա և դռնապանը քուրքը հագին, ձանձրոյթ արտայայտող երեսով. նրանից ոչ հեռու ձեան կոյտերի մօտ ընկած է աւելը։ Գաւառից նոր եկած մանկան վրայ, որ դեռ երևակայում է թէ գիտութեան տաճարը իսկապէս տաճար է, այդ դռները կարող են խիստ վատ տպաւորութիւն թողնել։ Ընդհանրապէս համալսարանի հին շինութիւնները, մռայլ միջանցքներն ու պատերը, լուսաւորութեան պակասութիւնը, սանդուղքների և նստարանների տխուր պատկերները՝ այս ամենը թողնում են մարդուս վրայ մի տեսակ ծանր և վհատեցնող տպաւորութիւն... Ահա և մեր այգին, որ կարծես միևնոյն է մնացել, ինչ որ էր ուսանող ժամանակս. նա ոչ լաւացել է և ոչ էլ վատացել։ Ես չեմ սիրում այդ այգին։ Աւելի խելացի կը լինէր, եթէ լորենիների տեղ աճէին այստեղ բարձր մայրիներ և հաստարմատ կաղնիներ։ Ուսանողի տրամադրութիւնը մեծ մասամբ ենթակայ է շրջապատող հանգամանքների. այդ իսկ պատճառով այնտեղ, ուր նա սովորում է, իւրաքանչիւր քայլափոխում, պէտք է հանդիպի միմիայն գեղեցկութիւն և վեհութիւն ներշնչող առարկաների... Նրա հայեացքից հեռու պէտք է լինին գեղեցկութիւնից զուրկ ծառեր, կոտրատուած լուսամուտներ, մռայլ պատեր և քրքրուած պատատներով դռներ։

Երբ ես մոտենում եմ պատշգամին, դուռը իսկոյն բացւում է և ինձ դիմաւորում է համալսարանի հին ծառայ և ինձ հասակակից շվեյցար Նիկոլայը։

— Սառնամանիք է, ձերդ գերազանցութիւն, ասում է նա դուռը յետ անելով։

Կամ երբ քուրքս թաց է լինում՝

— Անձրև է, ձերդ գերազանցութիւն։

Ապա Նիկոլայը շտապ-շտապ գնում է առաջից ու բաց անում բոլոր դռները, ուր և ես մտնում եմ։ Առանձնասենեակում նա զգուշութեամբ հանում է քուրքս և միևնոյն ժամանակ հաղորդում որ և է համալսարանական նորութիւն։ Չնորհիւ մոտ ծանօթութեան համալսարանի բոլոր շվեյցարների ու այլ ծառաների հետ, Նիկոլային յաջողւում է իսկոյն և եթ իմանալ այն բոլորը, ինչ որ պատահում է մասնաճիւղերում, դիւանատանը, վերատեսչի առանձնասենեակում, մատենադարանում, և այլն։ Եւ ինչ ասես, որ նա չգիտէ։ Երբ մեզանում օրուայ խօսակցութեան նիւթ է դառնում վերատեսչի հրաժարուիլը, յաճախ լսում եմ, թէ ինչպէս նա խօսելով աւելի երիտասարդ ծառաների հետ, թւում է նրանց առաջ թեկնածուների անունները և իսկոյն աւելացնում, թէ այս ինչին լուսաւորութեան նախարարը չի հաստատի, այն մէկը ինքը կը հրաժարուի։ Յետոյ Նիկոլայը ընկնում է երևակայական մանրամասութիւնների մէջ, խօսում է ինչ որ դաղտնի թղթերի մասին, որ իբր թէ ստացուել են դիւանատանը. յիշում է հողարարձուի և լուսաւորութեան նախարարի մէջ որպէս թէ եղած դաղտնի խօսակցութիւնների մասին։ Եթէ մի կողմ թողնենք այդ մանրամասութիւնները, նրա ասածները ընդհանրապէս ճիշտ են դուրս գալիս։ Ճիշտ են լինում նոյնպէս նրա իր տեսակէտից արած բնութագրումները թեկնածուների նկատմամբ։ Երբ հարկ է լինում իմանալ, թէ որ թուականին այս ինչը պաշտպանեց դեսերտացիա, մտաւ ծառայութեան, հրաժարական տուեց և կամ մեռաւ, այն ժամանակ դիմեցէք Նիկոլային՝ այդ հասա-

բակ գինուորին, որի ահագին յիշողութիւնը կը թուէ ձեզ ոչ միայն տարին, ամիսն ու թիւը, այլ և կը հաղորդէ ձեզ շատ մանրամասութիւններ այս կամ այն դէպքին վերաբերեալ։ Այդպէս յիշել կարող է միայն նա՝ ով սիրում է։

Նիկոլայը մի տեսակ շտեմարան է համալսարանական աւանդութիւնների։ Իր նախորդ շվեյցարներից նա ժառանգել է համալսարանի կեանքին վերաբերեալ շատ առասպելներ, որոնց վրայ աւելացրել է և իր ծառայութեան ընթացքում ձեռք բերածները։ Իւրաքանչիւր ցանկացողին Նիկոլայը կարող է պատմել երկար ու կարճ պատմութիւններ։ Պատմում է անսովոր գիտունների մասին, որոնք իմանում են ամեն բան, ամբողջ շաբաթ չքնող աշխատասէրների և գիտութեան անթիւ մարտիրոսների ու զոհերի մասին։ Նրա հայեացքով բարին միշտ յաղթանակում է չարին, թոյլը՝ զօրեղին, իմաստունը՝ յիմարին, համեստը՝ հպարտին, երիտասարդը՝ ծերին... Հարկ չկայ ընդունել այդ բոլոր առասպելները, որպէս ճշմարտութիւն, քանի որ նրանց մէջ կան անկասկած աւելորդ չափազանցութիւններ. բայց եթէ մի կողմ թողնենք այդ բոլոր չափազանցութիւնները, այն ժամանակ մեր առաջ կը պատկերանայ իսկական հերոսների մի երկար շարք։

Հին գիտունների անսովոր ցրուածութեան մասին մեր հասարակութեան մէջ տարածուած են մի քանի անեկդոտներ, որոնցով և այդ հասարակութիւնը ճանաչում է նրանց։ Գոյութիւն ունին այլ և երկու-երեք սրամիտ, հակիրճ պատմուածքներ, որ վերագրում են երբեմն Գրուբերին, երբեմն ինձ և երբեմն էլ Բաբուխինին։ Գրքուած հասարակութեան համար դա քիչ է։ Եթէ այդ հասարակութիւնը սիրէր գիտութիւնը, ուսումնականներին և ուսանողներին այնպէս, ինչպէս սիրում է Նիկոլայը, այն ժամանակ նրա գրականութիւնը վաղուց կունենար ամբողջ գիւցազներգութիւններ, որոյիսին դժբախտաբար չունի այժմ։

Ինձ նորութիւն հաղորդելիս Նիկոլայը ընդունում է լուրջ դէմք և մեր մէջ սկսւում է լուրջ խօսակցութիւն։ Եթէ որ և է

կողմնակի անձնաւորութիւն այդ ժամանակ լսելու լինէր, թէ ինչպէս Նիկոլայը ազատ կերպով խօսում է՝ անշուշտ կը կարծէր, որ դա մի ուսումնական է կերպարանափոխուած գինուորի։ Պէտք է ասած, որ համալսարանի ծառաների ուսումնականութեան մասին տարածուած լուրերը սաստիկ չափազանցրած են։ Ճշմարիտ է՝ Նիկոլայը գիտէ հարիւրից աւելի լատինական բառեր, կարող է դասաւորել կմախքի ոսկորները, ծիծաղեցնել ուսանողներին արտասանելով կտորներ այս կամ այն հեղինակի գրուածներից, բայց մի այնպիսի ոչ խրթին թէօրեա, ինչպէս արեան շրջանառութիւնը, այժմ էլ Նիկոլայի համար այնքան մութն է, որքան և քսան տարի սրանից առաջ։

Առանձնասենեակում սեղանի առաջ, կոր կռացած գրքի վրայ, նստած է լինում անդամահար Պեսոր Իգնատեիչը։ Սա մի աշխատասէր, համեստ, բայց անտաղանդ մարդ է, հասակով 35 տարեկան, ճաղատ գլխով և մեծ փորով։ Աշխատում է նա առաւօտից մինչև գիշեր, կարդում է շատ, լաւ յիշում է բոլոր կարդացածը՝ և այդ կողմից նա ոչ թէ մարդ է, այլ ոսկի, իսկ այլ կողմերով նա նման է մի բեռնակիր ձիու, կամ ինչպէս ուրիշ կերպ ասում են, թանձրամիտ գիտնականի։ Բնորոշող գիծը, որով նա զանազանւում է տաղանդից, հետևեալն է՝ նեղ աշխարհայեացք և խիստ սահմանափակումն իր մասնագիտութեան մէջ. դրանից դուրս՝ այնպիսին միամիտ է լինում, ինչպէս երեխայ։ Մտաբերում եմ, թէ ինչպէս մի առաւօտ ես մտայ առանձնասենեակս և ասացի.

— Երևակայէք թէ ինչպիսի դժբախտութիւն է պատահել, ասում են, որ Սկոբելևը մեռել է։

Նիկոլայը երկիւղածութեամբ խաչակնքեց, իսկ Պեսոր Իգնատեիչը դառնալով դէպի ինձ հարցրեց.

— Ի՞նչ Սկոբելև։

Մի ուրիշ անգամ, որ այդ դէպքից աւելի առաջ էր, ես յայտնեցի, որ մեռել է պրոֆէսոր Պետրովը։ Մեր պատուելի, սիրելի Պեսոր Իգնատեիչը հարցրեց.

— Իսկ ինչ էր նա կարդում։

Թէկուզ երբ ասա հէնց ականջի տակին, թէկուզ Ռուսաստանի վրայ յարձակուին Չինացիների ամբողջ զօրախմբեր, կամ թէ պատահի երկրաշարժ, նա մի փոքր անգամ էլ չի շարժուի տեղից ու հանդարտութեամբ կը շարունակէ նայել պլշած աչքով խոշորացոյցի մէջ։ Մի խօսքով մասնագիտութիւնից դուրս Պեսոր Իգնատեիչի համար գոյութիւն չունի և ոչ մի բան, որ կարողանար շարժել նրա հետաքրքրութիւնը։

Մի ուրիշ բնորոշ յատկութիւն ևս ունի Պեսոր Իգնատեիչը. այդ է՝ նրա կոյր հաւատը դէպի գիտութեան անսխալականութիւնը, մանաւանդ դէպի այն բոլորը, ինչ որ դուրս են գալիս գերմանացիների գրչի տակից։ Նա խոր հաւատացած է իր ոյժերի վերայ, ճանաչում է կեանքի նպատակը և բոլորովին ազատ է հիասթափութիւններից և երկբայութիւններից, որոնցից յաճախ վաղաժամ ծերանում են տաղանդները։ Նրա մէջ աչքի է ընկնում կոյր երկրպագութիւն հեղինակութիւնների առաջ և ինքնուրոյն մտածողութեան բացակայութիւն։ Համոզել նրան որ և է բանում դժուար է, իսկ վիճել անկարելի։ Համեցէք վիճել մի մարդու հետ, որը խոր համոզուած է, թէ ամենալաւ գիտութիւնը բժշկականութիւնն է, ամենալաւ մարդիկ՝ բժիշկները, իսկ ամենալաւ տրադիցիաները բժշկականութեան վերաբերեալներն են։ Այդ տրադիցիաներից ներկայումս մնացել է միայն սպիտակ փողպատ գործածելը, որ կրում են բժշկները։ Ուսումնականի և ընդհանրապէս կրթուած մարդու համար կարող է գոյութիւն ունենալ միմիայն ընդհանուր համալսարանական տրադիցիաներ, առանց բաժանելու դրանց բժշկական, իրաւաբանական և այլ մասերի, բայց Պեսոր Իգնատեիչին դժուար է համոզել, և նա պատրաստ է վիճել ձեզ հետ ամբողջ օրերով։

Պեսոր Իգնատեիչի ապագան ինձ համար պարզ է։ Իր ամբողջ կեանքում նա կը գրէ շատ շոր, բայց վայելուչ զեկուցումներ, կանէ մի քանի բարեխիղճ թարգմանութիւններ,

բայց երբէք չի մտածի, օրինակ, հնարել վառօդ։ Վառօդ հնարելու համար հարկաւոր է երևակայութիւն, հնարագիտութիւն, գուշակելու ընդունակութիւն, որոնցից զուրկ է Պետեր Իգնատիչը։ Կարճ ասած գիտութեան մէջ նա կոյր բանուոր է, բայց ոչ ստեղծագործող։

Ես, Պետեր Իգնատիչը և Նիկալայը խօսում ենք կիսաձայն... Դուռն այն կողմից հանում են ականջիս ուսանողների խլացնող ձայները, որ նման են ազմկող ծովի ալիքներին։ Այդ խլացնող ձայները առաջացնում են իմ մէջ մի տեսակ զգացմունք, որին չկարողացայ ընտելանալ 30 տարուայ ընթացքում։ Ամենայն առաւօտ ես զգում եմ այդ. ես ջղաձգաբար պնդացնում եմ սիւրտուկիս կոճակները, Նիկալային աւելորդ հարցեր եմ տալիս, բարկանում եմ, թւում է թէ վախենում եմ, բայց դա իսկապէս երկիւղ չէ, այլ ինչ որ մի բան, որին ոչ կարող եմ անուն տալ և ոչ էլ նկարագրել։

Առանց որ և է կարիքի ես նայում եմ ժամացոյցին և ասում.

— Դէհ, հարկաւոր է գնալ։

Եւ մենք ընթանում ենք հետեւեալ կարգով. առջևից գնում է Նիկալայը քարտէզները և կամ ուրիշ պիտոյքները ձեռին, ապա՝ ես, իսկ իմ յետևից քայլում է բեռնակիր ձին, գլուխը համեստութեամբ կախ գցած։ Իմ երևալուն պէս ուսանողները ոտքի են կանգնում, ապա նստում, և ծովանման աղմուկը միանգամից հանդարտւում է։

Ես գիտեմ, թէ ինչ բանի մասին պէտք է կարդան, բայց չգիտեմ, որտեղից սկսել և ինչպէս վերջացնել։ Գլխումս չկայ ոչ մի պատրաստի նախադասութիւն։ Բայց բաւական է միայն մի հայեացք ձգեմ ուսանողների վրայ և արտասանեմ՝ «անցեալ դասախօսութեան մենք կանգ առանք...» խօսքերը, որ իսկոյն նախադասութիւնները երկայն վերելքի նման դուրս թռչեն իմ հոգուց։ Խօսում եմ ես չափազանց արագ։ Թւում է, թէ ոչ մի ոյժ չի կարող դադարեցնել իմ ճառի թելը։ Որպէս զի

Հ. Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Б. Б. Т.
7/XI—1922

1002
5716

կարգացածը օգտակար լինի ունկնդիրներիս համար և ձանձրոյթ չառաջացնէ, հարկաւոր է ոչ միայն ունենալ տաղանդ, այլ և հնարագիտութիւն և փորձառութիւն։ Պէտք է ճշգրիտ գաղափար ունենալ լսողների ու սեփական ոյժերի մասին և հիմնաւոր գիտենալ դասախօսութեան նիւթը։ Բացի դրանից հարկաւոր է խելքը զլխին մարդ լինել, լուրջ հետևել ճառի թելին և ոչ մի վայրկեան չկորցնել իրան։

Լաւ խմբապետը հաղորդելով երաժիշտ հեղինակի միտքը, միանգամից կատարում է քսան գործ՝ հետևում է երգեցողութեան ներդաշնակութեանը, փայտով նշաններ է տալիս, շարժումներ է գործում այս կամ այն կողմը և այլն։ Այդպէս եմ վարւում և ես, երբ դասախօսում եմ։ Իմ առաջ նստած են 150 մարդ, մէկը միւսից տարբեր, և երեք հարիւր աչքեր ուղիղ ինձ են նայում։ Իմ նպատակն է յաղթել այդ բազմագլխեան հիդրային։ Եթէ կարողանում եմ պարզ որոշել, թէ որ աստիճան ուշադիր է և ըմբռնում է ինձ այդ հիդրան, այն ժամանակ նա իմ իշխանութեան տակ է։ Երկրորդ հակառակորդս հէնց իմ մէջն է։ Այն է՝ զանազան ձևերի, երևոյթների և օրէնքների անվերջ փոփոխութիւնները, շաղկապուած անձնական և այլ մարդկանց մտքերի հետ։ Իւրաքանչիւր բոպէ ես պարտաւոր եմ այդ ահագին նիւթից ճարպիկութեամբ կորզել ամենագլխաւորն ու կարևորը, և որքան որ արագ է ընթանում ճառիս թելը, նոյնքան արագութեամբ պէտք է կարողանամ այդ մտքերը արտայայտել մի այնպիսի ձևով, որ դիւրըմբռնելի լինի հիդրայի հասկացողութեանը, և յարուցանէ ընդհանուր հետաքրքրութիւն։ Այս պատճառով պէտք է աչալուրջ հետևել, որ մտքերը անչափ չկուտակուին, այլ որոշ կարգով, որպիսին անհրաժեշտ կը լինի որ և է պատկեր ճշգրիտ ներկայացնելու համար։ Այնուհետև ես աշխատում եմ, որ իմ ճառը ունենայ գրական բնաւորութիւն, տերմինները լինեն կարճ և ճշգրիտ, նախադասութիւնները կարելոյն չափ պարզ և գեղեցիկ։ Ամեն բոպէ ես ստիպուած եմ ի նկատի

ունենալ, որ իմ տրամադրութեան տակ կայ ընդամենը մի ժամ քառասուն րոպէ։ Բոլոր այդ ժամանակամիջոցում ես ներկայացնում եմ ինձանից ուսումնական, մանկավարժ և ճարտասան։ Վայ, եթէ դրանցից որ և է մէկը յաղթահարէ միւսին։

Դասախօսում եմ քառորդ ժամ, կէս ժամ և ահա նկատում եմ, որ ուսանողները սկսում են ձանձրանալ. մէկը նայում է առաստաղին, միւսը Պեստր Իգնատիչին, երրորդը ձեռքը գրպանն է տանում թաշկինակը հանելու, իսկ չորրորդը աշխատում է աւելի յարմար նստել տեղում։ Մի ուրիշն էլ, իւր մտքերի հետ տարուած ժպտում է ինքն իրան... Այս բոլորը նշան են, որ ուշադրութիւնը սպառուած է և հարկաւոր է միջոցներ ձեռք առնել։ Հէնց առաջին յարմար առիթից օգտուելով ես ասում եմ որ և է ծիծաղաշարժ խօսք. բոլոր ունկնդիրներս, որոնց հետ և ես, սկսում ենք ծիծաղել. ուսանողների աչքերը ուրախ-ուրախ փայլում են և մի քանի րոպէ լսելի է լինում ծովանման խուլ մռնչիւնը։ Ուշադրութիւնը արդէն թարմացած է և ես կարող եմ շարունակել։

Ոչ մի զուարճութիւն և ոչ մի խաղ երբէք չէին պատճառում ինձ այն բաւականութիւնը, ինչ որ դասախօսութիւնների ընթերցումը։ Միմիայն դասախօսութեան ժամանակ ես կարողանում էի ամբողջապէս անձնատուր լինել կրքերիս և ըմբռնել, որ բանաստեղծների ոգեւորութիւնը լոկ դատարկ երևակայութիւն չէ, այլ իսկապէս իրականութիւն։ Գուցէ Հերկուլէսը, իւր որ և է գիւցազնական բաջագործութիւնից յետոյ, չէ զգացել այնպիսի մի քաղցր հոգեկան բաւականութիւն, որպիսին ես զգում էի իւրաքանչիւր դասախօսութիւնից յետոյ։

Այդ առաջ էր։ Այժմ դասախօսութիւնների ընթերցումը ինձ միմիայն տանջանք է պատճառում։ Զի անցնում և կէս ժամ և ես արդէն զգում եմ թուլութիւն ոտներիս ու թիկունքներիս մէջ. նստում եմ բազկաթոռում, բայց սովոր չեմ նստած կարդալ. մի րոպէից յետոյ դարձեալ կանգնում եմ ու շարու-

նակում կարդալ կանգնած դրութեամբ, յետոյ նորից նստում. քիրանս շուտ-շուտ չորանում է, ձայնս խզւում, գլուխս պտտւում... Դրութիւնս ունկնդիրներից ծածկելու համար երբեմն ջուր եմ խմում, երբեմն հազում. շատ անգամ էլ, հարբուխ ընկածի նման, շուտ-շուտ թաշկինակը դէպի քիթս եմ տանում, աննկարելի անեկդոտներ եմ ասում և վերջ ի վերջոյ ժամանակից վաղ յայտարարում եմ դասախօսութիւնը վերջացած։ Այդպիսի դէպքերում ես միշտ ամաչում եմ ինքս ինձանից։

Խիղճս և առողջ դատողութիւնը թելադրում են ինձ, որ ամենալաւ բանը, որ կարող եմ այժմ անել, այն է՝ կարդալ ուսանողներին հրաժարական դասախօսութիւն, ասել վերջին փաղաքշական խօսքը, օրհնել նոցա և տեղի տալ մի մարդու, որ աւելի երիտասարդ է ինձանից և եռանդով։ Սակայն ես քաջութիւն չունիմ խղճիս համաձայն վարուելու, և թող Աստուած ինքը դատէ։

Դժբախտաբար ես ոչ փիլիսոփայ եմ և ոչ Աստուածաբան։ Ինձ շատ լաւ յայտնի է, որ կ'ապրեմ այլ ես ոչ աւել, քան կէս տարի։ Թւում է թէ ինձ այժմ աւելի պէտք է զբաղեցնէին հանդերձեալ կեանքի հարցերը, գերեզմանային տեսիլները, բայց չգիտեմ ինչու իմ հոգուն օտար են այդ բոլորը, թէև ուզեցս ընդունում է նրանց կարևորութիւնը։ Ինչպէս 20—30 տարի սրանից առաջ, այժմ էլ՝ մահուան նախագրունում, ինձ միմիայն հետաքրքրում է գիտութիւնը։ Վերջին շունչը փչելիս անգամ ես այնու ամենայնիւ կը հաւատամ, որ գիտութիւնը ամենակարևոր, գեղեցիկ և պիտանի բանն է մարդուս կեանքում. նա միշտ եղել է և կը լինի սիրոյ վսեմ արտայայտութիւնը, և նրանով միայն մարդս կը յաղթէ բնութեանը։ Զատ կարելի է, որ այդ հաւատը միակողմանի է և ճշմարտութիւնից զուրկ, բայց ես մեղաւոր չեմ. ընկճել իմ մէջ այդ համոզմունքը ես անկարող եմ։

Բայց բանը դրանում չէ։ Ես խնդրում եմ միայն ներողամիտ լինել դէպի իմ թուլութիւնը և հասկանալ, որ զրկել

մի մարդու ամբիոնից և աշակերտներից, որ աւելի հետաքրքրւում է ոտնաչարի ուղեղով, քան տիեզերքի վախճանով, այդ միևնոյն է, թէ ողջ-ողջ դնել նրան դագաղում, չսպասելով մահուանը։

Անքնութիւնից և լարուած մրցումից, որ հետևանք է հետզհետէ աճող թուլութեան, ինձ հետ պատահում է ինչ որ մի օտարոտի բան։ Դասախօսութեան կիսին կոկորդս ճնշւում է, աչքերս սկսում են քոր գալ և ես զգում եմ բուռն ցանկութիւն տարածել ձեռքերս առաջ և բարձր ձայնով գանգատուել, որ ինձ՝ նշանաւոր մարդուս, բաղդը դատապարտել է մահուան, որ մի որ և է կէս տարուց յետոյ, այստեղ՝ այս լսարանում իմ փոխարէն կը լինի ուրիշը։ Ես ցանկանում եմ աղաղակել, որ թունաւորուած եմ. ինչ որ նոր մտքեր, որ առաջ անծանօթ էին ինձ, թունաւորել են կեանքիս վերջին օրերը և շարունակում են խայթել ուղեղս, ինչպէս մասկիտներ։ Եւ այդ ժամանակ իմ դրութիւնը ներկայանում է ինձ այնքան ահռելի, որ ես ցանկանում եմ, որպէս զի իմ բոլոր ունկնդիրները սարսափով դուրս թռչէին տեղերից և յուսահատական աղաղակով դիմէին դէպի դուռը։

Հեշտ չէ անցկացնել այդպիսի բոպէներ։

II.

Դասախօսութիւնից յետոյ ես նստում եմ տանը և պարապում։ Կարդում եմ լրագիրներ, դեսերտացիաներ և կամ պատրաստւում եմ հետևեալ դասախօսութեան համար. երբեմն գրում եմ որ և է բան։ Բայց իմ պարապմունքը երկար չի տևում, որովհետև ստիպուած եմ լինում ընդունել այցելուների։

Ահա լսում է զանգակի ձայնը. ներս է մտնում ընկերս գոտակը ու ձեռնափայտը ձեռին և, մեկնելով դէպի ինձ այս կամ այն, ասում է.

— Մի բոպէ միայն, նստեցէք collega, երկու խօսք ունիմ ասելու։

Մենք անպայման աշխատում ենք իրար ցոյց տալ, որ չափազանց քաղաքավարի ենք և շատ ուրախ միմիանց տեսնելու։ Ես նստացնում եմ նրան բազկաթոռի մէջ, իսկ նա ինձ. միևնոյն ժամանակ մենք մատներով խաղում ենք միմեանց կոճակների հետ, թեթևակի ձեռքերս քսում իրար շորերի, և այն այնպիսի զգուշութեամբ, որ կարծես վախենալիս լինենք միմեանցից այրուելուց։ Երկուսս էլ ժպտում ենք, թէև չենք ասում և ոչ մի ծիծաղելու բան։ Մենք նստում ենք իրար մօտ և սկսում ենք խօսել կիսաձայն։ Որքան էլ որ մենք մօտ յարաբերութեան մէջ լինինք, այնու ամենայնիւ չենք կարող զարդարել մեր խօսքերը ամեն տեսակ չինական ոճերով, ինչպէս. «Դուք բարեհաճեցիք ճշմարիտը նկատել», կամ «ինչպէս ես պատիւ ունեցայ ձեզ ասելու» և այլն։ Չենք կարող և չծիծաղել, եթէ մեզանից մէկը որ և է սրախօսութիւն անի, թէև անյաջող։ Գործի մասին խօսելուց յետ ընկերս իսկոյն վեր է կենում և շարժելով գոտակը դէպի իմ կողմը, սկսում է մնաս բարև ասել։ Նորից սկսում ենք խաղալ իրար կոճակների հետ, ժպտալ։ Ուղեկցում եմ նրան մինչև միջանցքը. այստեղ ես օգնում եմ ընկերոջս հագնելու քուրքը, բայց նա ամեն կերպ հրաժարւում է այդ բարձր պատուից։ Յետոյ, երբ Եգորը բաց է անում դուռը, ընկերս հաւատացնում է, որ ես կը մրսեմ, իսկ ես ցոյց եմ տալիս, թէ պատրաստ եմ ուղեկցել նրան նոյն իսկ փողոց։ Վերջապէս երբ վերադառնում եմ առանձնասենեակս, իմ դէմքը դեռ շարունակում է ժպտալ երևի իներցիայի հիման վրայ։

Մի փոքր յետոյ լսում է զանգակի երկրորդ հնչիւնը։ Մէկը մտնում է միջանցքը, սկսում է դանդաղ կերպով հանել վերարկուն և միևնոյն ժամանակ հազում է։ Եգորը յայտնում է, որ եկողը ուսանող է, և ցանկանում է ինձ տեսնել։ Ես հրամայում եմ նրա հրաւիրել։ Փոքր ինչ յետոյ մտնում է սենեակս մի երիտասարդ հաճելի դէմքով։ Արդէն մի տարի է՝ ինչ որ մենք գտնւում ենք լարուած յարաբերութեան մէջ

քննութիւններին նա պատասխանում է շատ վատ, և ես նրան միշտ մէկ եմ դնում։ Այդպիսի ուսանողներ իւրաքանչիւր տարի ինձ մօտ լինում են մինչև եօթը հոգի. քննութիւններին ես նրանց կտրում եմ և կամ, ինչպէս ասում են իրանք ուսանողները, տապալում։ Նոքա, որոնք քննութիւններին կտրւում են անընդունակութեան և կամ հիւանդութեան պատճառով, սովորաբար համբերութեամբ տանում են իրանց խաչը և չեն արտայայտում իրանց անբաւականութիւնը. վիճում են և դալիս ինձ մօտ բնակարանս միայն սանդուխնիկները. քննութիւնները փչացնում են սրանց ախորժակը ամենայն ճշտապահութեամբ յաճախելու օպերա։ Առաջինների դրութեան մէջ մտնում եմ, իսկ միւսներին երբէք երես չեմ տալիս։

— Նստեցէք, ասում եմ ես հիւրին, ինչ ունիք ասելու։

— Ներեցէք, պրոֆէսոր, անհանգստութիւն պատճառելուս համար, սկսում է նա, մտիկ չտալով երեսիս.—ես չէի համարձակուի անհանգստացնել ձեզ եթէ որ չը.... Ես հինգ անգամ տուել եմ ձեզ մօտ քննութիւն և... և կտրուել։ Խնդրում եմ ձեզ, եղէք բարի նշանակելու ինձ բաւարար թուանշան, որովհետև...

Սովորաբար բոլոր ծոյլերը իրանց արդարացնելու համար միշտ միևնոյն պատճառաբանութիւններն են առաջ բերում՝ իբր թէ նրանք գեղեցիկ կերպով բռնել են քննութիւն բոլոր առարկաներից և կտրուել են միայն իմ առարկայից. և որ աւելի զարմանալին է, իմ առարկային նրանք վերաբերուել են միշտ ջանասիրութեամբ, գեղեցիկ կերպով գիտեն բոլորը և կտրուել են միայն մի ինչ որ անհասկանալի թիւրիմացութեան պատճառով։

— Ներեցէք, իմ բարեկամ, ասում եմ ես հիւրիս, ձեզ բաւարար թուանշան դնել չեմ կարող. գնացէք, էլի կարդացէք դասախօսութիւնները և ապա եկէք. այն ժամանակ կը տեսնենք։

Տիրում է մի բոպէ լռութիւն. ես ցանկութիւն եմ զգում տանջել ուսանողին նրա համար, որ նա աւելի է սիրում գարեջուրը և օպերան, քան թէ դիտութիւնը։

— Իմ կարծիքով, ասում եմ ես, ամենալաւ բանը, որ այժմ կարող էք անել դուք՝ այն է, որ բոլորովին թողնէք բժշկական մասնաճիւղը։ Եթէ այդ ընդունակութիւններով հանդերձ ձեզ չի յաջողւում քննութիւն բռնել, ուրեմն պարզ է, որ ձեր մէջ չկայ ոչ ցանկութիւն և ոչ էլ կոչում բժիշկ լինելու։

Սանդուխնիկի երեսի արտայայտութիւնը փոխւում է...

— Ներեցէք, պրոֆէսոր, քմծիծաղ տալով ասում է ուսանողը. բայց այդ կը լինէր իմ կողմից առնուազը տարօրինակ բան՝ սովորել հինգ տարի և յանկարծ... հեռանալ։

— Այո, աւելի լաւ է ի զուր կորցնել հինգ տարի, քան յետոյ ամբողջ կեանքում պարապել մի գործով, որ չէք սիրում։

Բայց խսկոյն խղճահարւում եմ և շտապում եմ աւելացնել.

— Յամենայն դէպս, ինչպէս գիտէք, կարդացէք մի փոքր ևս և եկէք։

— Ե՞րբ, խուլ կերպով հարցնում է ծոյլը։

— Երբ ցանկանում էք, թէկուզ վաղը։

Եւ նրա բարի աչքերում կարդում եմ. «Գալը կարելի է իհարկէ, բայց չէ որ, ծեր սատանայ, դարձեալ կը կտրես ինձ»։

— Իհարկէ, ասում եմ ես, եթէ տասնեհինգ անգամ էլ քննուիք ինձ մօտ, դուք դրանով աւելի ուսումնական չէք դառնալ. բայց դա կը կրթէ ձեր մէջ բնաւորութիւն. այդ ևս բաւական է։

Տիրում է լռութիւն։ Ես վեր եմ կենում և սպասում հիւրիս գնալուն, իսկ նա, աչքերը ձգած պատուհանին, ձեռքով շոյում է իր փոքրիկ միրուքը և մտածում։ Սկսում է ձանձրալի լինել։

Սանդուխնիկի ձայնը դուրեկան է, աչքերը խելացի և կենսուրախ, իսկ դէմքը բարեհոգի, բայց մի փոքր ուռած շատ գարեջուր գործածելուց և երկար պառկելուց. ըստ երևոյ-

թին նա կարող էր պատմել ինձ շատ հետաքրքիր բաներ օպերայից, իւր սիրահարական արկածներից, ընկերների կեանքից, բայց, դժբախտաբար, այդպիսի բաների մասին խօսելը ընդունուած չէ, թէև ես մեծ բաւականութեամբ կը լսէի։

— Պրոֆէսօր, տալիս եմ ձեզ ազնիւ խօսք, որ եթէ նշանակէք ինձ բաւարար թուանշան, ես...

Հէնց որ գործը հասնում է «ազնիւ խօսքի», ես թափ եմ տալիս ձեռքս և նստում։ Ուսանողը մի րոպէ ևս մտածում է և ապա տխրաձայն ասում.

— Այդ դէպքում մնաք բարև, ներեցէք։

— Գնաք բարև, իմ բարեկամ, բարի առողջութիւն։

Նա անհաստատ քայլերով դիմում է միջանցքը, ուր դանդաղ կերպով սկսում է հագնուիլ, ապա դուրս է գալիս փողոց և հաւականաբար դարձեալ երկար մտածում է, բայց ոչ մի հետևանքի չհանելով, նա իմ հացէին ուղղում է «ծեր սատանայ» բառերը և գնում մի յետ ընկած ճաշարան դարեջուր խմելու և ճաշելու, իսկ այնուհետև՝ տուն քնելու։ Հանգիստ ոսկրներիդ, ազնիւ մշակ։

Լսւում է զանգակի ձայնը երրորդ անգամ։ Ներս է մտնում մի երիտասարդ բժիշկ բոլորովին նոր սև համազգեստով, ոսկեայ, շրջանակներով ակնոցները աչքերին և անպատճառ սպիտակ փողպատով։ Ծանօթանում ենք։ Ես խնդրում եմ նստել և հարցնում, թէ արդեօք ինչ է ցանկանում։ Առանց որ և է յուզմունքի գիտութեան այդ մատաղ ներկայացուցիչը սկսում է պատմել ինձ, որ այս տարի յաջողութեամբ տուել է դոկտորանտի քննութիւն և այժմ միայն մնում է գրել դիսերտացիա. նա յայտնում է, որ ցանկութիւն ունի պարապել ինձ մօտ, իմ ղեկավարութեան ներքոյ և թէ ես շատ պարտաւորեցրած կը լինիմ նրան, տալով դիսերտացիայի համար որ և է նիւթ։

— Շատ ուրախ եմ լինել ձեզ օգտակար, բայց ասացէք խնդրեմ, ինչ է նշանակում դիսերտացիա։ Այդ անուան տակ

սովորաբար ընդունուած է հասկանալ մի այնպիսի շարադրութիւն, որ կազմում է ինքնուրոյն ստեղծագործութեան արդիւնք. այդպէս չէ։ Ուրիշի տուած տեմայի և ղեկավարութեան տակ գրածը անուանւում է այլ կերպ...

Դոկտորանտը լռում է, իսկ ես տաքանում եմ և տեղիցս վեր թռչում։

— Ի՞նչ է ամենքդ էլ գալիս էք ինձ մօտ, բղաւում եմ ես բարկացած։—Ինձ մօտ վաճառատուն չէ։ Ես տեմաներ չեմ ծախում։ Հազար ու մէկ անգամ խնդրում եմ ձեզ բոլորիդ թողնել ինձ հանգիստ։ Ներեցէք անբաղաքավարութեանս, բայց վերջապէս ձանձրացրիք ինձ։

Դոկտորանտը լռում է։ Նրա դէմքը, որ արտայայտում է խորին ակնածութիւն դէպի իմ հեղինակութիւնը, թեթև ինչ կարմրում է։ Աչքերի մէջ տեսնում եմ, որ նա ատում է թէ իմ ձայնը և թէ ողորմելի դէմքս։ Իմ բարկութեամբ և ջղային ցնցումներով ես ներկայանում եմ նրան, որպէս մի կատաղեալ հոէշ։

— Իմ մօտ վաճառատուն չէ, բարկանում եմ ես։—Եւ զարմանալի բան է. ինչու դուք չէք ուզում ինքնուրոյն լինել, ինչու ձեզ համար այդքան ատելի է ազատութիւնը։

Խօսում եմ ես անվերջ, իսկ նա շարունակ լռում է։

Բայց վերջ ի վերջոյ բարկութիւնս կամաց կամաց իջնում է։ Դոկտորանտը ստանում է ինձանից տեման, որ մի գրոշ չարժէ և գրում է իմ հսկողութեան տակ իր բոլորի համար էլ անօգուտ դիսերտացիան և ստանում իրան համար անպէտք գիտական տիտղոսը։

Զանգահարութիւնները կարող են հետևել միմեանց անվերջ։ Խփում է չորրորդ անգամ և ես լսում եմ ինձ ծանօթ ոտների ձայնը ու հանդերձի խշխշոցը։

Տասն և ութ տարի սրանից առաջ մեռաւ իմ բարեկամ ակնարուժը և թողեց իրանից յետոյ իր 7 տարեկան դուստր Կատիային և 60 հազար ռուբլի։ Կտակի մէջ բարեկամս նշանա-

կել էր ինձ խնամակալ։ Մինչև տասը տարեկան հասակը Կատիան ապրում էր իմ տանը. ապա մտաւ ինստիտուտ և այնուհետև միմիայն ամառուայ երեք ամիսները ապրում էր մեզ մօտ։ Ես ժամանակ չունէի զբաղուելու Կատիայի դաստիարակութեամբ, հետևում էի միմիայն երբեմնապէս, և ահա այս պատճառով էլ նրա մանկութեան մասին կարող եմ ասել միայն մի քանի խօսք։

Կատիայի բնաւորութեան ամենաաչքի ընկնող գիծը կազմում էր անսահման հաւատը, որ նա տածում էր դէպի իր շրջապատողները և այն բժիշկները, որոնց մօտ բժշկւում էր։ Այդ հաւատը մշտապէս գծագրուած էր նրա դէմքի վրայ։ Պատահում էր երբեմն, որ նա թուշը կապած նստած էր լինում առանձին և նայում էր ինչ որ բանի վրայ ուշադրութեամբ. ամենայն անգամ, երբ նա հետաքրքրութեամբ դիտում էր, թէ ինչպէս ես թերթում եմ գիրքը և կամ կինս պարապում է տնտեսութեամբ, թէ ինչպէս խոհարարուհին մաքրում է գետնախնձորը և կամ ինչպէս խաղում է շունը, նրա աչքերը միշտ անփոփոխ արտայայտում էին, որ ամեն բան, ինչ կատարւում է աշխարհիս վերայ, գեղեցիկ է և խելացի։ Նա շատ էր սիրում խօսել ինձ հետ, և հետաքրքրւում էր ամեն մի բանով։ Պատահում էր, որ սեղանի նստած ժամանակ տեղաւորւում էր նա իմ հանդէպ, հետևում էր շարժումներիս և տալիս զանազան հարցեր։ Նրան հետաքրքրում էր իմանալ, թէ ինչ եմ կարդում, ինչ եմ անում համալսարանում, արդեօք չեմ վախենում դիակներից և ինչ եմ անում ռոճիկս...

— Ուսանողները համալսարանում կռւում են, հարցնում էր նա։

— Կռւում են, սիրելիս։

— Իսկ դուք նրանց չոքացնում էք։

— Այո, չոքացնում եմ։

Եւ նրան ծիծաղելի էր թւում, որ ուսանողները կռւում են և ես նրանց չոքացնում եմ, և նա ծիծաղում էր։ Կատիան

մի համեստ, համբերող և բարի երեխայ էր։ Ցաճախ պատահում էր, որ խլում էին նրա ձեռքից որ և է բան, ի զուր տեղը պատժում էին և կամ բաւականութիւն չէին տալիս նրա հետաքրքրութեանը։ Այդպիսի դէպքերին նրա փոքրիկ դէմքը, իւր մշտական հաւատ ընծայող արտայայտութեամբ, ծածկւում էր թախիծով։ Ես չէի կարողանում պաշտպան հանդիսանալ նրան և միայն, երբ նկատում էի նրա դէմքի թախիծը, ցանկութիւն էի զգում կանչել մօտս, փայփայել նրան ինչպէս դայեակ ու ասել. «իմ սիրելի որբիկս»։

Յիշում եմ նոյպէս, որ նա սիրում էր լաւ հագնուել և դուխիներ սրսկել շորերին։ Այդ կողմից նա նմանում էր ինձ. ես ևս սիրում եմ զեղեցիկ հանդերձ և լաւ դուխիներ։

Ցաւում եմ, որ չեմ ունեցել ժամանակ և ցանկութիւն հետևելու, թէ ինչպէս է առաջ եկել ու զարգացել Կատիայի մէջ անսահման սէր դէպի թատրոնը։ 14—15 տարեկան հասակում այդ սէրը արդէն ամբողջապէս տիրապետում էր նրան։ Երբ արձակուրդներին ինստիտուտից վերադառնում էր մեզ մօտ, այն ժամանակ նա ոչ մի բանի վրայ չէր խօսում այնպիսի յափշտակութեամբ, ինչպէս պիեսների ու դերասանների մասին։ Իր մշտական պատմուածքներով նա մինչև անգամ ձանձրացնում էր մեզ։ Կինս և երեխաները չէին լսում նրան. միմիայն ես քաջութիւն չունէի ուշադրութիւն չդարձնել նրան։ Երբ Կատիան ցանկանում էր յայտնել իր հրճուանքը ուրիշին, սովորաբար գալիս էր ինձ մօտ առանձնասենեակս և ասում էր ալերսող ձայնով.

— Նիկոլայ Ստեպանովիչ, թոյլ տուէք խօսել ձեզ հետ թատրոնի մասին։

Ես ցոյց էի տալիս նրան ժամացոյցը և ասում.

— Տալիս եմ քեզ կէս ժամ ժամանակ, դէհ սկսիր։

Կատիան կոյր երկրպագու էր դերասանների և դերասանուհիների, որոնց պատկերները և ձեռք էր բերում դիւժիններով։ Մի քանի անգամ ևս նա փորձեց մասնակցել սիրողների

ներկայացմանը և վերջ ի վերջոյ, երբ աւարտեց ուսումը, յայտնեց ինձ որ իր կոչումն է դերասանուհի լինել։

Եւ ոչ մի ժամանակ չէի համակրում Կատիայի հրճուանքը դէպի թատրոնը։ Իմ կարծիքով եթէ մի պիեսայ լաւ է կարևոր տպաւորութիւն թողնելու համար, կարիք չկայ նեղութիւն պատճառել դերասաններին, այլ կարելի է միմիայն կարդալով էլ բաւականանալ. իսկ եթէ պիեսան վատ է, այն ժամանակ և ոչ իմ տեսակ խաղ չի կարող նրան լաւացնել։

Երիտասարդ ժամանակս ես յաճախ էի այցելում թատրոն, իսկ այժմ միայն տարին մէկ, երկու անգամ ընտանիքս վերցնում է օթեակ և ինձ էլ քաշ տալիս։ Իհարկէ այդ բաւական չէ, որ ես իրաւունք ունենամ դատողութիւն անել թատրոնի մասին, բայց կ'ասեմ միայն մի քանի խօսք։ Իմ կարծիքով թատրոնը այժմ ոչնչով աւելի լաւ չէ, քան էր սրանից 30—40 տարի առաջ։ Այժմ էլ ոչ թատրոնական միջանցքներում և ոչ էլ ֆոյէում կարելի է գտնել մի բաժակ մաքուր ջուր։ Առաջուայ նման սպասաւորները քսան կոպէկ տուգանք են վերցնում ինձանից մուշտակիս համար, թէև ոչ մի մեղք բան չէ ձմեռը տար հագնուիլ։ Անտրակտներում առանց որ և է կարիքի դարձեալ ածում է երաժշտութիւնը, պիեսայից ստացած տպաւորութեան վրայ աւելացնելով նորը։ Ինչպէս առաջ, այժմ էլ դարձեալ տղամարդիկ գնում են բուֆետ ոգելից ըմպելիքներ խմելու։ Եթէ չկայ յառաջադիմութիւն փոքր բաների մէջ, ապա որդ կը լիներ որոնել խոշորներում։ Երբ դերասանը գլխից մինչև ոտները շղախուած թատրոնական արդիւնքներով և նախապաշարմունքներով աշխատում է «լինել, թէ չլինել» պարզ և սովորական մենախօսութիւնը անպատճառ արտասանել ձայնի շշինով և ցնցումներով, կամ երբ աշխատում է համոզել ինձ, որ յիմարների հետ անչափ խօսող և յիմարուհուն սիրող Հացկին խելացի մարդ էր, և կամ որ «Խելքից պատուհասը» մի ձանձրալի պիեսայ չէ, այն ժամանակ բեմից փչում է նոյն բուտինայի հոտը, որ ձանձրալի էր ինձ համար դեռ

սրանից 40 տարի առաջ։ Եւ ամեն անգամ, երբ դուրս եմ գալիս թատրոնից, ես աւելի պահպանողական եմ դառնում, քան էի առաջ։

Սանտիմենտալ և դիւրահաւան ամբոխին կարելի է համոզել, որ թատրոնը իւր այժմեան ձևով մի դպրոց է. բայց ով ծանօթ է դպրոցի հետ բաւիս բուն նշանակութեամբ, նրան ցանցի մէջ ձգելը անկարելի է։ Զգիտեմ, ինչ կը լինի 50 կամ 100 տարուց յետ, բայց ներկայումս թատրոնը ծառայում է, որպէս զուարճութեան տեղ։ Սակայն այդ զուարճութիւնը չափազանց թանկ է նստում։ Նա խլում է տէրութիւնից հազարներով երիտասարդ, թարմ, առողջ և տաղանդաւոր այժեր, որոնք եթէ չնուիրուէին թատրոնին, կարող էին լինել լաւ բժիշկներ, հացթուխներ, ուսուցչուհիներ, օֆիցերներ և այլն։ Թատրոնը խլում է հասարակութիւնից երեկոյեան ժամերը, որ ամենալաւ ժամանակն է մտաւոր զբաղմունքների և ընկերական խօսակցութիւնների համար։ Աւելորդ եմ համարում այլ և խօսել այն դրամական և բարոյական կորուստների մասին, որ կրում է հանդիսատեսը, տեսնելով բեմի վրայ անարդար սպանութիւններ, անպատկառ և բարոյականութիւնից զուրկ վարմունքներ և կամ բամբասանք։

Կատիան բոլորովին այլ համոզմունքի էր։ Նա հաւատացնում էր ինձ, որ թատրոնը մինչև անգամ իր ներկայ դրութեամբ էլ բարձր է լսարանից, գրքերից և ամեն մի բանից, որ գոյութիւն ունին աշխարհումս։ Թատրոնը՝ դա մի այժ է, որ միացնում է իր մէջ բոլոր գեղարուեստները, իսկ դերասանները քարոզիչներ են։ Ոչ մի գեղարուեստ և ոչ մի գիտութիւն, առանձին վերցրած, չեն կարող այնպէս սաստիկ և ճշգրիտ կերպով ներգործել մարդկային հոգու վրայ, որքան բեմը. և իզուր չէ, որ նոյն իսկ միջակ դերասանը տէրութեան մէջ աւելի հռչակ է վայելում, քան ամենալաւ գիտնականը և կամ արուեստագէտը։ Եւ ոչ մի հասարակական գործունէու-

թիւն չի պատճառում այն հոգեզմայլումն ու բաւականութիւնը, ինչ որ բեմականը։

Մի գեղեցիկ օր Կատիան մտաւ խումբը և գնաց կարծեմ Ուֆա, տանելով իր հետ շատ փող, վարդագոյն յոյսեր և արիստոկրատիական հայեացք գործի վրայ։

Առաջին նամակները, որ նա գրել էր դեռ ճանապարհից, հրաշալի էին։ Ես կարդում էի և ուղղակի զարմանում, թէ ինչպէս կարող են այդ փոքրիկ թերթիկները պարունակել իրանց մէջ այնքան թարմութիւն, հոգու մաքրութիւն, անմեղ միամտութիւն և միևնոյն ժամանակ նուրբ ու գործնական դատողութիւններ, որոնք կարող են պատիւ բերել տղամարդու լաւ ուղեղի։ Վոլգան, ընութիւնը, այցելած քաղաքները, ընկերներին, իւր ունեցած յաջողութիւններն ու անյաջողութիւնները նա ոչ թէ նկարագրում էր, այլ երգում։ Իւրաքանչիւր տողը շնչում էր անկեղծութիւն, որպիսին ես սովոր էի տեսնել նրա դէմքի վրայ։ Այս բոլորով հանդերձ նրա նամակները լի էին լինում բազմաթիւ քերականական սխալներով, իսկ կէտադրութիւն որ ամենևին չկար։

Հանցաւ և կէս տարի, ինչպէս ես ստացայ մի չափազանց բանաստեղծական և ոգևորուած նամակ, որ սկսւում էր հետևեալ բառերով. «Ես սիրահարուած եմ»։ Նոյն նամակի մէջ ծրարած էր և մի տղամարդու լուսանկարը, ածիլած դէմքով, լայնեզր շլեապայով և պլէդը ուսերին։ Յետագայ նամակները նոյնպէս հրաշալի էին, բայց արդէն երևում էին կէտադրութեան նշաններ, անյայտացել էին քերականական սխալները և սաստիկ տղամարդու մտածողութեան հոտ էր փչում։ Կատիան գրում էր, որ լաւ կը լինի Վոլգայի ափին մի որ և է տեղում շինել մի մեծ թատրոն, որի շինութեանը մասնակցէին հարուստ վաճառականներ և նաւատէրեր։ Այդ դէպքում փող շատ կը լինէր, թատրոնը մեծ մուտք կ'ունենար և դերասանները կը խաղային ընկերական պայմաններով... Շատ կարելի է, որ այդ բոլոր ծրագիրները իսկապէս լաւ են, բայց ինձ

թւում է, թէ այդպիսի մտածմունքներ միմիայն տղամարդու գլխից կարող են դուրս գալ։

Այդպէս տևեց տարի ու կէս, մօտ երկու տարի. ըստ երևոյթին ամեն ինչ բարեյաջող էր. Կատիան սիրում էր, հաւատում իր գործին և երջանիկ էր։ Բայց յետոյ նամակների մէջ սկսեցի նկատել հոգու անկման պարզ նշաններ։ Կատիան սկսեց գանգատուել իւր ընկերների վերայ. սա առաջին և շարագուշակ նշանն էր։ Եթէ երիտասարդ գիտնականը և կամ գրականագէտը սկսում է իւր գործունէութիւնը դառնապէս գանգատուելով գիտնականների և գրականագէտների վրայ, այդ նշան է արդէն, որ նա յոգնել է, ուրեմն և անպէտք է գործի համար։ Կատիան գրում էր ինձ, որ ընկերները չեն յաճախում կրկնութիւններին և ոչ մի ժամանակ չեն իմանում իրանց դերերը։ Բեմի վրայ նրանց բռնած դիրքը, անմիտ պիեսներ ներկայացնելը՝ այս բոլորը պարզ վկայում են, որ նրանք լիովին յարգանք չեն տածում դէպի հասարակութիւնը։ Նրանց զբաղեցնում է միմիայն լաւ մուտք ունենալու գաղափարը, և այդ շատ պարզ երևում է նրանից, որ այդ դրամատիկ դերասանները և ողբերգուները յաճախ թոյլ են տալիս իրանց այն աստիճան ստորանալ, որ խաղում են ու երգում միմիայն խեղկատակ երգչուհիներին վայել բաներ. նրանց մէջ նորա ծաղրում են խաբուած ամուսիններին և անհաւատարիմ յղի կանանց։ Ընդհանրապէս մարդ զարմանում է, թէ ինչպէս մինչև այժմ գաւառական գործը չի մեռել, և մի բարակ, հոտած երակ դեռ վկայում է նրա գոյութիւնը։

Ես Կատիային պատասխանեցի երկար, բայց և պէտք է ասած, շատ ձանձրալի նամակով։ Այդ նամակում 'ի միջի այլոց գրել էի, թէ պատահել է ինձ մի քանի անգամ խօսակցութիւն ունենալ իմ բարեկամ ծերունի դերասանների հետ, որ շատ ազնիւ մարդիկ են։ Նրանց խօսակցութիւնից ես կարողացել եմ հասկանալ, որ նրանք իրանց գործունէութեան մէջ ղեկավարւում են ոչ այնքան սեփական խելքով և ազատ

կամքով, որքան մօդայով ու հասարակութեան տրամադրութեամբ։ Ամենալաւ դերասաններն անգամ խաղացել են և ողբերգութիւններ, և փոքրիկ թատերգութիւններ. բեմ են դուրս եկել փարիզեան ֆարսերում. և նրանք միշտ այն համոզմունքի են եղել, իբր թէ ընթանում են ուղիղ շաւղով և օգուտ են բերում հասարակութեանը։ Նշանակում է, ինչպէս տեսնում ես, չարիքի արմատը աւելի խորն է և դա չպէտք է որոնել դերասանների մէջ, այլ հէնց իրան արուեստի և դէպի նա հասարակութեան ունեցած վերաբերմունքի։ Իմ այս նամակը աւելի էր գրգռել Կատիային։ Նա պատասխանում է ինձ. «Մենք իրար չենք հասկանում. ես գրել էի ձեզ ոչ թէ ազնուագոյն մարդկանց մասին, որոնք եղել են ձեզ բարեկամ, այլ դատարկարոյծների մի խմբակի մասին, որոնք չունին և ոչ մի առընչութիւն ազնուութեան հետ։ Դա վայրենի մարդկանց մի խմբակ է, որոնք ընկել են բեմը միմիայն այն պատճառով, որ ուրիշ տեղ չէին ընդունի նրանց, և արտիստ են համարում իրանց, որովհետև անամօթ են։ Չկայ և ոչ մի տաղանդ, բայց դրա փոխարէն բամբասաբերներ, ինտրիգաններ, հարբեցողներ և անշնորհք ու անձիրք մարդիկ՝ որքան կամենաք։ Չեմ կարող խօսքով արտայայտել, թէ ինչպիսի վիշտ է պատճառում ինձ, որ անչափ սիրած արուեստը ընկել է այդպիսի մարդկանց ձեռքը։ Ցաւալի է նոյնպէս, որ լաւ մարդիկ միմիայն հեռուից են տեսնում չարիքը և չեն կամենում մօտենալ։ Փոխանակ պաշտպան հանդիսանալու՝ նրանք ծանր ու անհասկանալի ոճերով գրում են բարոյախօսութիւններ՝ ամենքին էլ անպէտք»։

Անցաւ էլի մի փոքր ժամանակ և ես ստացայ այսպիսի նամակ. «Ես խաբուած եմ ամարդի կերպով։ Չեմ ցանկանում այլ ես ապրել։ Կարգադրեցէք փողերիս մասին, ինչպէս հարկաւոր կը համարէք։ Սիրում եմ ձեզ որպէս հօրս և որպէս իմ միակ բարեկամին։ Մնաք բարեաւ»։

Պարզուեց, որ Կատիայի սիրականն էլ պատկանելիս է եղել «վայրենի մարդկանց խմբակին»։ Վերջը մի քանի ամսուանից գուշակեցի, որ Կատիան դիմած է եղել թունաւորութեան, ապա լուրջ կերպով հիւանդացել և տեղափոխուել է Նալթա երևի բժիշկների խորհրդով։ Վերջին նամակով Կատիան խնդրում էր ինձանից, որ կարելոյն չափ շուտով ուղարկեմ իրան Նալթա հազար ռուբլի. վերջանում էր նամակը հետևեալ տողերով. «Ներեցէք, որ նամակս այսպէս մռայլ է։ Երեկ ես թաղեցի որդուս»։ Մի ամբողջ տարի Ղրիմում ապրելուց յետ նա վերադարձաւ տուն։

Ճանապարհորդեց Կատիան մօտաւորապէս չորս տարի և բոլոր այդ ժամանակամիջոցում նրա վիճակի նկատմամբ, պէտք է խոստովանած, ես խաղացի շատ հնչին և օտարօտի դեր։ Երբ նա վաղօրօք յայտնեց ինձ իր մտադրութիւնը դերասանուհի լինելու և յետոյ գրում էր սիրահարութեան մասին, երբ շռայլութեան ոգին հետզհետէ տիրապետում էր նրան և ես պրոհանջի համաձայն ուղարկում էի երբեմն հազար, երբեմն երկու հազար ռուբլի, կամ երբ գրել էր անձնասպանութեան մտադրութեան մասին և վերջը երեխայի մահը, բոլոր այդ դէպքերում ես մասնակցեցի նրա բախտին միմիայն երկար ու ձանձրալի նամակներով, որ կարող էի և չգրել, այն ինչ ես փոխարինում էի նրան հարազատ հօր և սիրում աղջկաս պէս։

Այժմ Կատիան ապրում է այստեղից կէս վերստ հեռաւորութեան վրայ։ Նա վարձել է հինգ սենեակից բաղկացած մի բնակարան և բաւականին յարմար ու ճաշակով զարդարել։ Սենեակներում ընդհանրապէս տիրում է ծուլութեան ոգի։ Փափուկ բազմոցներն ու աթոռները, գորգերի առատութիւնը, աղօտ և անթափանցիկ գոյները, բազմաթիւ էժանագին հովհարները և մի շարք օրիգինալ, բայց բովանդակութիւնից համարեա բոլորովին զուրկ պատկերները վկայում են տանտիրուհու անփոյթ լինելը, ծուլութիւնը և փափկասիրութիւնը։ Այս ու այն կողմ գրուած են բոլորովին աւելորդ սեղաններ,

իրանց վրայ դասաւորուած անպէտք առարկաներով, և կախ են արուած զանազան կտորներ վարագոյրների տեղ։ Ամբողջ օրերով Կատիան պառկում է բազմոցում և գիրք կարդում՝ գլխաւորապէս վէպեր և վէպիկներ։ Տանից դուրս է գալիս միմիայն օրը մէկ անգամ՝ կէսօրից յետոյ, ինձ հետ տեսակցուելու համար։

Ես պարապում եմ, իսկ Կատիան նստում է ինձանից ոչ հեռու բազմոցում և լռում. նա այնպէս փաթաթուում է շալի մէջ, որ կարծես մրսելիս լինի։ Կատիայի ներկայութիւնը ինձ չի խանգարում կենդրոնանալ. ես արդէն սովորել եմ նրա յաճախակի այցելութիւններին այն ժամանակուանից, երբ նա դեռ երեխայ էր։ Մէկ-մէկ ես մեքենաբար տալիս եմ որ և է հարց, և նա պատասխանում է շատ կարճ. կամ թէ մի բոպէ հանգստանալու համար ես յետ եմ դառնում դէպի Կատիան և նայում, թէ ինչպէս նա խորասուզուած աչքի է անցկացնում որ և է բժշկական հանդէս կամ լրագիր։ Այդ ժամանակ ես նկատում եմ, որ նրա դէմքի վրայ այլ ևս չի փայլում նախկին անսահման հաւատի կնիքը։ Արտայայտութիւնը այժմ սառն է, անտարբեր և ցրուած, ինչպէս այն ճանապարհորդներինը, որոնք ոտիպուած են դեռ երկար սպասել գնացքին։ Հաղնւում է նա այժմ էլ առաջուայ նման գեղեցիկ, պարզ, բայց անփոյթ. երևում է, որ մաղերի սանդրուածքը և հանդերձները բաւականին փչանում են օրերով պառկելուց։ Այժմ նա արդէն առաջուայ նման հետաքրքրուող չէ։ Այլ ևս ինձ հարցեր չի տալիս, կարծես ամեն բան կեանքում արդէն ճաշակել է և չի սպասում որ և է նորութիւն լսելու։

Ժամը չորսին մօտ դահլիճում և հիւրանոցում սկսում է շարժում։ Այդ Լիզան է, որ վերադարձել է կոնսերուատորիայից և բերել է իր հետ ընկերուհիներին։ Լսելի է լինում, ինչպէս նուագում են դաշնամուրի վրայ, փորձում են իրանց ձայները և ծիծաղում։ Սեղանատանը Եղորը պատրաստում է սեղանը և ամանները շրխշրխկացնում։

— Մնաք բարեաւ, ասում է Կատիան, այսօր չեմ կարող այցելել ձեր ընտանիքին։ Թող ներեն։ Ժամանակ չունիմ։ Համեցէք ինձ մօտ։

Երբ ես ուղեկցում եմ նրան մինչև միջանցքը, նա յետ է նայում և առն կերպով չափելով ինձ ոտից մինչև գլուխ, ասում է սրտնեղութեամբ.

— Իսկ դուք շարունակ նիհարում էք, ինչու չէք բժշկւում, կամենում էք խսկոյն կը գնամ Սերգէյ Ֆեոդորովիչին հրաւիրելու. թող մտիկ տայ ձեզ։

— Հարկաւոր չէ, Կատիա։

— Զարմանում եմ, թէ ինչպէս են մտիկ տալիս ձեզ վրայ ձեր ընտանիքը։ Լաւ են, խօսք չունիմ ասելու։

Նա ջղաձգաբար հագնում է քուրքը, և այդ ժամանակ գլխի մազերից անպատճառ վայր են ընկնում մէկ երկու ձեղիկներ։ Ծուլութիւնը խանգարում է այստեղ ևս ուղղելու մազերի սանդրուածքը. նա մի կերպ թափթփուած մազերը հաւաքում է գլխարկի տակ և գնում։

Ես մտնում եմ սեղանատուն։ Կինս հարցնում է.

— Կատիան ինչու չմտաւ մեզ մօտ, այդ շատ օտարօտի է...

— Մայրիկ, ասում է յուզմունքով Լիզան, եթէ չի ցանկանում, Աստուած հետը, հօ ծունր չոքելու չենք նրա առաջ։

— Ինչպէս կուզէ, բայց դա արհամարհանք է. նստել առանձնասենեակում երեք ժամ և յանկարծ չյիշել մեզ...

Վարիան և Լիզան՝ երկուսն էլ ատում են Կատիային։ Այդ ատելութիւնը ինձ համար անհասկանալի է, և երեի ըմբռնելու համար պէտք է կին լինել։ Գլխովս երաշխաւոր եմ, որ այն 150 երիտասարդներից, որոնց ես համարեա ամենայն օր հանդիպում եմ լսարանում և այն հարիւրաւոր հասակ առած մարդկանցից, որոնց պատահում եմ իւրաքանչիւր շաբաթ, չի գտնուի և մէկը, որ ատելութիւն և զզուանք զգար դէպի Կատիայի անցեալը՝ այսինքն դէպի անպսակ յղութիւնը և ապօրինի զաւակը։ Միևնոյն ժամանակ ես չեմ մտաբերում

և ոչ մի կին ծանօթ կանանցից, որ գիտակցաբար և կամ բնազդմամբ զգացած չլինի իւր մէջ այդ զգացմունքները։ Եւ այդ նրանից չէ, որ կինը աւելի առաքինի և բարձր է տղամարդուց, չէ որ առաքինութիւնը և մաքրութիւնը շատ քիչ են զանազանւում յանցանքից, եթէ ազատ չեն շար միտումներից։ Ես բացատրում եմ այդ պարզապէս կանանց յետամնացութեամբ։ Այն կարեկցութիւնը և խղճի ձայնը, որ զգում է իր մէջ այժմեան տղամարդը դժբախտութիւն տեսնելիս, աւելի պարզ ցոյց են տալիս ինձ քաղաքակրթութեան և բարոյականութեան յառաջադիմութիւնը, քան թէ ատելութիւնը և զզուանքը։ Այժմեան կինը նոյնքան լալկան է՝ ենթակայ կեղծ խանդաղատութեան և միևնոյն ժամանակ սրտով կոպիտ, որքան միջին դարերում։ Իմ կարծիքով շատ խելացի են վարւում նրանք, որոնք խորհուրդ են տալիս կնոջ դաստիրակուել, ինչպէս տղամարդը։

Կինս չի սիրում Կատիային այլ և այն պատճառով, որ վերջինս մի ժամանակ եղել է դերասանուհի, համարում է նրան երախտամոռ, հպարտ, օտարօտի, և վերագրում է նրան բազմաթիւ այնպիսի յանցանքներ, որպիսին միայն կինը կարող է գտնել դիմացքի մէջ։

Բացի ինձանից և ընտանիքիցս, մեզ մօտ ճաշում են այլ և Լիզայի երկու-երեք ընկերուհիները և Ալէքսանդր Ադոլֆովիչ Գնեկկերը, որ համարւում է Լիզայի ապագայ փեսացուն։

Օտ երեսուն տարեկան, միջին հասակով երիտասարդ է չափազանց զէր և լայնաթիկունք։ Շիկագոյն այտամօրուսը և ներկած բեխերը լայն ու հարթ երեսին տալիս են ինչ որ ծիծաղաշարժ արտայայտութիւն։ Հագնում է կարճ պիդջակ, գունաւոր ժիլետ և անդրավարտիկ, մեծ զոլաւոր կոտրից, որ դէպի վերեր լայն է, իսկ քանի գնում ներքի՝ այնքան նեղանում է. նոյնպէս և դեղին կօշիկներ առանց կրունկների։ Նրա աչքերը կորնթարդ են, ինչպէս խեցգետնինը, փոզպատը նման նոյն կենդանու պարանոցին. և մինչև անգամ ինձ թւում է, թէ այդ երիտասարդ մարդը ամբողջովին արձակում է խեցգետնից պատրաստած արդանակի հոտ։ Լինում է նա մեզ մօտ

ամենայն օր և ոչ ոք մեզանից չգիտէ, թէ ինչ ծագում ունի նա, որտեղ է սովորել, ինչով է ապրում։ Նա ոչ նուագում է որ և է գործիքի վրայ և ոչ երգում, բայց ինչ որ կապ ունի թէ երաժշտութեան և թէ երգեցողութեան հետ. մի տեղ ծախսում է այս ինչի դաշնամուրը, յաճախ լինում է կոնսերուատորիայում, ծանօթ է բոլոր յայտնի երաժիշտների հետ, կոնցերտներում կարգադրիչ է լինում. դատում է երաժշտութեան մասին մեծ հեղինակութեամբ և, ինչպէս նկատել եմ, բոլորքեքեան սիրով համաձայնւում են նրա հետ։

Հարուստ մարդիկ միշտ ունենում են իրանց շուրջը ձրիակերներ։ Այսպէս և գիտութիւնն ու գեղարուեստը։ Կարծեօք աշխարհում չկայ և ոչ մի գիտութիւն ու գեղարուեստ, որոնք ազատ լինին այդպան մարմինների ներկայութիւնից, ինչպէս պ. Գնեկկերն է։ Ես երաժիշտ չեմ և կարող է պատահել, որ սխալւում եմ Գնեկկերի վերաբերմամբ, որին, պէտք է ասած, դեռ լաւ չեմ ճանաչում, բայց ինձ բաւականին կասկածելի է թւում այն հեղինակութիւնը և դիրքը, որ բռնում է նա իւրաքանչիւր անգամ, երբ կանգնած դաշնամուրի մօտ լսում է որ և է մէկի նուագելը և կամ երգելը։

Թէկուզ եղէք հարիւրապատիկ ջէնտլմեն և գաղտնի խորհրդական, բայց եթէ ունիք աղջիկ, այն ժամանակ ոչնչով ապահով չէք, որ ձեր տունը մուտք չեն գործի խնամախօսութեան և ամուսնութեան պատրուակով զանազան քաղաքաբնակ չարչիներ։ Օրինակ, ես ոչ մի կերպ չեմ կարողանում հաշտուել կնոջս այն հանդիսաւոր արտայայտութեան հետ, որ ընդունում է նա ամեն անգամ, երբ մեզ մօտ է լինում Գնեկկերը։

Չեմ կարող հաշտուել նոյնպէս Լաֆէտի, պորտֆէյնի և խերէսի շշերի հետ, որոնք դարսւում են սեղանին միմիայն պ. Գնեկկերին ցոյց տալու համար, որ մենք ապրում ենք շքեղ և շռայլ։ Չեմ կարողանում տանել Լիզայի բաց ծիծաղը և աչքերը պրչցնելու սովորութիւնը այն ժամանակ, երբ մեզ մօտ տղամարդիկ են լինում։ Գլխաւորապէս ինձ համար ան-

հասկանալի է, թէ ինչու ամենայն օր գալիս է մեզ մօտ և ինձ հետ ճաշում մի մարդ, որ բոլորովին անծանօթ է սովորութիւններիս, մասնագիտութեանս, կեանքիս եղանակին, և որը բոլորովին նման չէ այն մարդկանց, որոնց ես սիրում եմ։ Կինս և ծառաները խորհրդաւոր կերպով շշնջում են թէ «նա փեսացու է», բայց ես այնու ամենայնիւ չեմ կարող հաշտուել նրա ներկայութեան հետ։ Նա յարուցանում է իմ մէջ մի այնպիսի ատելութիւն, որպիսին կարող է պատճառել, եթէ հետս նստած լինի սեղան մի զուլուս։ Ես նոյնպէս զարմանում եմ, թէ ինչպէս աղջիկ՝ Լիզան, որին ես սովոր եմ երեխայ համարել, սիրում է այդ փողպատը, աչքերը և այդ լիր թշերը...

Ճաշի ժամերը առաջ ինձ բաւականութիւն էին պատճառում, իսկ այժմ միմիայն ձանձրոյթ և սրտնեղութիւն։ Այն օրից, երբ ես դառայ «ձերդ գերազանցութիւն» և եղայ բժշկական մասնաճիւղի դեկան, ընտանիքս, չգիտեմ ինչու, հարկաւոր համարեց բոլորովին փոխել կերակուրների ցուցակը և ճաշուայ կարգերը։ Փոխանակ այն հասարակ, պարզ կերակուրների, որոնց ընտելացել էի ուսանող և բժիշկ եղած ժամանակս, այժմ ինձ կերակրում են պիւրէ-արգանակով, որի մէջ լողում են ինչ որ սպիտակ խմորեղէն բաներ, երիկամունքներով և այլն. գեներալի աստիճան և հռչակ ստանալս խլեցին ինձանից ընդ միշտ շշին, համեղ կարկանդակները, սագը խնձորով պատրաստած և կապոյտ ձուկը կորիտախաշիլի հետ։ Նրանք խլեցին այլ և աղախին Ագաշային, որ մի շատախօս և կատակասէր պառաւ էր։ Այժմ նրա փոխարէն ճաշ է մատուցանում մի յիմար և ինքնահաւան երիտասարդ, սպիտակ ձեռնոցը աջ ձեռին։ Ճաշուայ ընդմիջումները կարճ են, թէև թւում են չափազանց երկար, որովհետև դատարկութիւն լրացնող ոչինչ չկայ։ Նախկին ուրախութիւնը, ազատ խօսակցութիւնները, կատակները, ծիծաղը, փոխադարձ փաղաքշանքները այժմ չկան։ Ինձ նման մի մարդու համար, որ ամբողջ օրը զբաղուած է մտաւոր աշխատանքով, ճաշը հանգստութեան և տե-

սակցութեան ժամ էր, իսկ կնոջս և երեխաների համար տօն, որ թէև կարճ էր, բայց ուրախ։ Նրանք գիտէին, որ այդ կէս ժամում ես այլ ևս չեմ պատկանում ոչ գիտութեանը, ոչ ուսանողներին և ոչ մի այլ ուրիշին, այլ միմիայն իրանց։ Փոքրիկ բաժակով հարբելու դէպքը այլ ևս չի պատահում։ Չկայ Ագաշան, չկայ կապոյտ ձուկը կորիտախաշիլի հետ, չկայ այն աղմուկն ու բարձրաձայն ծիծաղը, որ տեղի էր ունենում ամեն անգամ, երբ շունն ու կատուն կռւում էին սեղանի տակին և կամ Կատիայի թշի փաթեթը պատահմամբ ընկնում էր արգանակի մէջ։

Նկարագրել մեր այժմեան ճաշը նոյնքան անհամ է, որքան և ուտելը։ Կինս միշտ բռնում է մի առանձին հանդիսաւոր դիրք. նրա դէմքը արտայայտում է հոգացողութիւն. նա անհանգստութեամբ շարունակ դիտում է մեր թէփշիները և ասում «Ինչպէս տեսնում եմ ժարիօն ձեզ դուր չի գալիս, ուզիզ է, դուր չէ գալիս»։ Եւ ես պարտաւոր եմ պատասխանել. «Իզուր ես անհանգստանում, սիրելիս, ժարիօն շատ համեղ է», իսկ նա. «Նիկոլայ Ստեպանիչ, դու միշտ պաշտպան ես հանդիսանում ինձ, և ոչ մի ժամանակ ճշմարիտը չես ասում. ինչու Ալէքսանդր Ադոյֆովիչը այդպէս քիչ կերաւ»։ Եւ այդպէս անընդհատ մինչև ճաշի վերջը։ Լիզան անդադար ծիծաղում է և աչքերը պրչշտցնում։ Ես նայում եմ երկուսի վերայ էլ և միայն այժմ պարզ ըմբռնում, որ նրանց երկուսի ներքին կեանքը վաղուց վրիպել է իմ դիտողութիւնից. ինձ թւում է, թէ ես մի ժամանակ ապրել եմ այստեղ, ընտանիքիս հետ, իսկ այժմ հիւր եմ ոչ իսկական կնոջս մօտ, և տեսնում եմ ոչ իսկական Լիզային։ Երկուսի մէջ էլ կատարուել է խիստ փոփոխութիւն, և ես բոլոր այն երկար ժամանակամիջոցում, մինչդեռ կատարուել է այդ փոփոխութիւնը, աչքերս խփած եմ եղել, ուստի զարմանալի չէ, որ ոչինչ չեմ հասկանում։ Ի՞նչից է առաջ եկել այդ փոփոխութիւնը, չգիտեմ։ Կարող է պատահել, որ բոլոր դժբախտութիւնը նրանումն է, որ Աստու-

ած կնոջս և Լիզային չէ տուել այն բարոյական ոյժը, որպիսին ինձ։ Մանուկ հասակից ես սովորել եմ դիմադրել արտաքին ազդեցութիւններին, այդպիսով և բաւականին զարգացրել իմ ոյժերը՝ եփուել։ Աշխարհային այնպիսի խոշոր երևոյթներ, ինչպէս հուչակ ստանալը, գեներալութիւն և ծանօթութիւն բարձր շրջանների հետ, չունեցան իմ կեանքի և բնութեան վերայ մի առանձին ազդեցութիւն, և ես մնացել եմ անփոփոխ ու անմնաս, իսկ այն ինչ, թոյլ և բարոյապէս չզարգացած Լիզայի ու կնոջս վերայ այդ բոլորը թափուեցին իբրև ձեան ահագին կոյտեր և ճնշեցին նրանց։

Օրիորդները և Գնեկկերը խօսում են խուսափաբի (фуга), երգչուհիների և դաշնակահարների մասին, Բախի և Բրամսի վերայ, իսկ կինս վախենալով, որ մի գուցէ կասկածեն, թէ երաժշտութիւնից ինքը ոչինչ չի հասկանում, համակրութեամբ ժպտում է նրանց ասածներին և քրթմնջում. «Այդ շատ գեղեցիկ է. մինթէ այդպէս է. ասացէք խնդրեմ, մինթէ այդպէս է»։ Գնեկկերը լաւ ուտում է, սրախօսութիւններ է անում, ներողամտաբար լսում է օրիորդների նկատողութիւնները, երբեմն էլ խօսում է ֆրանսերէն, իհարկէ վատ լեզուով, և այդ դէպքերում, չգիտեմ ինչու, մեծարում է ինձ votre exelance բառերով։ Իսկ ես շարունակ լուռ եմ և մռայլ։ Իմ ներկայութիւնը ըստ երևոյթին ճնշում է նրանց և ես քաշւում եմ նրանցից։ Դասակարգային հակակրանք ասուած բանը, որ առաջ բոլորովին անծանօթ էր ինձ, այժմ տանջում է հոգիս։ Ես աշխատում եմ Գնեկկերի մէջ տեսնել միմիայն վատ կողմեր, որ և շուտով նկատում եմ, ու ինքս իմ մէջ սաստիկ զայրանում, թէ ինչու աղջկան փեսացուի տեղ նստած է մի մարդ, որ բոլորովին իմ շրջանից չէ։ Նրա ներկայութիւնը ինձ վրայ վատ է ազդում և մի այլ կողմից։ Սովորաբար, երբ ես մենակ եմ լինում, կամ մի այնպիսի մարդկանց հասարակութեան մէջ, որոնց սիրում եմ, ես երբէք չեմ մտածում իմ մատուցած ծառայութիւնների մասին, և եթէ մտրոմս էլ ան-

ցնում են, այն ժամանակ նրանք թւում են ինձ շատ չնչին, բայց երբ լինում եմ այնպիսի մարդկանց հասարակութեան մէջ, ինչպէս Գնեկկերը, իմ մատուցած ծառայութիւնները ինձ թւում են որպէս մի բարձր սար, որի գագաթը ամպերի մէջ է ծածկուած, իսկ ստորոտում հաղիւ նկատելի կերպով շարժւում են Գնեկկերները։

Ճաշից յետոյ ես գնում եմ առանձնասենեակս և սկսում ծխել։ Առաջ ես ունէի վատ սովորութիւն՝ ծխել առաւօտից մինչև գիշեր, իսկ այժմ միայն օրը մէկ անգամ եմ ծխում։ Այդ ժամանակ գալիս է ինձ մօտ կինս խօսելու։ Ինչպէս առաւօտները, նոյնպէս և այժմ ինձ առաջուց յայտնի է, թէ ինչի մասին կը լինի մեր խօսակցութիւնը։

— Նիկոլայ Ստեպանիչ, հարկաւոր է ինձ խօսել քեզ հետ լուրջ կերպով, սկսում է նա։—Ես Լիզայի մասին... Ինչու դու ուշադրութիւն չես դարձնում։

— Այսինքն, ինչ ուշադրութիւն։

— Դու այնպէս ես ձևացնում, որպէս թէ ոչինչ չես նկատում։ Այդ լաւ չէ։ Չպէտք է լինել անհոգ... Գնեկկերը մտադրութիւն ունի Լիզայի նկատմամբ... հը, ինչ ես ասում։

— Վատ մարդ է նա, թէ ոչ, այդ չգիտեմ, որովհետև դեռ չեմ ճանաչում նրան, իսկ որ նա ինձ դուր չի գալիս, այդ մասին ես արդէն հազար անգամ ասել եմ քեզ։

— Բայց այդպէս չի կարելի... ոչ, չի կարելի... նա կանգ է առնում և յուզուած սկսում է քայլել։

— Այդպէս չի կարելի վերաբերուել որ և է լուրջ քայլի։ Երբ խօսքը աղջկայ բաղդաւորութեան մասին է, պէտք է մի կողմ թողնել ամեն մի անձնական բան։ Ես գիտեմ, որ նա քեզ դուր չի գալիս... լաւ... Եթէ մենք այժմ բացասենք նրան և քանդենք ամեն ինչ, ինչով կը երաշխաւորես, որ Լիզան ամբողջ կեանքում անբաւական չի լինի մեզանից։ Փեսացու այժմ գտնելը հեշտ չէ և կարող է պատահել, որ այլ ես ուրիշը չպատահի... Գնեկկերը շատ է սիրում Լիզային

և, ինչպէս երևում է, Լիզան էլ անտարբեր չէ... Ճշմարիտ է, այդ պարոնը այժմ չունի որոշ պաշտօն, բայց ինչ արած. Աստուած կը տայ, ժամանակին այդ էլ կը լինի։ Նա լաւ ընտանիքից է և հարուստ։

— Ո՞րտեղից գիտես այդ։

— Նա ասում է, որ հայրը Խարկովում ունի մի մեծ տուն և Խարկովից ոչ հեռու մի կալուածք։ Մի խօսքով, Նիկոլայ Ստեպանիչ, քեզ անհրաժեշտ է գնալ Խարկով։

— Ինչու համար։

— Խարկովում դու ունես շատ ծանօթ պրոֆէսօրներ, որոնց օգնութեամբ կը կարողանաս տեղեկութիւն հաւաքել... Ես ինքս կը գնայի, բայց ես կին եմ... չեմ կարող...

— Խարկով չեմ գնայ, ասում եմ ես խոժոռուած։

Կինս վախենում է և նրա դէմքի վրայ արտայայտւում է խորին վիշտ։

— Ի սէր Աստուծոյ, Նիկոլայ Ստեպանիչ, աղաչում եմ ձեզ, ազատեցէք ինձ այս ծանրութիւնից։ Ես տանջւում եմ, ասում է նա հեկեկալով։

Լացը և խօսքերը թողնում են ինձ վրայ տպաւորութիւն, ես խղճահարւում եմ և քաղցրաբար ասում.

— Լաւ, Վարիա, եթէ ցանկանում ես, կը գնամ Խարկով և կ՚անեմ ամեն բան, ինչ որ քեզ հաճելի է։

Նա սեղմում է թաշկինակը աչքերին և հեռանում իր սենեակը լաց լինելու։ Ես մնում եմ մենակ։

Մի փոքր յետոյ բերում են լամպը։ Լուսամփոփից և բաղկաթոռներից ստուերները ընկնում են պատերի ու յատակի վրայ։ Այդ ստուերները վաղուց ծանօթ են ինձ և արդէն ձանձրացրել են։ Երբ ես նայում եմ նրանց վրայ, ինձ թւում է, թէ արդէն գիշեր է, և ահա սկսում է անիծուած անքնութիւնը։ Ես պառկում եմ անկողնում, ապա վեր կենում և քայլում սենեակում, յետոյ նորից պառկում։ Սովորաբար ճաշից յետոյ, նախ քան երեկոյանալը, իմ ջղային համակարգութեան

գրգռումը հասնում է իր ամենաբարձր աստիճանին։ Ես սկսում եմ առանց որ և է պատճառի լաց լինել և ծածկում եմ գլուխս բարձի տակ։ Այդ ժամանակ ես վախենում եմ, որ չլինի, թէ մէկը ներս մտնի, վախենում եմ յանկարծակի մեռնել, ամաչում եմ արցունքներիցս, և ընդհանրապէս հոգուս մէջ գոյանում է մի ինչ որ անտանելի բան։ Ես զգում եմ, որ այլ ևս անկարող եմ տեսնել թէ լամպը, թէ գրքերը և թէ յատակի վրայ ընկած ստուերները. չեմ կարող լսել հիւրասենեակից եկող ձայները։ Ինչ որ անտեսանելի և անհասկանալի ոյժ կոպտութեամբ դուրս է շպրտում ինձ բնակարանիցս։ Ես վեր եմ թռչում, արագ-արագ հագնւում եմ և, որպէս զի տանեցիք չնկատեն, զգուշութեամբ դուրս եմ գալիս փողոց։ Բայց ուր գնալ։

Այդ հարցի պատասխանը վաղուց պատրաստ է իմ գլխում. Կատիայի մօտ։

ТИФЛИССКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ ПУБЛИЧНАЯ БИБЛИОТЕКА

III.

Սովորաբար նա պառկած է լինում տաճկական բազմոցում և կարդում է որ և է բան։ Տեսնելով ինձ նա ծոյլ կերպով բարձրացնում է գլուխը, նստում և դէպի ինձ մեկնում ձեռքը։

— Դու դարձեալ պառկած ես, ասում եմ ես մի փոքր լռելուց ու հանգստանալուց յետոյ, այդ լաւ չէ, գոնէ մի բանով զբաղուէիր։

— Ինչով. կինը կարող է լինել միայն հասարակ բանուորուհի և կամ դերասանուհի։

— Դէ ինչ, եթէ չի կարելի լինել բանուորուհի, եղիր դերասանուհի։

Լռում է։

— Գոնէ ամուսնանայիր, ասում եմ ես հանաքի տակով։

— Ոչ փեսացու կայ, և ոչ ամուսնանալու հարկ։

— Իսկ այդպէս ապրել չի կարելի։

— Այսինքն առանց ամուսին, շատ հարկաւոր է. միմիայն ցանկութիւն և տղամարդիկ որքան կամենաք։

— Այդ լաւ չէ, Կատիա։

— Ինչը լաւ չէ։

— Այ, ինչ որ նոր ասացիր։

Եւ նա նկատելով, որ ես զայրացած եմ, աշխատում է մի կերպ հեռացնել ինձանից այդ վատ տպաւորութիւնը։

— Եկէք ահա այստեղ, ասում է նա։

Եւ Կատիան տանում է ինձ մի փոքր, բայց շատ յարմար սենեակ ու ցոյց տալով զրասենեակը, ասում է.

— Ահա ձեզ համար եմ պատրաստել, որ այստեղ պարապիք։ Եկէք ինձ մօտ ամենայն օր և բերէք ձեզ հետ ձեր պարապմունքը. այնտեղ տանը ձեզ միայն խանգարում են։ Կը պարապիք այստեղ, այնպէս չէ։

Որպէս զի վիրաւորած չլինեմ Կատիային, ես պատասխանում եմ, որ կը պարապեմ և թէ սենեակը ինձ շատ է դուր գալիս։ Յետոյ մենք նստում ենք հէնց այդ յարմար սենեակում և սկսում ենք խօսել։

Տար սենեակը, գեղեցիկ արդուզարդը և համակրելի անձնաւորութեան ներկայութիւնը, այս ամենը յարուցանում են իմ մէջ փոխանակ բաւականութեան, որպիսին ես զգում էի առաջ, մի տեսակ հակումն դանգատուելու։ Ինձ թւում է, թէ դանգատուելով և հառաչելով աւելի թեթևութիւն կը զգամ։

— Գործս վատ է, սիրելիս, սկսում եմ ես ախ քաշելով. շատ վատ է։

— Ի՞նչ կայ։

— Տեսնում ես, իմ բարեկամ, բանը ինչումն է։ Թագաւորների ամենալաւ և ամենասուրբ իրաւունքն է՝ դատապարտեալին ներումն շնորհելու իրաւունքը։ Ես մշտապէս զգում էի ինձ թագաւոր, որովհետև անսահման կերպով օգտւում էի այդ իրաւունքով։ Ես ոչ մի ժամանակ չեմ դատել որ և է մէկին,

եղել եմ միշտ զիջող, և սիրով ներել եմ աջ ու ձախ։ Ուր ուրիշները բողոքում էին և աղմկում, ես այնտեղ միայն խորհուրդ էի տալիս և համոզում։ Իմ ամբողջ կեանքում ես աշխատել եմ, որ իմ ներկայութիւնը անտանելի չլինի ընտանիքիս, ուսանողների, ընկերներիս և ծառաների համար։ Եւ իմ այդ վերաբերմունքը դէպի մարդիկ դատապարակել է շատերին, որոնք եղել են իմ շուրջը։ Բայց այժմ ես արդէն թագաւոր չեմ. իմ մէջ կատարւում է մի ինչ որ բան, որ միայն ստրուկներին է վայել։ Գլխիս մէջ ցերեկ ու գիշեր շրջում են զանազան չար մտքեր, իսկ հոգուս մէջ բուն են դրել այնպիսի զգացմունքներ, որ առաջ անծանօթ էին ինձ։ Ես ատում եմ և արհամարհում, զայրանում եմ և վրդովւում։ Ես դառել եմ անչափ խիստ, պահանջող, ջղային, անհամբեր և կասկածոտ։ Մինչև անգամ այն, որ առաջ առիթ էր տալիս ինձ ասելու որ և է սուր խօսք և բարեսրտութեամբ ծիծաղել, այժմ ծնեցնում է իմ մէջ ծանր զգացմունք։ Փոխուել է իմ մէջ և իմ տրամաբանական մտածողութեան եղանակը։ Առաջ ես ատում էի միայն փողը, իսկ այժմ հարուստներին, կարծես նրանք մեղաւոր լինեն. առաջ ատում էի բռնութիւնը և կամակայութիւնը, իսկ այժմ բռնութիւն և կամակայութիւն գործողներին, կարծես նրանք լինեն միայն մեղաւոր, և ոչ մենք բոլորս, որ չենք դատապարակում միմեանց։ Ի՞նչ է նշանակում այս։ Եթէ նոր մտքերը և զգացմունքները առաջ են եկել համոզմունքների փոփոխութիւնից, ուրեմն որտեղից կարող էր առաջ գալ այդ փոփոխութիւնը։ Մթթէ աշխարհը այժմ աւելի է վատացել, իսկ ես լաւացել, կամ թէ առաջ ես կոյր էի և անտարբեր։ Եթէ այդ փոփոխութիւնը առաջ է եկել ֆիզիկական և մտաւոր ոյժերիս ընդհանուր անկումից, այն ժամանակ իմ դրութիւնը ցաւալի է։ Եւ իրաւ, ես տկար եմ, և իւրաքանչիւր օր քաշս պակասում է։ Իմ նոր մտքերը անբնական են, անհիմն, անլուսն, և ես ամաչում եմ ինքս ինձանից...

— Այդտեղ հիւանդութիւնը ոչ մի դեր չի խաղում,— խօսքս կտրում է Կատիան.—ուղղակի ձեր աչքերը բացուել են և այժմ դուք տեսնում էք այն, ինչ որ առաջ, չգիտեմ ինչու, չէիք ցանկանում նկատել։ Իմ կարծիքով ամենից առաջ ձեզ հարկաւոր է վերջնականապէս կտրել կապերը ընտանիքի հետ և հեռանալ։

— Քո ասածը անհեթեթութիւն է։

— Դուք արդէն չէք սիրում նրանց, ինչ կարիք կայ կեղծելու։ Եւ միթէ այդ ընտանիք է. ոչնչութիւն։ Թէկուզ այսօր մեռնին նոքա, վաղը ոչ ոք չի նկատի նրանց բացակայութիւնը։

Կատիան արհամարհում է կնոջս ու աղջկանս նոյնքան սաստիկ, որքան նրանք ատում են սրան։ Մեր ժամանակում հազիւ թէ կարող է խօսք լինել մարդկանց միմեանց արհամարհելու իրաւունքի մասին։ Բայց եթէ դատել Կատիայի տեսակէտից և ընդունել այդ իրաւունքի գոյութիւնը, այն ժամանակ կը տեսնենք, որ նա, Կատիան, նոյնքան իրաւունք ունի արհամարհելու կնոջս և Լիզային, որքան վերջիններս նրան։

— Ոչնչութիւն են, կրկնում է նա։—Դուք ճաշել էք։ Ի՞նչպէս է, որ նրանք չեն մոռացել ձեզ հրաւիրել սեղանատուն. այդ ի՞նչպէս է, որ դեռ յիշում են ձեր գոյութեան մասին։

— Կատիա, ասում եմ ես խիստ կերպով, խնդրում եմ լռես։

— Իսկ դուք կարծում էք, թէ ինձ շատ ցանկալի է խօսել նրանց մասին, ես ուրախ կը լինէի, եթէ բոլորովին չճանաչէի նրանց։ Լսեցէք ինձ, իմ բարեկամ, թողէք ամեն բան ու հեռացէք այստեղից. գնացէք արտասահման և որքան շուտ, այնքան լաւ։

— Ի՞նչ յիմարութիւն, իսկ համալսարանը։

— Թողէք և համալսարանը։ Ի՞նչ է տալիս նա ձեզ, միենոյն է և ոչ մի օգուտ։ Ահա դասախօսում էք 30 տարի, ուր են ձեր աշակերտները. շատացել են արդեօք մեր մէջ յայտնի գիտնականները, թուեցէք խնդրեմ։ Իսկ շատացնելու

համար այն բժիշկների թիւը, որոնք շահագործում են ժողովրդի տգիտութիւնը և այդպիսով հարիւր հազարներ դիզում, իմ կարծիքով այդ բանի համար կարիք չկայ լինել տաղանդաւոր և լաւ մարդ։ Դուք այստեղ աւելորդ էք։

— Ստուած իմ, որքան դու խիստ ես, ես սարսափում եմ... դադարիր, ապա թէ ոչ կը գնամ. ես անկարող եմ պատասխանել քո այդ խիստ խօսքերին։

Ներս է մտնում աղախինը և հրաւիրում մեզ թէյ խմելու։ Ինքնաեռի շուրջը մեր խօսակցութիւնը, փառք Աստուծու, փոխւում է։ Գանգատներից յետոյ ես սկսում եմ ազատութիւն տալ իմ երկրորդ պաւաւական թուլութեանս՝ այն է, յիշողութիւններին։ Պատմում եմ Կատիային իմ անցեալի մասին և ի մեծ զարմանս՝ հաղորդում եմ նրան այնպիսի մանրամասնութիւններ, որոնց մասին նոյն իսկ չէի էլ կասկածի, թէ նրանք գոյութիւն ունին իմ յիշողութեան մէջ։ Իսկ նա զմայլուած և հպարտութեամբ լսում է ինձ ընդհատած։ Առանձնապէս ես սիրում եմ պատմել նրան, թէ ինչպէս մի ժամանակ սովորում էի սեմինարիայում և երազում համալսարան մտնելու մասին։

— Պատահում էր, զբօսնում էի ես մեր սեմինարիայի այգում... պատմում եմ ես։—Կը հասցնէր քամին արդեօք ականջիս որ և է հեռու գիշերանից հարմոնի և երգի խառնիխուռն ձայներ, և կամ թէ զընգզընգացնելով կը սլանար սեմինարիայի ցանկապատի մօտով եռաձի կառքը՝ այդ արդէն բաւական էր, որ բախտաւորութեան զգացմունքը լցնէր ոչ միայն հոգիս, այլ և ամբողջ մարմինս... Լսում եմ հարմոնի ձայնը, հեռացող զանգակների զողանջիւնը և երևակայում ինձ արդէն բժիշկ. երևակայութեանս մէջ իմ առաջ պատկերանում են մէկը միւսից գեղեցիկ ցնորքներ։ Եւ ահա, ինչպէս տեսնում ես, իմ խոհերը կատարուեցին։ Ես աւելին ձեռք բերի, քան կը համարձակուէի երազել։ Երեսուն տարի շարունակ ես եղել եմ սիրուած պրոֆէսոր, ունեցել եմ լաւագոյն ընկերներ, վայելել եմ հռչակ, սիրել եմ և այդ սիրով ամուսնացել, ունե-

ցել եմ զաւակներ... Մի խօսքով եթէ մի հայեացք ձգելու լինենք դէպի յետ, այն ժամանակ իմ ամբողջ կեանքը կը ներկայանայ մեզ մի զեղեցիկ, ներդաշնակ պատկեր... Այժմ մնում է միայն, որ չփչացնեմ վերջաբանը։ Դրա համար հարկաւոր է մեռնել մարդավարի։ Եթէ մահը իսկապէս փորձանք է, այն ժամանակ հարկաւոր է նրան դիմաւորել այնպէս, որպէս վայել է ուսուցչին, գիտնականին և քրիստոնեայ տերութեան քաղաքացուն՝ այսինքն արիութեամբ ու հանգիստ սրտով։ Բայց ես փչացնում իմ վերջաբանը, խեղդւում եմ, վազում եմ քո մօտ, խնդրում օգնութիւն, իսկ դու ասում ես. խեղդուիր, այդպէս էլ հարկաւոր է։

Միջանցքում լսւում է զանգակի ձայնը, և մի րոպէից յետ ներս է մտնում իմ ընկեր լեզուաբան Միխայիլ Ֆէօդորիչը, որ մի բարձրահասակ, պնդակազմ և յիսուն տարեկան մարդ է, խիստ ու սպիտակահեր մազերով, սև յօնքերով և ածիլած երեսով։ Նա բարի մարդ է և լաւ ընկեր. ծագում է հին ազնուական ցեղից, որ բաւականին բախտաւոր և տաղանդաւոր է ու խաղում է աչքի ընկնող դեր մեր գրականութեան ու լուսաւորութեան պատմութեան մէջ։ Նա ինքը խելացի, տաղանդաւոր և շատ կրթուած մարդ է, բայց և զուրկ չէ տարօրինակ կողմերից։ Մինչև մի որոշ աստիճան մենք բոլորս էլ տարօրինակ ենք, բայց նրա տարօրինակութիւնը ինչ որ բացառիկ բնաւորութիւն ունի, որ անվտանգ չէ իւր ծանօթների համար։ Վերջիններիս մէջ կան շատերը, որոնք Միխայիլ Ֆէօդորիչի բնաւորութեան այդ մի քանի գծերի պատճառով անտես են առնում նրա բազմաթիւ արժանիքները։

Մտնելով ներս, նա դանդաղ կերպով հանում է ձեռնոցները և խրոխտ ձայնով ասում.

— Բարև ձեզ. թէյ էք խմում. այդ ինչ լաւ է. դրսում դժոխային ցուրտ է տիրում։

Յետոյ նա նստում է սեղանի մօտ, վերցնում է իրան համար բաժակ և իսկոյն սկսում է խօսել։ Նրա խօսակցութեան ամենաբնորոշ գիծը հանաքչութիւնն է։ Ինչպէս Ճէքսպիրի դերեզմանափորների, նոյնպէս և Միխայիլ Ֆէօդորիչի բնաւորութեան մէջ փիլիսոփայութիւնը և զուարճախօսութիւնը մի տեսակ խառնուրդ են կազմում։ Նա միշտ խօսում է լուրջ բաների մասին, բայց ոչ մի ժամանակ՝ լուրջ կերպով. նրա դատողութիւնները միշտ կտրողական են, լի հայհոյանքներով, բայց խօսելու մեղմ, կոկ և ծիծաղաշարժ եղանակի շնորհիւ խօսքերը այնպէս են դուրս գալիս, որ չեն ծակում դիմացնի ականջը, և մարդ դէպի այդ շուտ է ընտելանում։

Ամենայն երեկոյ նա իր հետ բերում է հինգ, վեց անեկդոտներ համալսարանի կեանքից և սովորաբար նրանցից է սկսում, երբ նստում է սեղանի։

— Ա՜խ Աստուած, լինում են աշխարհում այնպիսի կոմիկներ, ասում է նա, մի առանձին տեսակ շարժելով։

— Ի՞նչպիսի, հարցնում է Կատիան։

— Գնում եմ այսօր դասախօսութեան և սանդուղքների վրայ հանդիպում եմ մեր NN-ին՝ այդ պառաւ ապուշին, որ իր ձիան կզակը դուրս ցցած, մարդ է որսնում զանգատուելու իր գլխացաւի, կնոջ և ուսանողների վերայ, որոնք չեն ցանկանում յաճախել նրա դասախօսութիւններին։ Էհ, մտածում եմ, տեսաւ ինձ, բանս բուրդ է։

Եւ կամ թէ սկսում է այսպէս.

— Երեկ ես ներկայ էի մեր ZZ-ի հրապարակական դասախօսութեան։ Զարմանում եմ, թէ ինչպէս մեր alma mater վստահանում է ցոյց տալ հասարակութեանը այնպիսի տխմարի, ինչպէս այդ ZZ։ Դա Եւրոպական յիմար է, որպիսին ամբողջ Եւրոպայում ցերեկը ճրագով անգամ չես գտնի։ Կարդում է, կարող էք երեակայել, այնպէս, որ կարծես թէ պաղչաքար է ծծում՝ սիւ, սիւ, սիւ... Վատ է ջոկում ձեռագիրը, մտքերը յաջորդում են միմեանց հաղիւ հաղ՝ այնպիսի արագութեամբ,

որպէս կարող է միայն ընթանալ մի վարդապետ հեծանիւին նստած. և որ ամենագլխաւորն է, ոչ մի կերպ չես կարող հասկանալ, թէ ինչ է ուզում ասել։ Ցիրում էր այնպիսի ձանձրոյթ, որ մինչև անգամ ճանճերը կարող էին սատակել։ Այդպիսի ձանձրոյթ մէկ էլ կարող է լինել համալսարանական տարեդարձի հանդիսին, երբ կարդացւում է սատանի բաժին աւանդական ճառը։

Եւ իսկոյն խօսքի թելը կտրում է և անցնում բոլորովին այլ բանի։

— Սրանից երեք տարի առաջ, ինչպէս Նիկոլայ Ստեպանիչը, յիշում է, ես կարդացի մի ճառ։ Խեղդող շոր էր. համազգեստը սեղմում էր կռնատակերս. մի խօսքով մահ էր։ Կարդում եմ կէս ժամ, մի ժամ, ժամ ու կէս, երկու ժամ... «էհ, մտածում եմ ես, փառք Աստծու, մնաց միայն տասը երես». իսկ վերջումը կային այնպիսի շորս երեսներ, որ կարելի էր բոլորովին չկարդալ, և ես յարմար էի համարում բաց թողնել։ Ուրեմն, նշանակում է կը մնար միայն վեց երես, բայց երևակայեցէք, մի փոքրիկ հայեացք ձգեցի առաջս և նկատեցի, որ առաջին կարդում իրար կողքի նստած են մի գեներալ ժապաւէնը կրծքին և մի բարձրաստիճան հոգևորական։ Խեղճերը մեռնում էին ձանձրոյթից. չքնելու համար նրանք շռում էին աչքերը և ամեն կերպ աշխատում էին ցոյց տալ, որ ուշադիր են, հասկանում են, և դուր է գալիս իրանց իմ ասածը։ Դէհ, եթէ այդպէս է, մտածում եմ ես, ահա ձեզ... և ջիգրու վերցրի ու կարդացի այն շորս երեսներն ես։

Ինչպէս բոլոր կատակասէր մարդկանց, նոյնպէս և Միխայիլ Ֆէօդորիչի խօսելու ժամանակ միայն աչքերն ու յօնքերն են ժպտում։ Նրա աչքերում այդ ժամանակ չի կարդացւում ոչ ատելութիւն և ոչ չարութիւն, այլ միայն սրութիւն՝ ազուէշային մի տեսակ խորամանկութեան հետ, որ նկատւում է միմիայն շատ շրջահայեաց մարդկանց մէջ։ Միխայիլ Ֆէօդորիչի աչքերը ունեն մի այլ առանձնայատկութիւն ևս։ Երբ

նա ընդունում է Կատիայի ձեռքից բաժակը, կամ լսում է նրա որ և է նկատողութիւնը և կամ ուղեկցում է նրան իւր հայեացքով, և երբ Կատիան մի ինչ որ բանի պատճառով դուրս է գնում սենեակից, այն ժամանակ ես նրա հայեացքում կարդում եմ ինչ որ համեստ, աղերսող և մաքուր բան...

Միխայիլ Ֆէօդորիչը վերցնում է դարանից երկու կալոշ խաղաթուղթ և սկսում վիճակ բաց անել։ Նրա հաւատացնելով մի քանի վիճակներ պահանջում են մեծ հմտութիւն և ուշադրութիւն, չնայելով սակայն, որ ինքը, թուղթ դասաւորելիս, չի դադարում ուշադրութիւնը զբաղեցնել խօսակցութեամբ։ Կատիան ուշադրութեամբ հետևում է նրա խաղաթղթերին և աւելի միմիկայով, քան խօսքերով օգնում է նրան։

Ամբողջ երեկոյին Կատիան խմում է գինի ոչ աւել, քան երկու փոքրիկ բաժակ, ես խմում եմ բաժակի մի քառորդը, իսկ մնացածը մնում է Միխայիլ Ֆէօդորիչին, որը կարող է խմել շատ և երբէք չհարբել։

Վիճակներ բանալու ընթացքում մենք վճռում ենք զանազան հարցեր, մեծաւ մասամբ բարձր կարգի, և գլխաւորապէս գիտութեանը վերաբերեալ, այն որ ամենից աւելի ենք սիրում։

— Գիտութիւնը, փառք Աստծու, արդէն ապրել է իր դարը, ասում է Միխայիլ Ֆէօդորիչը, կանգ առնելով։ Նրա վախճանը անխուսափելի է։ Այո, մարդկութիւնը արդէն կարիք է զգում փոխարինել նրան մի ուրիշ բանով. գիտութիւնը աճել է նախապաշարմունքների հողի վրայ, մնուել է նախապաշարմունքներով, և այժմ ներկայացնում է նախապաշարմունքների մի այնպիսի ուլճուած, ինչպէս էին իրանց դարը արդէն անցկացրած նրա նախնիք՝ ալքիմիա, մետաֆիզիկա և փիլիսոփայութիւնը։ Եւ իսկապէս ինչ է տուել նա մարդկանց. չէ՞ որ հէնց լուսաւորուած Եւրոպացիների և չինացիների մէջ, որոնք չունին և ոչ մի գիտութիւն, տարբերութիւնը շատ քիչ

է և այն միայն արտաքին։ Զինակիները ծանօթ չեն գիտութեան հետ, բայց ինչ են կորցնում դրանից։

— Ճանճերն էլ չունին գիտութիւն, ասում եմ ես, դրանից ինչ դուրս եկաւ։

— Ի զուր էք բարկանում, Նիկոլայ Ստեփանիչ, ես այդ ասում եմ մեր մէջ... ես աւելի զգոյշ եմ, քան դուք կարծում էք, և երբէք չեմ ասի այդ միւնոյնը հրապարակօրէն, Ատուած ոչ արասցէ։ Մասայի մէջ այն կարծիքը կայ, որպէս թէ գիտութիւնը և գեղարուեստը բարձր են երկրագործութիւնից, վաճառականութիւնից և արհեստից։ Մեր ազանդը մնում է այդ նախապաշարմունքով և մենք ձեզ հետ անկարող ենք քանդել նրան։

Վիճակի վրայ կուժ է կոտրւում և երիդասարտութեան գլխին։

— Ներկայումս շատ մանրացել է մեր հասարակութիւնը, հոգոց քաշելով ասում է Միխայիլ Փէօդորիչը։ Այլ ես չեմ խօսում իդէալների և այլ բաների մասին, գոնէ կարողանային խելացի կերպով գործադրել ժամանակը և մտածել։ Ահա և իսկապէս տեղն է գալիս բանաստեղծի խօսքերը. «Տխրութեամբ նայում եմ ես մեր մատաղ սերնդի վերայ»։

— Այո, սարսափելի մանրացել են, համաձայնւում է նրա հետ Կատիան։ Ասացէք, խնդրեմ, վերջին հինգ, տասը տարուայ ընթացքում ձեզ մօտ եկել է գոնէ մէկը աչքի ընկնող։

— Ես գոնէ այդպիսի բան չեմ յիշում։

— Իմ կեանքում շատ եմ տեսել ուսանողներ, երիտասարդ ուսումնականներ, դերասաններ... Եւ ինչ... երբէք չեմ պատահել ոչ միայն հերոսի կամ տաղանդի, այլ նոյն իսկ մի հետաքրքիր մարդու։ Ամեն ինչ անգոյն է, անձիրք և լի յաւակնութեամբ։

Սերնդի մանրացման մասին եղած բոլոր այդ խօսակցութիւնները ամեն անգամ իմ վրայ թողնում են այնպիսի տպաւորութիւն, որ կարծես պատահմամբ վատ խօսք եմ լսում

աղջկաս մասին։ Ինձ համար վիրաւորական են այդ մեղադրանքները, որոնք հիմնւում են արդէն վաղուց ջախջախուած ընդհանուր հիմունքների և այնպիսի սովորական դարձած խօսքերի, ինչպէս են մանրացումն և իդէալների բացակայութիւն։ Ամեն մի մեղադրանք, արտայայտուած նոյն իսկ կանանց հասարակութեան մէջ, պէտք է ձևակերպուած լինի կարելոյն չափ որոշ, հակառակ դէպքում նա կը լինի ոչ թէ մեղադրանք, այլ դադարկ բամբասանք, որ վայել չէ բարեկիրթ մարդկանց։

Ես ծեր եմ և արդէն ծառայում եմ 30 տարի, բայց չեմ նկատել ոչ մանրացումն, ոչ իդէալների բացակայութիւն. ներկան ոչնչով վատ չէ թւում ինձ անցեալից։ Իմ շվեյցար Նիկոլայը, որի փորձառութիւնը ներկայ դէպքում ունի իր արժէքը, ասում է, որ այժմեան ուսանողները ոչ լաւ են և ոչ վատ առաջիններից։

Եթէ մէկը հարցնէր ինձ, թէ այժմեան աշակերտների մէջ ինչ բան քեզ դուր չի գալիս, ես կը պատասխանէի կարճ, բաւականաչափ պարզ, բայց և ոչ միանգամից։ Նրանց պակասութիւնները ես գիտեմ, ուստի կարիք չկայ դիմել անորոշ դարձուածների։ Ինձ դուր չի գալիս, որ նրանք ծխում են, գործ են ածում ոգելից խմիչքներ, ուշ են ամուսնանում, որ նրանք անհոգ են և յաճախ այն աստիճան անտարբեր, որ չեն նկատում քաղցածութեան մատնուած ընկերներին և չեն վճարում իրանց պարտքերը չքաւոր ուսանողներին նպաստող ընկերութեանը։ Նրանք չգիտեն նոր լեզուները և Ռուսերէն խօսում են սխալ։ Վաղուց չէ, հէնց երեկ՝ ընկերս, որ կարդում է առողջապահութեան դասախօսութիւններ, գանգատւում էր, որ ստիպուած է կարդալ երկու անգամ աւելի, որովհետև ունկնդիրները վատ գիտեն ֆիզիքան և բոլորովին ծանօթ չեն օթերեոյթաբանութեան հետ։ Նրանք սիրով ենթարկւում են նորագոյն և մինչև անգամ վատ հեղինակների ազդեցութեանը ու բոլորովին անտարբեր են դէպի այնպիսի կլասիկներ, ինչ-

պէս Ճէքսոպիրը, Մարկոս Աւրելիոսը, Եպեկտետը կամ Պասկալը։ Եւ այն հանգամանքը, որ նրանք չեն կարողանում մեծը փոքրից տարբերել, ամենից աւելի վկայում է նրանց անփորձութեան մասին։ Բոլոր խրթին հարցերը, որոնք քիչ թէ շատ կրում են հասարակական բնաւորութիւն, ուսանողները վճռում են թերթիկներով, բայց ոչ գիտական հետազօտութեամբ և փորձով, չնայելով, որ այս վերջինս գտնւում է նրանց լիակատար տրամադրութեան տակ, և աւելի համապատասխան է նրանց կոչումին։ Նոքա սիրով դառնում են օրդինատոր, ասսիստենտ, լաբարանտ և պատրաստ են մինչև քառասուն տարի բռնել այդ տեղերը, թէև ինքնուրոյնութիւն, ազատ կամք, անձնական նախանձեռնութիւն ոչ պակաս հարկաւոր են գիտութեան մէջ, որքան արհեստների և վաճառականութեան մէջ։ Ես ունիմ ուշակերտներ և ունկնդիրներ, բայց ոչ օգնականներ ու ժառանգներ, և դրա համար ես սիրում եմ նրանց, բայց ոչ հպարտանում նրանցով. և այլն, և այլն...

Այդ և դրա նման պակասութիւնները, որքան էլ որ շատ լինեն, վատաբեռ և դիւրաբորբոք կարող են դարձնել միմիայն փորրոհոգի և երկչոտ մարդկանց։ Բոլոր այդ պակասութիւնները ունին պատահական և անցողական բնաւորութիւն։ Նրանք ծնունդ են կեանքի պայմանների։ Բաւական է որ և է տասը տարի, որ նրանք անհետանան բոլորովին և կամ տեղի տան նոր պակասութիւնների, առանց որոնց անկարելի է, և որոնք ակներև է կը վախեցնեն փոքրոհոգիներին։

Սոյնանման ուսանողների պակասութիւնները պատճառում են ինձ սրտնեղութիւն, բայց այդ ոչինչ է, համեմատած այն ուրախութիւնների հետ, որ ես զգում եմ արդէն 30 տարի, երբ խօսում եմ աշակերտների հետ, կամ կարդում որ և է բան, և կամ ուշադիր եմ լինում նրանց փոխադարձ յարաբերութիւններին ու համեմատում եմ այն մարդկանց հետ, որոնք այդ շրջանից չեն։

Միխայիլ Ֆէօդորիչը չարախօսում է, Կատիան լսում և երկուսն էլ չեն նկատում, թէ ինչպիսի խոր անդունդ է քաշում նրանց փոքր առ փոքր այն՝ ըստ երևոյթին անմեղ զբաղարճութիւնը, ինչպէս է մերձաւորին դատելը։ Նրանք չեն զգում, թէ ինչպէս հասարակ խօսակցութիւնը աստիճանաբար դառնում է ծաղր ու ծանակ և թէ ինչպէս մինչև անգամ սկսում են գործադրել զանազան բամբասանքի միջոցներ։

Գատահում են երբեմն ֆիստ ծիծաղաշարժ տիպեր, ասում է Միխայիլ Ֆէօդորիչը։—Երեկ ես մեր Եգոր Պետրովիչի մօտ էի. այնտեղ էր և մի բժիշկ-ուսանող III կուրսից։ Դէմքը բարեհամբոյր էր, ճակատին կրում էր խոհունակութեան կնիքը։ Մեր մէջ սկսուեց խօսակցութիւն։ «Ահա այսպիսի բաներ, երիտասարդ, ասում եմ ես, կարդացել եմ, թէ ինչպէս մի գերմանացի, որի ազգանունը չեմ յիշում, մարդկային ուղեղից հանել է նոր՝ ապուշութեան ալկոլոիդ»։ Եւ ինչ էր կարծում, հաւատաց և մինչև անգամ դէմքի վրայ արտայայտեց յարգանք։

— Մի քանի օր դրանից առաջ գնացել էի թատրոն. նստում եմ. հէնց առաջս հետևեալ կարգում բազմել են երկուսը՝ մէկը «изъ насихъ», ըստ երևոյթին իրաւաբանական մասնաճիւղից, երկրորդը փարթամ և խրճրճուած մազերով բժիշկ-ուսանող։ Վերջինս հարբած էր, ինչպէս կօշկակար. նա բեմի վրայ չէր դարձնում և ոչ մի ուշադրութիւն ու նիրհում էր օրօրուելով. բայց հէնց որ որ և է դերասան սկսում էր բարձր արտասանել մենախօսութիւն, կամ թէ հէնց այնպէս բարձրացնում էր ձայնը, մեր բժիշկ-ուսանողը վեր էր թռչում, կողքից հրում էր ընկերոջը և հարցնում. «Ի՞նչ է նա ասում. Бла-а-родно?»—Благородно, պատասխանում էր «изъ насихъ»։—«Брраво! բղաւում էր ուսանողը, Бла-ародно! Браво!» Ցեսնում էր այդ հարբած ապուշը եկել էր թատրոն ոչ թէ դեղարուեստի համար, այլ «бла-а-родно» խօսքի համար։

Իսկ Կատիան լսում է և ծիծաղում։ Նրա ծիծաղը մի տեսակ տարօրինակ է. ներշնչումը արագ և համաչափ յաջոր-

դում է արտաշնչմանը և միևնոյն ժամանակ դէմքի վրայ մերթ լայնանում են և մերթ սեղմում քթածակերը։ Ես ընկճւում եմ հոգով, բայց չգիտեմ ինչ ասել։ Համբերութիւնից դուրս գալով, ես տաքանում եմ, վեր ցատկում տեղից և բղաւում.

— Լռեցէք վերջապէս, ինչ էք նստել այդտեղ, որպէս երկու դոդոշ և թունաւորում էք օդը ձեր շնչով։ Բաւական է։

Եւ չսպասելով, երբ կը վերջացնեն շարախօսելը, ես պատրաստւում եմ տուն գնալու։ Արդէն ուշ էլ է՝ ժամը տասնեմին է։

— Իսկ ես մի փոքր կա կը նստեմ. թոյլ տալիս էք, Եկատերինա Վլադիմիրովնա, ասում է Միխայիլ Ֆէօդորիչը։

— Թոյլ եմ տալիս։

— Bene: Այդ դէպքում հրամայեցէք դարձեալ մի շիշ գինի բերել։

Երկուսն էլ մոմերով ուղեկցում են ինձ մինչև միջանցքը, և մինչդեռ ես հագնում եմ վերարկուս, Միխայիլ Ֆէօդորիչը ասում է.

— Վերջին ժամանակ, Նիկոլայ Ստեպանիչ, սաստիկ նիհարել էք և պառաւել։ Ի՞նչ է պատահել ձեզ, հիւանդ էք։

— Այո, մի փոքր տկար եմ։

— Եւ չի բժշկւում,—ավելացնում է Կատիան յօնքերը կիտած։

— Ինչու չէք բժշկւում, մինթէ կարելի է այդպէս։ Իրան պահպանողին, սիրելիս, Աստուած էլ կը պահպանէ։ Բարևեցէք ձեր ընտանիքին, ներողութիւն խնդրէք, որ այսքան երկար չեմ կարողացել այցելել նրանց։ Մօտ օրերս արտասահման եմ գնալու և անպատճառ կը գամ մնաս բարև անելու։ Եկող շաբաթ գնում եմ։

Կատիայի մօտից ես դուրս եմ գալիս զրզռուած և անբաւական։ Հիւանդութեանս մասին եղած խօսակցութիւնները երկիւղ են ներշնչել ինձ։ Ինքս ինձ հարցնում եմ. և իսկապէս չբժշկւեմ արդեօք ընկերներիս մէկի մօտ։ Եւ իսկոյն երևակայում

եմ, թէ ինչպէս ընկերս, ընդունելով ինձ, լռելյայն կը հեռանայ դէպի պատուհանը, կը մտածէ մի փոքր և ապա դառնալով դէպի ինձ և աչխատելով, որ դէմքի վրայ չկարդամ ճշմարտութիւնը, կ'ասէ անտարբեր կերպով.

— Առ այժմ չեմ նկատում մի առանձին բան, բայց այնու ամենայնիւ, կօլլեգա, խորհուրդ կը տայի ձեզ թողնել պարապմունքը... Եւ այդ կը զրկէ ինձ իմ վերջին յոյսից։ Ո՞վ չունի յոյսեր։ Հէնց այժմ, երբ ես աչխատում եմ ինքս ինձ որոշել իմ հիւանդութիւնը և բժշկել, ժամանակ առ ժամանակ իմ մէջ յոյս է ներշնչում այն միտքը, թէ ես խաբուած եմ տգիտութիւնից, սխալւում եմ շաքարի, սպիտակաձևի, սրտի և երկու անգամ նկատածս ջրդողութեան վերաբերմամբ. երբ ես մաղձալից մարդու ջանասիրութեամբ սկսում եմ թերթել վիրաբանութեան վերաբերեալ դասագրքերը և ամենայն օր փոխել դեղերը, ինձ դեռ թւում է, որ ես կը հանեմ որ և է մխիթարական հետևանքի։

Ծածկուած է արդեօք երկինքը ամպերով, թէ փայլում են այնտեղ լուսինն ու աստղերը, այդ միևնոյն է ինձ համար. ամեն անգամ վերադառնալիս ես նայում եմ երկնքի վրայ և մտածում միայն այն մասին, թէ շուտով մահը կը գրկէ ինձ։ Թւում է, թէ իմ մտքերը այդ ժամանակ նոյնքան խորն են, ինչպէս երկինքը՝ պայծառ և ապշեցնող... Բայց ոչ։ Ես մտածում եմ իմ մասին, կնոջս, Լիզայի, Գնեկկերի, ուսանողների և ընդհանրապէս մարդկանց մասին։ Մտածմունքներս վատ են և չնչին։ Թւում է թէ ինքս խաբում եմ ինձ, և այդ ժամանակ իմ աչխարհայեացքը կարող է արտայայտուել նշանաւոր Արակչեևի խօսքերով, որ գրել էր նա մտրիմ բարեկամներին ուղղած նամակներից մէկում՝ «Ոչ մի լաւ բան աչխարհումս առանց վատ կողմի չէ. և միշտ վատն աւելի շատ, քան լաւը»։ Այսինքն, ամեն ինչ դարչելի է. ինչու համար ապրել. այն 62 տարին, որ արդէն լրացրել եմ, պէտք է համարել կորած։ Ես կանգ եմ առնում այդ մտքերի վերայ և աչխատում ինձ հա-

մոզել, որ նրանք պատահական են, ժամանակաւոր և իմ մէջ խոր արմատ գցած չեն, բայց իսկոյն ինձ հարց եմ տալիս...

— Եթէ այդպէս է, ուրեմն ինչն է ամեն երեկոյ քարշում ինձ դէպի այդ երկու դռդոշները։

Եւ ես երդւում եմ այլ ես ոչ մի ժամանակ չգնալ Կատիայի մօտ, թէև համոզուած եմ, որ վաղը նորից կը գնամ։

Հանելով տուն ես խփում եմ դռան զանգակը և այդ ժամանակ, ինչպէս և յետոյ՝ սանդուղքով բարձրանալիս, զգում եմ, որ արդէն չունիմ ընտանիք և ոչ էլ ցանկութիւն վերադարձնել նրան։ Գարդ է, որ նոր՝ Արակչեան մտրերը, բուն են դրել իմ մէջ ոչ թէ պատահմամբ ու ժամանակաւորապէս, այլ ամբողջ էութեամբս տիրապետում են ինձ։ Ճնշուած այդ մտածմունքների տակ, հաղիւ հազ ծուլութեամբ շարժելով անդամներս, որ կարծես հազար փութ ծանրացած լինին, ես պառկում եմ անկողնումս և շուտով քնում։

Իսկ յետոյ՝ դարձեալ անքնութիւն...

IV.

Գալիս է ամառը... Կեանքը փոխւում է...

Մի գեղեցիկ առաւօտ Լիզան ներս է մտնում և հանաքի տալով ասում.

— Գնանք, ձերդ գերազանցութիւն, արդէն պատրաստ է։

Եւ ինձ՝ գերազանցութեանս դուրս են բերում փողոց, նստացնում կառքը և տանում։ Ես գնում եմ և անգործութիւնից աջ ու ձախ կարդում եմ ցուցակները։ Տրակտիր բառից դուրս է գալիս բիտկարտ, որ շատ յարմարւում է բարոնական ազգանուն, ինչպէս օրինակ բարոնուհի Բիտկարտ։ Ապա մենք դուրս ենք գալիս դաշտը։ Ահա և գերեզմանատունը, որ չի թողնում ինձ վրայ և ոչ մի տպաւորութիւն, թէև շուտով պառկած կը լինիմ այնտեղ։ Դաշտից մտնում ենք անտառ և նորից դուրս գալիս դաշտը։ Երկու ժամուայ ճանապարհից յետոյ մենք հասնում ենք ամառանոց, և ինձ՝ նորին գերազանցութեանս տեղաւորում են տան ներքին յարկի մի փոքր, բայց սրտաբաց սենեակում որի պատերը ծածկուած են կապոյտ պաստառներով։

Գիշերները շարունակւում է առաջուայ նման անքնութիւնը. բայց այժմ սովորութեանս հակառակ առաւօտները շուտ չեմ վեր կենում. լուսադէմին ես լինում եմ մի տեսակ թմրած դրութեան մէջ՝ ոչ արթուն եմ լինում և ոչ քնած, բայց տեսնում եմ երազներ։ Կէսօրին վեր եմ կենում և սովորութեանս համաձայն նստում սեղանի մօտ։ Այժմ արդէն ես այլ ես չեմ պարապում և միայն ուշադրութիւնս զբաղեցնում եմ ֆրանսիական գրքերով, որ ուղարկում է ինձ Կատիան։ Իհարկէ աւելի ազգասիրաբար կը լինէր կարդալ Ռուս հեղինակները, բայց պէտք է խոստովանած, որ ես առանձին հակումն չեմ զգում դէպի Նրանց։ Բացի երկու, երեք գրական հին վաստակներից, մեր այժմեան ամբողջ գրականութիւնը ինձ թւում է, թէ գրականութիւն չէ, այլ մի այնպիսի ձեռագործ արտադրութիւն, որ գոյութիւն ունի միայն նրա համար, որպէս զի Նրան քաջալերեն, բայց ոչ սիրով օգտուին Նրա պտուղներից։ Ամենալաւ ձեռագործն անդամ չի կարելի համարել նշանաւոր և անկեղծութեամբ գոյել առանց «բայց»ի. նոյնը կարելի է ասել և բոլոր այն գրական նորելուկների մասին, որոնց ես կարդացել եմ վերջին 10—15 տարուայ ընթացքում։ Ոչ մի նշանաւոր գրուածք առանց «բայց»ի չի կարելի անցկենալ։ Խելացի է, ազնիւ, բայց անտաղանդ. տաղանդաւոր է, ազնիւ, բայց ոչ խելացի և կամ վերջապէս՝ տաղանդաւոր է, խելացի, բայց ոչ ազնիւ։

Ես չեմ ասում, որ ֆրանսիական գրքերը և տաղանդաւոր են, և խելացի, և ազնիւ։ Նրանք էլ բաւականութիւն չեն տալիս ինձ, բայց Նրանք այնպէս ձանձրալի չեն, ինչպէս Ռուսականը։ Անձնական ազատութեան զգացումը, որ ստեղծագործութեան գլխաւոր տարրն է կազմում, նրանց մէջ հաղուագիւտ

չէ, այն ինչ Ռուս հեղինակները զուրկ են դրանից։ Ես չեմ յիշում ոչ մի այնպիսի նոր գրուածք, որի մէջ հեղինակը հէնց առաջին երեսներից աշխատած չլինի կաշկանդել իրան զանազան տեսակ պայմաններով և խղճի թելադրութիւններով։ Մէկը վախում է խօսել մերկ մարմնի մասին, մի ուրիշը կապել է իր ձեռքերն ու ոտները հոգեբանական վերլուծութեամբ. երկրորդին հարկաւոր է ջերմ վերաբերմունք դէպի մերձաւորը, չորրորդը դիտմամբ ամբողջ երեսներ լցնում է ընութեան նկարագրութեամբ, որպէս զի չկասկածեն տենդենցիոզ լինելու մէջ... Մէկը ցանկանում է իւր հեղինակութիւնների մէջ անպատճառ լինել քաղաքացի, երկրորդը՝ ազնուական և այլն։ Չկայ նրանց մէջ ոչ ազատութիւն և ոչ քաջութիւն գրելու այն, ինչ որ ցանկանում են, հետևաբար և չկայ ստեղծագործութիւն։

Այդ բոլորը վերաբերւում են գրականութեան բանաստեղծական և վիպական ճիւղին, իսկ ինչ վերաբերւում է Ռուսերէն լուրջ յօդուածներին, ինչպէս՝ օրինակ, սոցիալոգիայի, գեղարուեստի և այլ բաների մասին, ես չեմ կարդում ուղղակի վախից։ Մանուկ և երիտասարդ հասակումս ես ինչ որ անհասկանալի պատճառով երկիւղ էի կրում շվէյցարներից և թատրոնական սպասաւորներից։ Ես այժմ էլ վախում եմ նրանցից։ Ասում են, որ ահռելի է թւում միայն այն, ինչ որ անհասկանալի է։ Եւ իրաւ, շատ դժուար է հասկանալ, թէ ինչու համար շվէյցարները և թատրոնական սպասաւորները այդքան ինքնահաւան են և վերին աստիճանի կոպիտ, անքաղաքավարի... Ռուսերէն որ և է լուրջ յօդուած կարդալիս, ես զգում եմ նոյն անհասկանալի երկիւղը։ Անսովոր փքուն ոճը, մեծ հեղինակութեամբ դատարկաբանութիւններ անելը, անփոյթ, համարեա արհամարհական վարմունքը դէպի օտար հեղինակների գրուածքները՝ այս բոլորը ինձ համար անհասկանալի են, սարսափելի և նման չեն այն համեստ ոճին, որին ես ընտելացել եմ կարդալով մեր բժիշկների և բնագէտների գրուածքները։ Ինձ համար ծանր է կարդալ ոչ միայն յօդուածները, այլ նոյն իսկ թարգմանութիւնները, որ անում են և կամ խմբագրում Ռուս լուրջ մարդիկ։ Յառաջաբանների պարծենկոտ, սիրալիր տօնը, թարգմանչի չափից շատ նկատողութիւնները, որ խանգարում են ինձ նոյն իսկ կենդրոնանալ, հարցական նշանները և «sic» չակերտների մէջ, որ ցրուած են գրքի կամ յօդուածի ամեն երեսներում առատաձեռն թարգմանչի ձեռքով, այդ ամենը ես համարում եմ ոճիր ընդդէմ հեղինակի և իմ՝ որպէս ընթերցողի ինքնուրոյնութեան դէմ։

Մի անգամ ես հրաւիրուած էի նահանգական դատարանը, որպէս էկսպերտ։ Ընդմիջումին իմ ընկեր էկսպերտներից մէկը դարձրեց իմ ուշադրութիւնը դատախազի կոպիտ վարմունքի վրայ դէպի մեղադրեալները, որոնց մէջ կային և երկու ինտիլիգենտ կանայք։ Իմ կարծիքով ամենեին չափազանցութեան մէջ չեմ ընկել պատասխանելով ընկերոջս, որ այդ վարմունքը աւելի կոպիտ չէ, քան այն, որով վերաբերւում են լուրջ գրուածքների հեղինակները իրար. և իսկապէս, այդ յարաբերութիւնները այնքան կոպիտ են, որ միայն ցաւելով կարելի է յիշել նրանց մասին։ Դէպի իրար և դէպի այն գրողները, որոնց քննադատում են, նրանք վերաբերւում են կամ չափից աւելի յարգանքով, չխնայելով նոյն իսկ իրանց արժանաւորութիւնը, կամ թէ ընդհակառակը. պախարակում են աւելի համարձակ, քան ես այս օրագրութեան մէջ իմ ապագայ փեսայ Գնեկկերին։ Լուրջ յօդուածների սովորական զարդարանքը կազմում են հեղինակի ամեն տեսակ մեղադրանքները դէպի դիմացինի անմաքուր դիտումների և մինչև անգամ քրէական յանցանքների նկատմամբ։ Իսկ այդ է ultima ratio, ինչպէս սիրում են արտայայտել իրանց յօդուածներում երիտասարդ բժիշկները։ Այդ յարաբերութիւնները անկասկած ազդեցութիւն կունենան մատաղ գրողների ընաւորութեան վերայ, ուստի և բոլորովին զարմանալի չէ, որ վերջին 10--15 տարուայ ընթացքում մեր վիպական և բանաստեղծական գրականութեան

մէջ լոյս տեսած բոլոր նոր գրուածքներում հերոսները խմում են շատ արագ, իսկ հերոսուհիները բաւականաչափ ժուժկալ չեն։

Կարդում եմ ֆրանսերէն գրքերը և մտիկ տալիս բաց լուսամուտից, որտեղից երևում են ցանկապատի ժանիքները, երկու-երեք բարակ ծառեր, իսկ ցանկապատից այն կողմ ձգւում է ճանապարհը, ապա դաշտը և յետոյ մի լայն շերտ փշատերև անտառների։ Հաճոյք է պատճառում ինձ, երբ որ և է մանուկ և աղջիկ՝ երկուսն էլ սպիտակահեր ու պատառոտած շորերով, բարձրանում են մագլցելով ցանկապատը և ծիծաղում իմ ճաղատ գլխի վերայ։ Նրանց փայլուն աչքերում ես կարդում եմ. «Նայիր, քաչալը»։ Սրանք հաւանականաբար միակ մարդիկն են, որոնց համար ոչ մի նշանակութիւն չունին իմ հռչակն ու աստիճանը։

Այցելուներ այժմ ամենայն օր չեն լինում ինձ մօտ։ Կը յիշեմ միայն Նիկոլայի և Պետր Իգնատիչի այցելութեան մասին։ Նիկոլայը գալիս է ինձ մօտ սովորաբար տօն օրերին, որպէս թէ գործով, բայց աւելի շուտ տեսակցութեան համար։ Գալիս է նա չափազանց ուրախ տրամադրութեամբ, մի բան, որ երբէք չի պատահում նրա հետ։

— Ի՞նչ ունիս ասելու, հարցնում եմ ես, դուրս գալով նախասենեակը։

— Ձերդ գերազանցութիւն, ասում է նա, սեղմելով ձեռքը կրծքին և բերկրութեամբ հայեացքը ուղղելով դէպի ինձ։— Ձերդ գերազանցութիւն, Աստուած ինձ պատժէ, կայծակը շանթահար անէ հէնց այս տեղում։ Գաուդէամուս իգիտուր իւվենեստուս...

Եւ նա ջերմ կերպով համբուրում է ուսերս, թևերս և հագուստիս կոճակները։

— Ի՞նչպէս, համալսարանում ամեն ինչ իր կարգին են, հարցնում եմ ես։

— Ձերդ գերազանցութիւն, ինչպէս ճշմարիտ...

Եւ նա շարունակում է երդուել առանց որ և է կարիքի, մինչև որ ձանձրացնում է ինձ, և ես ուզարկում եմ նրան քահանաց ճաշելու։ Պետր Իգնատիչը այցելում է ինձ նոյնպէս տօն օրերին, բացառապէս նրա համար, որ տեղեկանայ առողջութեանս մասին։ Սովորաբար նա նստում է սեղանի մօտ համեստ և խոհուն դիրք բռնած, չհամարձակուելով ոտը ոտի վրայ դնել, կամ յենուել սեղանին։ Նա բոլոր ժամանակը հանդարտ և միահաւասար ձայնով պատմում է ինձ զանազան, իր կարծիքով, շատ հետաքրքիր և աչքի ընկնող նորութիւններ, քաղած ամսագրերից և գրքերից։ Բոլոր այդ նորութիւնները նման են մէկ մէկու մօտաւորապէս հեռաւոր բովանդակութեամբ։ Մի ֆրանսիացի արել է գիւտ. մի ուրիշը՝ գերմանացի բռնել նրան, ապացուցանելով, որ այդ գիւտը դեռ արուած էր 1870 թ. մի ինչ որ ամերիկացու ձեռքով, իսկ մի երրորդը, նոյնպէս գերմանացի, խորամանկութեամբ գերազանցել է երկուսին էլ, ապացուցանելով, որ նրանք խաբուսանքի զոհ են դառել ընդունելով օդի մէջ եղած մանր գնդիկները մաքի պիտանի տեղ։ Պետր Իգնատիչը մինչև անգամ, երբ ցանկանում է ծիծաղացնել ինձ, պատմում է երկար, հանդամանօրէն, կարծես դիսերտացիա է պաշտպանում. մանրամասնաբար թուում է գրական աղբիւրները, որոնցից օգտուել է, աշխատելով միևնոյն ժամանակ ճիշտ հաղորդել ամսագրերի թուերը, հանդէսների համարները ու անունները։ Պտի անունը յիշելիս պարզապէս չի ասում Պտի, այլ անպատճառ Ժան Ժակ Պտի։ Պատահում է երբեմն, որ նա մնում է մեզ մօտ ճաշելու և այն ժամանակ նա ամբողջ ճաշուայ ընթացքում շարունակ պատմում է նոյն աչքի ընկնող պատմութիւնները, որ բոլոր ճաշողների վերայ բերում է թմրութիւն։ Եթէ յանկարծ Գնեկկերը և Լիզան խօսք են բաց անում խուսափանքի, Բրամսի և Բախի մասին, նա ամաչում է և համեստութեամբ կախ դցում հայեացքը։ Նրա համար ամօթ է, որ ինձ և իրան

նման լուրջ մարդկանց ներկայությանը խոսում են այնպիսի դատարկ բաների մասին։

Իմ այժմեան հոգեկան դրությունս այնքան ծանր է, որ հինգ րոպէ ևս բաւական է, որ նա ձանձրացնէ ինձ այնպէս, կարծես մի ամբողջ դար տեսնում և լսում եմ նրան։ Ես ատում եմ խեղճին։ Նրա հանդարտ, միակերպ ձայնից և գրական լեզուից ես մաշւում եմ, պատմությունից՝ բլթանում։ Նա տածում է դէպի ինձ ամենալաւ զգացումներ և խոսում է ինձ հետ միմիայն նրա համար, որ բաւականություն պատճառէ ինձ, իսկ ես վարձատրում եմ նրանով, որ յամառ կերպով նայում եմ նրա աչքերին, կարծես ցանկանում եմ հիպնոսացնել նրան, և ասում եմ մտքիս մէջ. «հեռացիր, հեռացիր, հեռացիր...

Քանի որ նա նստած է լինում ինձ մօտ, ես ոչ մի կերպ չեմ կարողանում բաժանուել այն մտքից, թէ շատ կարելի է որ երբ ես մեռնեմ, իմ տեղը նշանակեն սրան. և իմ խեղճ լսարանը ներկայանում է ինձ մի օձիս, որի մէջ չորացել է գետակը, և ես աւելի անսիրալիր են դառնում դէպի Պետր Իգնատիչը, կարծես նա լինի մեղաւոր այդ մտքերիս համար և ոչ թէ ես։ Երբ նա սովորութեան համեմատ սկսում է գովաբանել գերմանացի ուսումնականներին, ես այլ ևս չեմ ծաղրում բարեսրտությամբ, ինչպէս առաջ, այլ յոնքերս կիտած քրթմնջում եմ.

— Էշեր են ձեր գերմանացիները։

Այս նման է այն բանին, ինչպէս մէկ անգամ հանգուցեալ պրոֆէսոր Նիկիտ Կրելովը Պիրոգովի հետ լողանալիս Բևելում, բարկանալով ջրի վրայ, որ սաստիկ պաղ է, ասաց. «Անպիտան են գերմանացիները»։ Վարւում եմ ես Պետր Իգնատիչի հետ վատ, և միայն այն ժամանակ, երբ նա գնում է և ես պատուհանից տեսնում եմ ցանկապատի այն կողմում փայլփլող նրա մոխրագոյն գլուխը, ցանկություն եմ զգում կանչել նրա յետևից և ներողություն խնդրել։

Ճաշը այժմ անցնում է աւելի ձանձրալի, քան ձմեռը։ Նոյն Գնեկկերը, որին ես այժմ արհամարհում եմ և ատում, ճաշում է ինձ մօտ համարեա ամենայն օր։ Առաջ նրա ներկայությունը ինձ հանդուրժելի էր և ես լռում էի, իսկ այժմ թոյլ եմ տալիս նրա հասցէին ուղղել կծու-կծու խօսքեր, որոնցից կարմրում են կինս և Լիզան։ Անձնատուր լինելով չար զգացմունքին, ես երբեմն ասում եմ յիմարություններ, չհասկանալով, թէ ինչու եմ ասում։ Այսպէս, մէկ անգամ ես երկար նայեցի արհամարհանքով Գնեկկերի վերայ և առանց որ և է պատճառի բացականչեցի.

Արծիւները կարող են հաւերից էլ ցած իջնել,
Բայց հաւերը ամպերին երբէք չեն կարող հասնել...

Ու ամենից ցաւալին այն է, որ հաւ Գնեկկերը աւելի խելացի է արծիւ պրոֆէսորից։ Գիտենալով, որ կինս և աղջիկս իր կողմիցն են, նա բռնում է այսպիսի դիրք. իմ սուր խայթոցներին պատասխանում է ներողամիտ լռությամբ, կամ թէ բարեսրտությամբ ծաղրելով ինձ վրայ։ Պէտք է զարմանալ, թէ որ աստիճանի մարդ կարող է մանրանալ։ Ճաշուայ բոլոր ընթացքում ես խորհում եմ այն բանի մասին, թէ ինչպէս մի ժամանակ կը պարզուի, որ Գնեկկերը մի բախտախնդիր մարդ է, ինչպէս կինս և Լիզան կը հասկանան իրանց սխալը, և ես կը սկսեմ ծաղրել նրանց վրայ։ Զարմանալին այն է, որ այդպիսի անտեղի մտքեր իմ մէջ տեղի են ունենում այն ժամանակ, երբ մի ոտով արդէն կանգնած եմ գերեզմանում։

Պատահում են այժմ և թիւրիմացություններ, որոնց մասին առաջ միայն լսելով դաղափար ունէի։ Որքան էլ որ ամօթալի է ինձ համար, բայց և այնպէս կը նկարագրեմ դրանցից մէկը, որ տեղի ունեցաւ մօտ օրերս ճաշից յետոյ։

Նստած եմ սենեակումս և ծխում։ Իր սովորութեան համաձայն ներս է մտնում կինս, նստում է և սկսում խօսել այն մասին, թէ լաւ կը լինէր, քանի որ եղանակը տաք է և

ազատ ժամանակ կայ, գնալ Խարկով և տեղեկանալ, թէ ինչ մարդ է այդ Գնեկկերը։

— Լաւ, կը գնամ...—համաձայնւում եմ ես։

Եւ կինս գոհ ինձանից վեր է կենում և շարժւում դէպի դուռը, բայց խսկոյն և ետ թ յետ է դառնում։

— Ի դէպ մի խնդիր ևս։ Գիտեմ, որ կը բարկանաս, բայց և այնպէս իմ պարտականութիւնն է նախազգուշացնել քեզ... Ներիր ինձ, Նիկոլայ Ստեպանիչ, բայց արդէն մեր բոլոր ծանօթները և հարևանները սկսել են խօսալ, որ դու շատ շուտ-շուտ ես յաճախում Կատիայի մօտ։ Չեմ ժխտում, նա խելացի է, զարգացած. նրա հետ հաճելի է ժամանակ անցկացնելը, բայց քո տարիքի և հասարակական դիրքի նկատմամբ այդ տարօրինակ է... Մանաւանդ, որ Կատիան այնքան էլ լաւ համբաւ չունի...

Ամբողջ արիւնս մէկ անգամից գլուխս է խփում, աչքերիցս կրակ է ցայտում. ես վեր եմ թռչում և, երկու ձեռքով բռնած գլուխս, խփում եմ ոտքերս յատակին և բղաւում արտասովոր ձայնով.

— Թողէք ինձ, թողէք, թողէք։

Երևի իմ դէմքը ահռելի է և ձայնս տարօրինակ, որ կինս յանկարծ գունատւում է և բարձր, յուսահատական ճիչ արձակում։ Մեր աղաղակի վրայ ներս են վազում Լիդան, Գնեկկերը և յետոյ Եգորը...

— Թողէք ինձ, ապոպակում եմ ես, գնացէք, թողէք ինձ։

Ոտքերս թուլանում են, կարծես ամենևին չլինին, ես զգում եմ, որ ընկնում եմ մէկի ձեռքերի վրայ, յետոյ մի քանի վայրկեան լսում եմ լացի ձայն և ապա ուշաթափւում, որ տևում է երկու-երեք ժամ։

Այժմ Կատիայի մասին։ Նա գալիս է ինձ մօտ ամենայն օր իրիկնադէմ, և այս իսարիկ չեն կարող չնկատել թէ հարևանները և թէ ծանօթները։ Մի բոպէով ներս է մտնում և

վերցնում ինձ իր հետ զբօսնելու։ Կատիան այժմ ունի սեփական ձի և նոր կառք, որ գնել է այս ամառը։ Ընդհանրապէս նա ապրում է շռայլ. վարձել է թանկագին և բոլորովին առանձին ամառանոց մեծ այգիով և տեղափոխել է այնտեղ քաղաքում ունեցած իր բոլոր կահ-կարասիքը, ունի երկու ադախին, կառապան... Ցաճախ ես հարցնում եմ նրան.

— Կատիա, ինչով պիտի ապրես յետոյ, երբ բոլորովին կը շռայլես հայրական կարողութիւնդ։

— Շռայլելուց յետ կը տեսնենք, պատասխանում է նա։

— Այդ փողերի հետ, իմ բարեկամ, պէտք է վարուել աւելի լուրջ կերպով։ Դրանք ձեռք են բերուած լաւ մարդու ձեռքով և ազնիւ ճանապարհով։

— Գիտեմ, այդ դուք արդէն մի քանի անգամ ասել էք ինձ։

Նախ կառքը քշում ենք դէպի դաշտը, ապա փշատերև անտառի միջով, որը երևում է իմ լուսամուտից։ Բնութիւնը առաջուայ նման ինձ թւում է գեղեցիկ, թէև սատանան չշընջում է ականջիս, որ այս բոլոր սոճիները, եղևնիները, թռչունները և սպիտակ ամպերը, որ տարւում են երկնքի վրայով, երեք, չորս ամսից յետ, երբ ես կը մեռնիմ, չեն նկատի իմ բացակայութիւնը։ Կատիան սիրում է կառավարել ձին։ Նա ուրախ է, որ եղանակը լաւ է և ես նստած եմ իրան հետ։ Կատիայի տրամադրութիւնը իր տեղն է, և նա խօսում է սիրալիր կերպով։

— Դուք շատ լաւ մարդ էք, Նիկոլայ Ստեպանիչ, ասում է նա։ Դուք հաղուագիւտ անձնաւորութիւն էք և չկայ մի դերասան, որ կարողանայ պատկերացնել ձեզ։ Ինձ, կամ օրինակ Միխայիլ Ֆէօդորիչին վատ դերասանն անգամ կարող է ներկայացնել, իսկ ձեզ ոչ ոք։ Ես նախանձում եմ ձեզ, սաստիկ նախանձում. այդ հասկանալի է. ինչ եմ ներկայացնում ես ինձանից, ինչ։

Եւ նա լռում է մի բոպէ և յետոյ հարցնում ինձ.

— Նիկոլայ Ստեպանիչ, ես բացասական անձնաւորութիւն եմ, այնպէս չէ:

— Այո, պատասխանում եմ ես:

— Այդպէս... Խորհուրդ տուէք, ինչ անեմ:

Ես ինքս էլ չգիտեմ ինչ պատասխանել: Հեշտ է ասել «աշխատիր», կամ «բաժանիր ունեցածդ աղքատներին» և կամ «ճանաչիր ինքդ քեզ», բայց որովհետև այդ հեշտ է ասել, ուստի և չգիտեմ, ինչ պատասխանեմ:

Իմ ընկեր վիրաբանները, երբ սովորեցնում են բժշկել, խորհուրդ են տալիս «մեկուսացնել իւրաքանչիւր առանձին երևոյթ»: Պէտք է հետևել այդ խորհրդին, որպէս զի մարդ համոզուի, որ այն միջոցները, որոնք առաջարկւում են դասագրքերի մէջ, որպէս ամենալաւը և պիտանին, որոշ դէպքերում ներկայանում են բոլորովին անպէտք: Նոյնը կարելի է ասել և բարոյական խոցերի մասին:

Բայց հարկաւոր է մի բան պատասխանել և ես ասում եմ.

— Դու, իմ բարեկամ, բաւականին շատ աղտ ժամանակ ունիս: Հարկաւոր է քեզ որ և է բանով զբաղուել: Եւ իսկապէս, ինչու նորից դուրս չգալ բեմ, եթէ քո մէջ զգում ես կոչում:

— Չեմ կարող:

— Ձևերդ ու ձայնդ այնպէս են, իմ բարեկամ, որ կարծես դու զոհ դառած լինես կեանքի պայմաններին: Այդ ինձ դուր չի գալիս: Դու ինքդ ես մեղաւոր: Ցիշիր, որ դու սկսեցիր քո գործունէութիւնը գանգատուելով մարդկանց և սիրող կարգերի վերայ, բայց ոչինչ չես արել նրանց բարելաւութեան համար: Դու չես կռուել չարիքի հետ, բայց արդէն յոգնել ես, և դու կռուի զոհ չես, այլ անձնական անզօրութեան: Այն ժամանակ, իհարկէ, դու դեռ ջահել էիր և անփորձ, իսկ այժմ ամեն բան կարող է այլ կերպ ընթանալ:

Ճշմարիտ եմ ասում, դուրս եկ բեմ. դրանով դու կ'աշխատես, կը ծառայես սուրբ գեղարուեստին...

— Մի կեղծի, Նիկոլայ Ստեպանիչ, կտրում է խօսքս Կատիան: Մի անգամ ընդ միշտ խօսք տանք իրար, որ կարող ենք խօսալ դերասանների, դերասանուհիների և գրողների մասին, բայց հանգիստ թողնենք գեղարուեստը: Դուք հազուագիւտ մարդ էք, բայց այնքան չէք ըմբռնում գեղարուեստը, որպէս զի կարողանաք բարեխիղճ կերպով նրան սուրբ համարել: Դուք չունիք դէպի նա ոչ հոտառութիւն և ոչ լսելիք: Ձեր ամբողջ կեանքում զբաղուած էք եղել և ժամանակ չէք ունեցել ձեռք բերելու այդ հոտառութիւնը: Ընդհանրապէս... ես չեմ սիրում այդպիսի խօսակցութիւններ գեղարուեստի մասին, շարունակում է նա ջղաձգաբար:—Չեմ սիրում: Առանց այն էլ շատ վայր են ձգել գեղարուեստի նշանակութիւնը:

— Ո՞վ:

— Դերասանները՝ հարբեցողութեամբ, լրագրները՝ ձեռական վերաբերմունքով, իսկ խելացի մարդիկ՝ փիլիսոփայութեամբ:

— Այդտեղ փիլիսոփայութիւնը ոչ մի գործ չունի:

— Ունի. եթէ մէկը փիլիսոփայութիւն է անում, այդ նշանակում է, որ չի հասկանում:

Գործը ծայրահեղութեան չհասցնելու համար, ես շտապում եմ փոխել խօսակցութիւնը և ապա երկար լռում: Միմիայն, երբ դուրս ենք գալիս անտառից և կառքը ուղղում դէպի Կատիայի ամառանոցը, ես կրկին վերադառնում եմ առաջուայ խօսակցութեան նիւթին ու հարցնում.

— Այնու ամենայնիւ դու չպատասխանեցիր ինձ, թէ ինչու չես ցանկանում լինել դերասանուհի:

— Նիկոլայ Ստեպանիչ, այդ վերջապէս անտանելի է, բացականչում է նա յանկարծ և ամբողջովին կարմրում: Դուք ցանկանում էք, որ ես բացարձակ ասեմ ճշմարտութիւնը.

համեցէք, եթէ այդ... ձեզ դուր է գալիս։ Իմ մէջ տաղանդ չկայ, չկայ տաղանդ, բայց... բայց կայ շատ ինքնասիրութիւն։

— Եւ այդպէս խոստովանելով ճշմարտութիւնը, նա յետ է դարձնում դէմքը ինձանից և, ձեռքի դողը ծածկելու համար, ուժգին քաշում է ձիանների սանձափոկերից։

Մտենալով ամառանոցին մենք արդէն հեռուից նկատում ենք Միխայիլ Ֆէօդորիչին, որ զբօսնում է դռների առաջ և անհամբեր սպասում մեզ։

— Դարձեալ այդ Միխայիլ Ֆէօդորիչը, ասում է Կատիան սրտնեղութեամբ։—Ի սէր Աստծու, հեռացրէք դրան ինձանից։ Ձանձրացրեց, հոգիս դուրս է գալիս...

Միխայիլ Ֆէօդորիչը վաղուց արդէն պէտք է գնար արտասահման, բայց իւրաքանչիւր շաբաթ յետաձգում է իր գնալը։ Վերջերումս նրա հետ պատահել է ինչ որ փոփոխութիւն. նա կարծես կուչ է եկել և այժմ ենթարկւում է գինու ազդեցութեանը, մի բան, որ առաջ երբէք չէր պատահում նրա հետ. սև յօնքերը արդէն սկսել են սպիտակել։ Երբ մեր կառքը կանգնում է դռների մօտ, նա չի ծածկում իր ուրախութիւնը և անհամբերութիւնը։ Միխայիլ Ֆէօդորիչը անհանգստութեամբ օգնում է Կատիային և ինձ իջնել կառքից, շտապում է հարցեր տալ, ծիծաղում է, շփում է ձեռքերը, և այն համեստ, աղերսող, մաքուր արտայայտութիւնը, որ առաջ միայն հայեացքի մէջ էի նկատում, այժմ արտայայտւում է ամբողջ դէմքի վրայ։ Նա ուրախանում է և միևնոյն ժամանակ ամաչում, թէ իր այդ ուրախութիւնից և թէ ամենայն երեկոյ Կատիայի մօտ լինելու սովորութիւնից։ Իր այցելութիւնը մի բանով պատճառաբանելու համար, ասում է որ և է յիմար խօսք, ինչպէս օրինակ՝ գործով անցնում էի այստեղից և մտածեցի մի բոպէով մտնել ձեզ մօտ։

Մենք երեքով գնում ենք ներս։ Սկզբում խմում ենք թէյ։ Ապա սեղանի վրայ երևում են վաղուց ծանօթ երկու կալոդ խաղաթղթերը, մի մեծ կտոր պանիր, միրգ և մի շիշ Ղրիմի

շամպայն։ Մեր խօսակցութեան նիւթը նոր չէ, միևնոյնը, ինչ որ ամեռը։ Խօսք բացւում է համալսարանի, ուսանողների, գրականութեան և թատրոնի մասին։ Զարախօսութիւնից օդը դառնում է խիտ, հեղձուցիչ, և թունաւորում են օդը իր հնչով արդէն ոչ երկու, ինչպէս ամեռը, այլ ամբողջ երեք դոդոշներ։ Մեզ ծառայող աղախինը բացի Միխայիլ Ֆէօդորիչի միակերպ և Կատիայի հարմոնի նման հընչող ծիծաղի ձայներից լսում է այլ և մի անդուր, զնգզնգացող ծիծաղ, որպէս ծիծաղում են վոդևիլների մէջ դեներալները. խէ, խէ, խէ։

V.

Լինում են սարսափելի մռայլ գիշերներ, երբ փչում է քամին, շաղում է անձրևը և ամպերի միջից լսւում որոտը ու փայլատակում կայծակը։ Մի այդպիսի գիշեր անցկացրել եմ և ես իմ կեանքում...

Զարթնում եմ կէս գիշերն անց և յանկարծ վեր թռչում անկողնից։ Ինձ թւում է, թէ շուտով յանկարծակի կը մեռնիմ։ Մարմնիս մէջ չեմ զգում և ոչ մի այնպիսի զգացողութիւն, որ ցոյց տար մօտալուտ վախճանս, բայց հոգիս ճնշում է մի տեսակ սարսափ, որ կարծես յանկարծ տեսել եմ երկնքի չարագուշակ բոցավառումն։

Արագութեամբ վառում եմ լամպը, ջուր խմում ուղղակի սրուակից և ապա շտապում դէպի բաց պատուհանը։ Եղանակը դրսում փառահեղ է. օդը լցուած է խոտի և մի ինչ որ բանի անուշահոտ բուրմունքով։ Երևում են ցանկապատի ժանիքները, պատուհանիս մօտ բուսած ծառերը, ճանապարհը և անտառի մի մութ շերտ։ Ամեն ինչ ընկղմուած է խոր քնի մէջ, երկնակամարի վրայ խաղաղ լողում է պայծառ լուսինը. չկայ և ոչ մի կտոր ամպ։ Տիրում է մեռելային լռութիւն. չի շարժւում և ոչ մի տերև։ Ինձ թւում է, թէ այդ բոլորը նայում են ինձ վրայ և ականջ են դնում, թէ ինչպէս պէտք է մեռնեմ ես...

Տեսարանը ծանր տպաւորութիւն է թողնում ինձ վրայ։ փակում եմ պատուհանը և վազում դէպի անկողին. շօշափում եմ զարկերակս, որ չկարողանալով գտնել ձեռքիս վրայ, որոնում եմ բներակներիս, այնուհետև կզակիս և ապա կրկին ձեռքիս վերայ։ Ամբողջ մարմինս ծածկուած է սառն քրտինքով։ Ընչաւորութիւնս հետզհետէ արագանում է, մարմինս դողում. շարժման մէջ են բոլոր ներքին գործարանները, դէմքիս և ճաղատ գլխիս վրայ կարծես ոստայն նստած լինի։

Ի՞նչ անել. կանչել ընտանիքիս. ոչ, հարկաւոր չէ. ի՞նչ կարող են անել կինս և Լիզան, երբ մտնեն ինձ մօտ։

Ես թագցնում եմ գլուխս բարձի տակ. խփում աչքերս և սպասում ու սպասում... մէջքս սառն է, ջղերս քաշւում են, ես զգում եմ մի այնպիսի զգացում, որպէս թէ մահը կը մօտենայ ինձ անպատճառ յետևից և կամաց, կամաց...

— Կիւ-կիւ, լսում է յանկարծ գիշերային լռութեան մէջ և ես չգիտեմ որտեղից է այդ ձայնը՝ փողոցից, թէ հէնց կրծքիցս։

— Կիւ-կիւ։

Ստուած իմ, որքան սարսափելի է. դէթ էլի ջուր խմէի, բայց արդէն վախում եմ բանալ աչքերը և բարձրացնել գլուխս։ Անսահման երկիւղը տիրել է ինձ, և ես ոչ մի կերպ չեմ կարող հասկանալ, թէ ինչուցն է այդ։ Արդեօք նրանից, որ ցանկանում եմ ապրել, թէ ինձ սպասում է նոր, դեռ ես անիմանալի վիշտ։

Վերևից, առաստաղի այն կողմից ականջիս է հասնում մի ձայն, որ չեմ կարող որոշել՝ ծիծաղ է, թէ հառաչանք... Ականջ եմ դնում։ Մի փոքր յետոյ սանդուղքի աստիճանների վրայով լսում է ոտքերի ձայն. մէկը շտապով գնում է ներքև, ապա՝ վերև, մի բոպէից յետոյ կրկին լսում են ոտքերի ձայներ ներքևում, և մէկը կանգ է առնում սենեակիս դռան մօտ ու ականջ դնում։

— Ո՞վ է, կանչում եմ ես։

Դուռը բացւում է. ես համարձակ բաց եմ անում աչքերս և տեսնում կնոջս։ Նրա դէմքը գունատ է և աչքերը լացակրկնած։

— Քնած չես, Նիկոլայ Ստեպանիչ, հարցնում է նա։

— Ի՞նչ ես ցանկանում։

— Ի սէր Աստծու, գնանք Լիզայի մօտ և տես, թէ ի՞նչ է պատահել նրան։

— Լաւ...—ուրախութեամբ...—քրքմնջում եմ ես, զոհ այն բանից, որ արդէն մենակ չեմ.—լաւ... Մի բոպէ միայն։

Ես գնում եմ կնոջս յետևից և յուզմունքիցս բոլորովին չեմ հասկանում այն, ինչ որ նա ասում է։ Սանդուղքի աստիճանների վրայով խաղում են նրա մոմի ցոլքերը, երևում են մեր երկար ստուերները։ Գիշերազգեստիս փէշերը խանգարում են ինձ ազատ քայլել. ես շնչասպառ եմ լինում, և ինձ թւում է, թէ մէկը հալածում է ինձ և ցանկանում բռնել ինձ յետևիցս։ «Իսկոյն կը մեռնիմ ես այստեղ՝ այս աստիճանների վրայ, մտածում եմ ես, հէնց այժմ»... Բայց ահա անցանք սանդուղքը, մութ միջանցքը իտալական լուսամուտով և մտնում ենք Լիզայի սենեակը։ Նա նստած է անկողնու վերայ, միայն մէկ գիշերային շապկով. կախ է գցել մերկ ոտները և հառաչում է։

— Ախ, Աստուած իմ, Աստուած իմ, ասում է նա, մոմի լուսից բաց ու խուփ անելով աչքերը։—Չեմ կարող, չեմ կարող...

— Լիզա, զաւակս,—ասում եմ ես նրան։—Ի՞նչ է պատահել քեզ։

Տեսնելով ինձ, նա ճչում է ու ընկնում պարանոցովս։

— Հայրիկ, իմ բարի, սիրելի հայրիկ, հառաչում է նա. չգիտեմ, ինչ է պատահել ինձ... ծանր է, ծանր։

Նա գրկում է ինձ, համբուրում և ասում փաղաքշական խօսքեր, որպիսիները ես լսում էի նրանից, երբ նա դեռ երեխայ էր։

— Հանդստացիր, դաւակս, Աստուած քեզ հետ,—ասում եմ ես։—Հարկաւոր չէ լաց լինել։ Իմ հոգեկան դրութիւնս էլ է վատ։

Ես աշխատում եմ ծածկել նրան, կինս խմելու ջուր է տալիս և մենք երկուսս անկանոն կերպով շարժւում ենք անկողնու շուրջը։ Իմ թիկունքով խփում եմ կնոջս թիկունքին և մտաբերում եմ, թէ ինչպէս մի ժամանակ մենք երկուսով լողացնում էինք մեր երեխաներին։

— Օգնիր նրան, օգնութիւն հասցրու, լալագին ասում է կինս։—Արա որ և է բան։

Ի՞նչ կարող եմ անել, ոչինչ. աղջկայ հոգու վրայ կայ ինչ որ ծանրութիւն, որ չեմ հասկանում, չգիտեմ, և միայն կարող եմ մրմնջել.

— Ոչինչ, ոչինչ... Կանցնի այդ... Քնիր, քնիր...

Կարծես հէնց դիտմամբ մեր բազում յանկարծ լսում է շան ոռնոց, սկզբում կամաց և անվստահ, որ գնալով հետզհետէ բարձրանում է և խառնւում մի այլ շան հաչոցի հետ։ Ես ոչ մի ժամանակ նշանակութիւն չեմ տալիս այդպիսի նշանների՝ ինչպէս շների ոռնոցն է և բուերի բուոցը, բայց այժմ իմ սիրտը տանջուելու չափ սեղմւում է և ես շտապում եմ բացատրել ինքս ինձ այդ ոռնոցը։

— Դատարկ բան է...—մտածում եմ ես։—Դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի օրգանիզմի ազդեցութիւնը միւսի վրայ։ Իմ սաստիկ նեարդային լարուած դրութիւնը հաղորդուեց կնոջս, Էլիզային, շանը... Փոխանցութեամբ միայն կարելի է բացատրել նախազգացումները և նախատեսիլները։

Երբ ես մի փոքր յետոյ վերադառնում եմ սենեակս Էլիզայի համար դեղատոմս գրելու, այլ ես չեմ մտածում այն մասին, որ շուտով կը մեռնիմ, բայց հոգուս վրայ զգում եմ մի տեսակ ծանրութիւն, այնպէս որ մինչև անգամ ցաւում եմ թէ ինչու չմեռայ յանկարծակի։ Երկար կանգնում եմ ես անշարժ սենեակի մէջ տեղում և մտածում, թէ ինչ դեղ գրել

Էլիզայի համար։ Առաստաղի այն կողմից հառաչանքի ձայները դադարում են և ես վճռում եմ ոչինչ չգրել, թէև դեռ շարունակում եմ մնալ կանգնած դրութեան մէջ...

Տիրում է մեռելային լռութիւն, այնպէս որ մինչև անգամ, ինչպէս մի գրող ասել է, ականջներդ ձայն են տալիս։ Ժամանակը անցնում է դանդաղ. լուսամուտում ընկած լուսնի շողը չի փոխում իր դիրքը, կարծես քարացած լինի. լուսանալուն դեռ շատ կայ։

Բայց ահա ճռնչում է ցանկապատի դռնակը. մէկը դաղտագողի մտնում է պարտէզ և, կտրելով ծառի մի բարակ ճիւղնիկ, ծեծում է նրանով լուսամուտս։

— Նիկոլայ Ստեպանիչ,—լսում եմ նրա շշնջիւնը։—Նիկոլայ Ստեպանիչ։

Բաց եմ անում լուսամուտը և ինձ թւում է, թէ երազ եմ տեսնում։ Մի կին, լուսաւորուած լուսնի լուսով, սև հանդերձը հագին, կանգնած է պատուհանի տակ և մեծ աչքերով նայում ինձ վրայ։ Նրա դէմքը մարմարի նման գունատ է, խիստ և խորհրդաւոր արտայայտութիւն ունի. ներքին ծնօտը դողդողում է։

— Ես եմ...—ասում է նա։—Ես... Կատիան։

Լուսնի լուսով բոլոր կանացի աչքերը թւում են մեծ և սև. մարդիկ աւելի բարձր և գունատ։ Ահա այս պատճառով հաւանականաբար, ես առաջին րոպէում չճանաչեցի Կատիային։

— Ի՞նչ ես ուզում։

— Ներեցէք,—ասում է նա։—Չգիտեմ ինչ պատճառով յանկարծ սիրտս սկսեց սաստիկ նեղանալ... Ես չհամբերեցի և եկայ այստեղ... Նկատեցի ձեր պատուհանում լոյս և... և վճռեցի ծեծել լուսամուտը... Ներեցէք... Ախ, եթէ դիտենայիք, թէ ինչպէս նեղանում էր սիրտս։ Ի՞նչ էք անում այժմ։

— Ոչինչ... Տանջւում եմ անքնութիւնից։

— Իսկ ինձ անհանգստացնում էր մի ինչ որ նախազգացում։ Սենեակ չնչին բան է։

Եւ նրա յօնքերը բարձրանում են, աչքերը փայլում արցունքներից և ամբողջ երեսը լուսաւորւում է այն անսահման հաւատի արտայայտութեամբ, որ կրում էր նրա դէմքը դեռ երեխայ ժամանակը։

— Նիկոլայ Ստեպանիչ, ասում է նա թախանձագին տարածելով դէպի ինձ իր երկու ձեռքերը։ Իմ թանկագին, խնդրում եմ ձեզ... աղերսում եմ... Եթէ չէք արհամարհում իմ դէպի ձեզ ունեցած յարգանքն ու բարեկամութիւնը, համաձայնուէք խնդիրքիս։

— Ի՞նչ է խնդիրդ։

— Վերցրէք ինձանից իմ փողերը։

— Ահա թէ ինչ է մտածել։ Ինչիս են հարկաւոր քո փողերը։

— Դուք կը գնաք որ և է տեղ բժշկուելու։ Ձեզ հարկաւոր է բժշկուել։ Կը վերցնէք, հոգիս, այնպէս չէ։

Նա յափշտակութեամբ նայում է դէմքիս և կրկնում.

— Կը վերցնէք, այո։

— Ո՛չ, իմ բարեկամ, չեմ վերցնի, շնորհակալ եմ։

Նա դարձնում է դէպի ինձ իր մէջքը և գլուխը կախ քցում։

Երևի ես բացատրեցի նրան մի այնպիսի ձևով, որ այլ ևս անկարելի կը լինէր խօսել փողի առաջարկութեան մասին։

— Գնա տուն քնելու. վաղը կը տեսնուինք։

— Նշանակում է դուք ինձ ձեր բարեկամը չէք համարում, հարցնում է նա յուսահատուած։

— Ես այդ չասացի։ Բայց քո փողերը այժմ ինձ համար անօգուտ են։

— Ներեցէք... ասում է նա, ցածացնելով ձայնը մի ամբողջ ութնեակ։ Հասկանում եմ ձեզ... Դուք չէք ցանկանում պարտապան լինել մի այնպիսի մարդու, ինչպէս ես եմ...

— Մնաք բարեաւ...

Եւ նա հեռանում է այնպէս արագ, որ ես մինչև անգամ չեմ կարողանում ասել գնաք բարեաւ։

VI.

Ես Խարկովում եմ։

Այժմեան իմ հոգեկան դրութեան հետ կռուելը անօգուտ է և այժերիցս վեր. այս իսկ պատճառով ես վճռեցի, որ կեանքիս վերջին օրերը գոնէ արտաքուստ լինեն անբիծ և առանց պակասութիւնների. եթէ ես անարդար եմ ընտանիքի նկատմամբ, որ ինձ շատ լաւ յայտնի է, ուրեմն պէտք է աշխատեմ անել այն, ինչ որ նա ցանկանում է։ Գնալ Խարկով և կը գնամ, նա-մանաւանդ որ վերջերս ես այնպէս սառնասիրտ եմ դէպի ամեն ինչ, որ ինձ համար բոլորովին միևնոյն է, թէ ուր գնալ՝ Խարկով, Փարիզ, թէ Բերդիչև։

Հասայ ես Խարկով ցերեկուայ 12 ժամին և իջայ մայր եկեղեցուց ոչ հեռու մի հիւրանոցում։ Ղազանների օրօրուելը և անընդհատ դռների բաց ու խուփից առաջացող թափանցիկ քամին անհանգստացրին ինձ. այժմ նստած եմ սենեակում և գլուխս բռնած սպասում եմ tic-ին։ Հարկաւոր է այսօր և եթէ գնալ ծանօթ պրոֆէսօրների մօտ, բայց ոչ ցանկութիւն ունիմ և ոչ ոյժ։

Ներս է մտնում միջանցքի սպասաւորը՝ մի ծերունի, և հարցնում է թէ ունիմ արդեօք անկողնուս սպիտակեղէն։ Ես կանչնեցնում եմ նրան մի հինգ բուղէով և մի քանի հարցեր տալիս Գնեկկերի մասին, որի համար և եկել եմ այստեղ։ Պարզուեց, որ սպասաւորը բնիկ Խարկովցի է. ճանաչում է քաղաքը, ինչպէս իր հինգ մատները, բայց չի յիշում ոչ մի այնպիսի տուն, որ պատկանէր Գնեկկեր ազգանուան։ Հարց ու փորձ եմ անում նաև կայուածքի մասին ու ստանում նոյն պատասխանը։

Միջանցքում ժամացույցը խփում է ժամը մէկը, ապա երկուսը, յետոյ երեքը... Կեանքիս վերջին ժամերը, այն օրուանից ինչ ես սպասում եմ մահուան, աւելի երկար են թւում քան ամբողջ կեանքս։ Եւ ես առաջ ոչ մի կերպ չէի կարողանում այնպէս հաշտուել ժամանակի դանդաղութեան հետ, ինչպէս այժմ։ Առաջ, երբ պատահում էր կայարանում սպասել գնացքին որ և է քառորդ ժամ, այդ ինձ թւում էր մի ամբողջ յաւիտենականութիւն։ Նոյնը զգում էի և քննութիւնների ժամանակ, իսկ այժմ ես կարող եմ ամբողջ գիշեր անշարժ նստել մահճակալի վրայ և անտարբերութեամբ մտածել, որ վաղն էլ կարող է լինել նոյնպիսի երկար, անդոյն գիշեր, և միւս օրն էլ...

Միջանցքում խփում է ժամը հինգը, վեցը, եօթը... Արդէն մութ է։

Թուշս ցաւում է. այդ նշանակում է, որ սկսում է tic-ը։ Որպէս զի մի որ և է բանով զբաղեցնեմ մտքերս, ես կանգ եմ առնում իմ նախկին հայեացակէտի վերայ, երբ անտարբեր չէի դէպի ամեն ինչ, և հարցնում եմ. ինչու ես, լինելով նշանաւոր մարդ և գայտնի խորհրդական, նստած եմ այս փոքրիկ սենեակում ուրիշի մահճակալի վրայ, ծածկուած մոխրագոյն վերմակով։ Ինչու եմ նայում այս էժանագին թիթեղեայ լուացարանին և լսում, թէ ինչպէս շրշկշրշկում է միջանցքում անպէտք ժամացույցը։ Մթթէ այդ բոլորը համապատասխան են իմ փառքին և մարդկանց մէջ ունեցած բարձր դիրքիս։ Եւ այդ հարցերին ես պատասխանում եմ ինքս ինձ քմծիծաղ։ Ծիծաղելի է թւում ինձ այն միամտութիւնը, որով երբեմն, դեռ երիտասարդ ժամանակ, չափազանցացնում էի հռչակ վայելող մարդկանց նշանակութիւնը և այն բացառիկ դրութիւնը, որ իբր թէ վայելում են նրանք։ Ես յայտնի եմ, իմ անունը յիշւում է պատկառանքով, պատկերս տպագրուած է «Нива» շաբաթաթերթի և «Всемірная Иллюстрація» հանդէսի մէջ։ Կենսագրութիւնս մինչև անգամ կարդացել եմ

մի գերմանական թերթում, բայց ինչ օգուտ այդ բոլորից։ Նստած եմ մենակ օտար քաղաքում ուրիշի մահճակալի վրայ և ձեռքերով շփում եմ ցաւող թուշս։ Ընտանեկան անհամութիւնները, պարտատէրերի խստութիւնը, երկաթուղու ծառայողների կոպտութիւնը, անցաթուղթ ձեռք բերելու անյարմարութիւնները, ճաշարանների թանկ և անառողջ կերակուրները, ընդհանուր տպիտութիւնը և կոպիտ վերաբերմունքը, այս բոլորը և ուրիշ շատ բաներ, որ չափազանց երկար կը լինէր մի առ մի թուելը, նոյնքան վերաբերւում են ինձ, որքան մի քաղաքացի մարդու, որ յայտնի է միայն իր փողոցին, ուր ապրում է։ Ինչումն է յայտնւում իմ դիրքը և բացառիկ դրութիւնը։ Ենթադրենք, թէ ես վայելում եմ մեծ հռչակ, հերոս եմ, և ինձանով պարծենում է հայրենիքս, գրում են առողջութեանս մասին բոլոր լրագրներում, փոստայով ստանում եմ համակրական նամակներ ընկերներից, աշակերտներից, հասարակութիւնից. այս բոլորը այնու ամենայնիւ չեն խանգարում, որ ես մնամեմ օտար մարդու մահճակալի վրայ, սրտնեղութեան և բառիս բուն նշանակութեամբ միայնութեան մէջ... Այդ բանում իհարկէ ոչ որ մեղաւոր չէ, բայց ինչ արած, որ ես չեմ սիրում իմ ժողովրդականութիւնը. թւում է ինձ, թէ այդ ժողովրդականութիւնն է ինձ խաբել։

Տասը ժամին բունս տանում է և չնայելով tic-ին ես ընկղմւում եմ խոր քնի մէջ և դեռ երկար կը քնէի, եթէ ինձ չզարթնացնէին։ Դեռ ժամը մէկը նոր անցած լսում եմ դռան թրխթրխկոցը։

— Ո՞վ է։

— Հեռագիր։

— Կարող էիք վաղը տալ, բարկանում եմ ես ստանալով միջանցքի սպասաւորից հեռագիրը։ Այժմ արդէն երկրորդ անգամ չեմ կարողանայ քնել։

— Ներեցէք, ձեր սենեակում կրակ էր վառւում, և ես կարծեցի, թէ քնած չէք։

Ես բաց եմ անում հեռագիրը և ամենից առաջ մտիկ տալիս ստորագրութեանը. կնոջից է. ինչ է հարկաւոր նրան։

«Երեկ Գնեկկերը ծածուկ ամուսնացաւ Լիզայի հետ. վերադարձիր»։

Կարդում եմ հեռագիրը և մի բանի րոպէ զգում եմ երկիւղ. ինձ վախեցնում է ոչ թէ Լիզայի և Գնեկկերի վարմունքը, այլ իմ անտարբերութիւնը, որով վերաբերւում եմ նրանց հարսանեաց լուրին։ Ասում են, որ փիլիսոփաները ու ճշմարիտ իմաստունները անտարբեր են։ Այդ ճիշտ չէ։ Անտարբերութիւնը՝ հոգու կաթուած է, վաղաժամ մահ։

Նորից մտնում եմ անկողինս և սկսում մտածել, թէ ինչ բանով զբաղեցնեմ միտքս։ Ի՞նչ բանի վերայ մտածեմ։ Կարծեմ ամեն ինչ մտածուած է և այլ ևս չկայ ոչ մի այնպիսի բան, որ կարողանար յարուցանել իմ մէջ մտածողութիւն...

Երբ լոյսը բացւում է, ես նստում եմ անկողնումս ձեռքերով բռնած ծնկներս և անգործութիւնից աշխատում եմ ճանաչել ինքս ինձ. «ճանաչիր ինքդ քեզ» գեղեցիկ և օգտակար խորհուրդ, բայց ափսոս, որ մեր նախնիք չեն ցոյց տուել և ճանապարհը, թէ ինչպէս օգտուել այդ խորհրդով։

Առաջ, երբ ես ցանկանում էի ճանաչել մէկին, կամ ինքս ինձ, ուշադրութեան էի առնում ոչ թէ գործերը, որոնց մէջ ամեն բան պայմանական է, այլ ցանկութիւնները. ասա ինձ ինչ ես ցանկանում, և ես կասեմ, թէ ով ես։

Եւ այժմ էլ ես քննում եմ ինքս ինձ, թէ ինչ եմ ցանկանում։

Ցանկանում եմ, որպէս զի մեր կանայք, երախաները, բարեկամները, աշակերտները սիրեն մեր մէջ ոչ թէ անունը, ծագումը և արտաքինը, այլ սովորական մարդկանց։ Էլ ինչ։ Ես կը ցանկանայի զարթնել հարիւր տարի յետոյ և թէկուզ մի աչքով դիտել, թէ ինչ կը լինի գիտութիւնը։ Կը ցանկանայի ապրել մի տասը տարի ևս... Ուրիշ ինչ։

Եւ ուրիշ ոչինչ։ Ես մտածում եմ, երկար մտածում և ոչինչ չեմ կարողանում գտնել։ Որքան էլ մտածում և դէպի ուր էլ դարձնում եմ մտքերս, այնու ամենայնիւ ինձ համար պարզ է, որ ցանկութիւններիս մէջ չկայ ինչ որ մի գլխաւոր և շատ կարևոր բան։ Իմ դէպի գիտութիւնը ունեցած հակման, ապրելու ցանկութեան, ինքս ինձ ճանաչելու ձգտման, և բոլոր մտքերիս, զգացմունքներիս ու հասկացողութիւններիս մէջ չկայ մի այնպիսի ընդհանուր բան, որ ի մի կապէր այդ բոլորը։ Ամեն մի զգացմունք և ամեն մի միտք իմ մէջ ունի առանձնակի դրութիւն։ Իմ բոլոր դատողութիւնների մէջ, թէ գիտութեան, թատրոնի, գրականութեան, աշակերտների և թէ այն բոլոր պատկերների մասին, որ ներկայացնում է իմ երևակայութիւնը, ամենահմուտ քննադատը անպամ չի գտնի այն, որ կոչւում է ընդհանուր իդէա, կամ կենդանի մարդու Աստուած։

Իսկ եթէ չկայ այդ, նշանակում է, ուրեմն չկայ և ոչինչ։

Այդ ալրատութեան մէջ, բաւական է մի լուրջ ցաւագարութիւն, մահուան երկիւղ, մարդկանց և հանգամանքների ազդեցութիւն, որպէս զի այն ամենը, ինչ որ առաջ կազմում էին իմ աշխարհայեացքը, և որի մէջ տեսնում էի կեանքիս նպատակը ու ճաշակում բաղդրութիւն, տակն ու վրայ լինեն և օդը ցնդուին։ Ուրեմն ոչինչ զարմանալի բան չկայ, որ կեանքիս վերջին ամիսները պղտորեցի այնպիսի մտքերով և զգացմունքներով, որոնք միայն սարկին և բարբարոսին են վայել. նոյնպէս զարմանալի չէ, որ ես դառել եմ բոլորովին անտարբեր ու չեմ նկատում լոյսի բացուելը։ Երբ մարդուս մէջ բացակայում է այն, որ աւելի բարձր ու ուժեղ է բոլոր արտաքին ազդեցութիւններից, այն ժամանակ, ճշմարիտ ասած, բաւական է մի սաստիկ հարբուխ, որ նա կորցնէ հաւասարակշռութիւնը և ամեն մի թռչուն բուի տեղ ընդունէ, ամեն մի ձայն՝ շան ոռնոցի։ Նրա ամբողջ վատաբնութիւնն ու լաւաբնութիւնը իր բոլոր մեծ ու փոքր մտքերով այն ժամանակ կունենան միայն հիւանդութեան նշանակութիւն և ուրիշ ոչինչ։

Ես յաղթուած եմ։ Եթէ այդպէս է, ուրեմն կարիք չկայ այլ ևս մտածել, ինքիրան խօսել. պէտք է նստել, լռել և սպասել, թէ ինչ կը լինի։

Առաւօտեան սպասաւորը ներս է բերում թէյ և տեղական լրագրի այդ օրուան համարը։ Ես մեքենաբար կարդում եմ առաջին երեսի յայտարարութիւնները, առաջնորդողը, քաղուածքները ուրիշ թերթերից և ամսագրներից ու ներքին լուրերը։ Այդ վերջինում ի միջի այլոց գտնում եմ հետեւեալը. «Երեկ երկաթուղու արագ գնացքով տեղս ժամանեց մեր յայտնի գիտնական և բազմարդիւն պրոֆէսոր Նիկոլայ Ստեպանիչ այս ինչեանը և իջաւ այս ինչ հիւրանոցը։

Այժմ իմ անունը խօսւում է ամբողջ Խարկովում, իսկ երեք ամսից յետոյ ոսկէ տառերով, ինչպէս արեգակ, կը փայլէ մահարձանիս վրայ. և այս այն ժամանակ, երբ ես արդէն ծածկուած կը լինեմ մամուռով...

Մէկը թեթև կերպով թակում է դուռը։

— Ո՞վ է. մտէք։

Դուռը բացւում է, և ես զարմացած մի քայլ յետ եմ գնում, շտապելով վրայ բերել գիշերազգեստիս փէշերը։ Իմ առաջ կանգնած է Կատիան։

— Բարև ձեզ,—ասում է նա, ծանր շունչ քաշելով, որ պատճառել էր նրան սանդուղքով բարձրանալը։—Չէիք սպասում։ Ես նոյնպէս... Նոյնպէս եկայ այստեղ։

Եւ նա նստում է աչքերը խոնարհած և շարունակում կակազելով.

— Ինչու դուք չէք բարևում։ Ես նոյնպէս եկայ... այսօր... Իմացայ, որ դուք այս հիւրանոցումն էք, և եկայ ձեզ մօտ։

— Շատ ուրախ եմ քեզ տեսնելուս,—ասում եմ ուսերս թափ տալով,—բայց ես զարմացած եմ... Դու կարծես երկնքից ընկար։ Ինչու ես եկել։

— Հէնց այնպէս, վեր կացայ և եկայ։

Ցիրում է լռութիւն։ Ցանկարծ Կատիան ուժգնութեամբ վեր է ցատկում և դալիս դէպի ինձ։

— Նիկոլայ Ստեպանիչ,—ասում է նա գոյնը քցելով և ձեռքերը սեղմելով կրծքին։—Նիկոլայ Ստեպանիչ, ես այլ ևս չեմ կարող այսպէս ապրել, չեմ կարող։ Ի սէր ճշմարիտ Աստծոյ, ասացէք շուտով, թէ ինչ անեմ. ասացէք, ինչ անել։

— Ինչ կարող եմ ես ասել, շուարուած հարցնում եմ ինքս ինձ. ոչինչ չեմ կարող։

— Աղերսում եմ ձեզ, ասացէք, շարունակում է նա շընչասպառ և ամբողջովին դողալով։ Երդւում եմ որ այլ ևս չեմ կարող այսպէս ապրել։ Այժ չունիմ։

Նա վայր է ընկնում աթոռի վրայ և սկսում բարձրաձայն հեկեկալ. միևնոյն ժամանակ կոտրատում է իր ձեռքերը և ոտերը խփում յատակին. նրա յետ թեքուած գլխից վայր է ընկել գլխարկը, մազերի սանդրուածքը խրճքճուել։

— Օգնեցէք ինձ, օգնեցէք,—աղերսում է նա։—Այլ ևս չեմ կարող։

Նա հանում է ճանապարհորդական պայուսակից թաշկինակը և նրա հետ դուրս քաշում մի քանի նամակ, որոնք նրա ծնկների վրայով ընկնում են յատակին։ Ես հաւաքում եմ այդ նամակները, որոնցից մէկի վրայ նկատում եմ Միխայիլ Ֆէոդորիչի ձեռքը և պատահաբար կարդում մի ինչ որ «սիրահա...» բառի կտորը։

— Ոչինչ չեմ կարող ասել քեզ, Կատիա։

— Օգնեցէք,—լալագին ասում է նա, բռնելով և համբուրելով ձեռքս։—Չէ՞ որ դուք իմ հայրն էք, իմ միակ բարեկամը. խելացի էք, զարգացած, երկար ապրել էք. եղել էք ուսուցիչ. ասացէք, ինչ անեմ։

— Ճիշտն ասած, Կատիա, չգիտեմ։

Ես կորցրել եմ ինքս ինձ և յուզուած նրա արցունքներից հազիւ կարողանում եմ կանգնել ոտներիս վրայ։

— Եկ, Կատիա, նախաճաշենք, ասում եմ ես, աշխատելով ժպտալ։—Բաւական է լաց լինես։

Եւ իսկոյն աւելացնում եմ յուսահատ ձայնով։

— Շուտով ես այլ ևս չեմ լինի, Կատիա։

— Գոնէ մի խօսք, մի խօսք միայն, լալիս է նա, դէպի ինձ երկարացնելով ձեռքերը։—Ի՞նչ անել։

— Կատարեալ տարօրինակ ես, Կատիա, քրթմնջում եմ ես։—Այդպէս խելացի և յանկարծ լաց ես լինում...

Ապա տիրում է լռութիւն։ Կատիան ուղղում է մազերը, գլխարկը դնում գլուխը, յետոյ նամակները ճմրտում և կոխում է պայուսակի մէջ՝ ու այս բոլորը լռելայն, առանց շտապելու։ Երեսը, կուրծքը և ձեռնոցները թաց են արցունքներից, իսկ դէմքի արտայայտութիւնը սառը... Մտիկ եմ տալիս նրա վրայ և ամաչում, որ ես բախտաւոր եմ նրանից։ Մահիցս ոչ շատ առաջ, կեանքիս վերջալոյսում միան նկատեցի իմ մէջ այն բանի բացակայութիւնը, որ իմ ընկեր փիլիսոփաները անուանում են ընդհանուր գաղափար՝ իդէա, իսկ այս խղճուկի հոգին չէ իմացել և չպիտի իմանայ հանգիստ իր ամբողջ կեանքում։

— Եկ, Կատիա, նախաճաշենք,—ասում եմ ես։

— Ոչ, շնորհակալ եմ, պատասխանում է նա սառնութեամբ։

Անցնում է դարձեալ մի ծանր և լուռ րոպէ։

— Խարկով ինձ դուր չի գալիս, ասում եմ ես։—Շատ մռայլ քաղաք է։

— Այո, գեղեցիկ չէ... Ես երկար ժամանակ... Այսօր և եթէ գնում եմ։

— Ո՞ր։

— Ղրիմ... այսինքն [illegible]։

— Երկար ժամանակ [illegible]։

— Չգիտեմ։

Հայ.Հ. ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ
Ազգ. Գրադարան Библиотека
7/XI—1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Կատիան վեր է կենում։ Սառը ծերքը երեսին և աչքերը խոնարհած, նա դէպի ինձ է երկարացնում ձեռքը։ Ուզում եմ հարցնել «ուրեմն իմ թաղմանը չես լինի»։ Բայց նա չի նայում ինձ, նրա ձեռքերը այնքան սառն են, որ կարծես ուրիշինը լինին։ Ես լուռ ուղեկցում եմ նրան մինչև դուռը... Ահա նա դուրս եկաւ իմ մօտից։ Գնում է երկար միջանցքով, առանց յետ նայելու։ Նա գիտէ, որ ես նայում եմ իր յետևից և, հաւանականաբար, շրջատեղում յետ կը նայէ։

Բայց ոչ, յետ չնայեց։ Սև հանդերձը վերջին անգամ փողփողաց, քայլերի ձայնը հանդարտուեց... Գնաս բարեաւ, իմ անգին։

ՀՀ Ազգային գրադարան
NL0316470

12.713